# ՀՀ-ում դպրոցների օպտիմալացման գործընթացի մասնակցային մոնիտորինգի

# ԶԵԿՈՒՅՑ



Երևան
2018

«Հանրային քաղաքականության ինստիտուտ» ՀԿ
Երևան, Հանրապետության փ. 3-րդ նրբանցք, 8/13
Հեռ.՝ (374) 60 54 18 47
Էլ. փոստ՝ info@ipp.am
Կայքէջ՝ www.ipp.am

*Այս ուսումնասիրությունը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության ֆինանսավորմամբ և «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում: Ուսումնասիրության բովանդակության համար պատասխանատու է «Հանրային քաղաքականության ինստիտուտ» հասարակական կազմակերպությունը, և պարտադիր չէ, որ այն արտահայտի ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները:*

# Բովանդակություն


Հապավումներ ........ 3
Համառոտագիր ........ 4
Ներածություն ........ 8
Մեթոդաբանություն ........ 11
Մոնիտորինգի արդյունքները ........ 16
ՀՀ հանրակրթության բնագավառը կարգավորող հիմնական իրավական դրույթները ........ 16
Դպրոցների վերակազմակերպման մասին ՀՀ կառավարության որոշումները ........ 19
Բերդի վարժարան ........ 25
Փյունիկի դպրոց ........ 31
Ձովաշենի դպրոց ........ 36
Փարաքարի դպրոց ........ 44
Երևանի N23 դպրոց ........ 49
Երևանի N43 դպրոց ........ 55
Եզրահանգումներ ........ 59
Առաջարկություններ ........ 67
Վերջաբան ........ 71
Հավելվածներ ........ 73
Հավելված 1. Օպտիմալացման ենթակա դպրոցների ցանկը ........ 73
Հավելված 2. Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության դիրքորոշումը՝ դպրոցների օպտիմալացման վերաբերյալ ........ 74
Հավելված 3. Հարցաթերթ՝ վերակազմակերպված դպրոցի ուսուցիչների համար ........ 75
Հավելված 4. Հարցաթերթ՝ վերակազմակերպված դպրոցի աշակերտների ծնողների համար ........ 80
Հավելված 5. Հարցաթերթ՝ վերակազմակերպված դպրոցի տնօրենի և փոխտնօրենի համար ........ 84
Հավելված 6. Հարցաթերթ՝ իրավահաջորդ դպրոցի տնօրենի և փոխտնօրենի համար ........ 90

# Հապավումներ

| | |
|---|---|
| ԱՄՆ ՄԶԳ | Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն |
| ԹԻՀԿ | Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն |
| ԿԱՊԿՈՒ | Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող |
| ԿՏԱԿ | Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն |
| ՀԿ | Հասարակական կազմակերպություն |
| ՀՀ | Հայաստանի Հանրապետություն |
| ՀՀ ԿԳՆ | Հայաստանի Հանրապետության Կրթության և գիտության նախարարություն |
| ՀՔԻ | Հանրային քաղաքականության ինստիտուտ |

## Համառոտագիր

«Հանրային քաղաքականության ինստիտուտ» (ՀՔԻ) հասարակական կազմակերպությունը (ՀԿ) իրականացրել է Հայաստանի Հանրապետությունում (ՀՀ) դպրոցների օպտիմալացման (միացման ձևով վերակազմակերպման) գործընթացի մասնակցային մոնիտորինգ՝ հնարավոր հիմնախնդիրները վեր հանելու և բարելավման առաջարկություններ ներկայացնելու նպատակով: Մոնիտորինգն իրականացվել է «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» (ԹԻՀԿ) ՀԿ-ի «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) աջակցությամբ:

2017թ. օգոստոսի 24-ին, ՀՀ Կառավարության հերթական նիստում որոշումներ ընդունվեցին մի շարք դպրոցների (6-ը՝ Երևանում, 9-ը՝ մարզերում)՝ միացման ձևով վերակազմակերպման մասին: Ի հակասություն մինչ այդ հրապարակային ելույթներում հռչակված սկզբունքների, վերակազմակերպված դպրոցների շարքում կային գյուղական բնակավայրերում գործող դպրոցներ:

Մասնակցային մոնիտորինգն իրականացվել է Բազելի կառավարման ինստիտուտի կողմից մշակված մեթոդաբանությամբ, ինչը ենթադրում է հանրային ծառայության (տվյալ դեպքում՝ կրթության) անմիջական սպառողների և շահագրգիռ այլ անձանց ներգրավում մոնիտորինգային խմբերում:

Իրականացվել է որակական հետազոտություն՝ դեպքի ուսումնասիրության մեթոդով: Փաստացի փակված յուրաքանչյուր դպրոց՝ իրեն բնորոշ վերակազմակերպման գործընթացով ու արդյունքներով, ուսումնասիրվել է որպես առանձին դեպք:

Իրականացվել են կիսաձևայնացված հարցազրույցներ օպտիմալացման գործընթացի ազդեցությունը կրող անձանց և անմիջական շահառուների հետ. վերակազմակերպված դպրոցների անձնակազմի ներկայացուցիչներ (տնօրեններ, փոխտնօրեններ, ուսուցիչներ), վերակազմակերպված դպրոցների աշակերտների ծնողներ, իրավահաջորդ դպրոցների ներկայացուցիչներ (տնօրեններ, փոխտնօրեններ):

Ուսումնասիրվել է 6 դպրոց (2-ը՝ Երևանում, 2-ը՝ Կոտայքի մարզի Փյունիկ և Զովաշեն գյուղական բնակավայրերում, մեկը՝ Տավուշի մարզի Բերդ քաղաքում, մեկը՝ Արմավիրի մարզի Փարաքար համայնքում): Հարցազրույց է իրականացվել 144 անձի հետ: Մասնակցային մոնիտորինգի խմբի 11 դիտորդները հավաքել են առաջնային հետազոտական տվյալները, իսկ ՀՔԻ թիմն իրականացրել է մոնիտորինգի դաշտային աշխատանքների ընդհանուր համակարգումն ու հավաքված տվյալների վերլուծությունը: Մոնիտորինգն իրականացվել է 2018թ. փետրվար և մարտ ամիսներին:

**Հետազոտության հիմնական բացահայտումներն են.**

- Հայաստանում դպրոցների օպտիմալացման քննարկվող գործընթացը ՀՀ օրենսդրության և ՀՀ միջազգային պարտավորությունների ու ընդունված սկզբունքների խախտումների էական ռիսկեր է պարունակում: Հատկապես գյուղական դպրոցների վերակազմակերպման պարագայում լուրջ խոչընդոտներ են առաջանում՝ Կրթության մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները) 2-րդ մասի դրույթների (կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ) իրագործման առումով:
- Օպտիմալացման գործընթացը հակասության մեջ է նաև ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրի[1] դրույթների հետ, որոնցով նախատեսված էր՝ մինչև 2015թ. բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուրը ստանա առավել որակյալ կրթություն:
- Խնդիրներ են առաջացել նաև ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման հարցում: Մասնավորապես, Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիայի առաջին հոդվածն արգելում է որևէ անձի կամ անձանց խմբի՝ ցանկացած տեսակի կամ մակարդակով

[1] Այս զեկույցում դիտարկվել է ՀՀ կրթության զարգացման նախկին՝ 2011-2015թթ. պետական ծրագիրը, քանի որ կրթության զարգացման պետական նոր ծրագիրը (մինչև 2030թ.) դեռևս չի ընդունվել:

կրթություն ստանալու հնարավորությունից զրկելը, որևէ անձի կամ անձանց խմբի կրթությունը ցածր ստանդարտով սահմանափակելը: Կարծում ենք` գյուղական դպրոցների վերակազմակերպումը սահմանափակում է գյուղաբնակ երեխաների կրթություն ստանալու հնարավորությունները, ինչպես նաև` նրանց համար կրթության կազմակերպման ավելի ցածր ստանդարտներ է նախատեսում (կրթության միջավայրի, ենթակառուցվածքների և այլ պայմանների առումով):

- Դպրոցների օպտիմալացման արդյունքում խախտվել են նաև «Կրթության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները) հետևյալ դրույթները. կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը և ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը: Դպրոցների վերակազմակերպման որոշումները կայացվել են ոչ ժողովրդավարական եղանակով, կրթության անմիջական շահառուների կարծիքը հաշվի չի առնվել և չի ուսումնասիրվել որոշումները նախապատրաստելիս: Դպրոցները չեն ունեցել «ողջամիտ ինքնավարություն»` իրենց հետագա ճակատագրի տնօրինման հարցում: Վերակազմակերպման ենթակա դպրոցներին հնարավորություն չի տրվել շտկելու այն խնդիրները, որոնք հիմք են դարձել վերակազմակերպման գործընթացի համար:
- Դպրոցների օպտիմալացման արդյունքում սահմանափակվել է ծնողների` իրենց երեխաների համար ուսումնական հաստատություն ընտրելու ազատությունը (ինչը ևս ՀՀ միջազգային պարտավորությունների կարևոր սկզբունքներից է): Թե՛ Կառավարության որոշումների կայացման անհարմար ժամանակահատվածը (2017թ. օգոստոս), թե՛ դրանց պատշաճ իրազեկման բացակայությունը հնարավորություն չի տվել ընտանիքներին` պլանավորելու երեխաների ուսման կազմակերպման այլընտրանքային տարբերակները (օրինակ` իրավահաջորդ դպրոցի փոխարեն` այլ դպրոցների ուսումնասիրությունն ու ընտրությունը):
- Մոնիտորինգի արդյունքում չեն բացահայտվել դպրոցների վերակազմակերպման շնորհիվ կրթության որակի բարելավման կոնկրետ դրսևորումներ: Կրթության որակի վրա բացասաբար ազդող գործոնների շարքում հարցվողները հիմնականում նշել են. երեխաների ադապտացիոն խնդիրները (պայմանավորված մանկավարժական և ընկերական միջավայրի փոփոխությամբ) և նոր դասարաններում երեխաների բարձր թվաքանակը (ցածր խտությամբ դասարաններում ուսուցիչներն անհատական մոտեցում են ցուցաբերում յուրաքանչյուրի աշակերտի):
- Որոշ դպրոցներում եղել են տեղափոխված աշակերտների նկատմամբ խտրականության ու պիտակավորման ակնհայտ դրսևորումներ (թե՛ ուսուցիչների, թե՛ այլ աշակերտների ծնողների կողմից): Հարմարման և սոցիալական լարվածության խնդիրները, պակաս չափով, բնորոշ են եղել նաև ուսուցիչների` նոր կոլեկտիվներում ներառմանը: Կոնֆլիկտային իրավիճակների հիմնական պատճառը սահմանափակ ժամաքանակի վերաբաշխումն է` նոր ուսուցիչներով համալրված կոլեկտիվներում:
- Դպրոցների վերակազմակերպման` ուսումնասիրված վեց դեպքից երեքում, ըստ շահառուների գնահատման, իրավահաջորդ դպրոցի շենքային և գույքային պայմաններն ավելի վատն են, քան` փաստացի փակված դպրոցի համանման պայմանները:
- Դպրոցների վերակազմակերպման բոլոր դեպքերում միջինում 2 անգամ աճել է սովորողների տեղաշարժի համար անհրաժեշտ ժամանակը: Ուսուցիչները, որոնց աշխատավայրը փոխվել է, նույնպես ավելի շատ ժամանակ են ծախսում աշխատանքի գնալու և վերադառնալու վրա:
- Ուսումնասիրված դպրոցների առնվազն 23 ուսուցիչներ և ուսումնաօժանդակ անձնակազմի առնվազն 18 աշխատողներ զրկվել են աշխատանքից: Բնականաբար, վերակազմակերպված բոլոր դպրոցներում առանց աշխատանքի մնացած անձանց թիվը շատ ավելի մեծ է: Մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի անդամների հնարավոր գործազրկության խնդրին արձագանքող համակարգային մոտեցում չի եղել: Այն դեպքերում, երբ ուսուցիչները շարունակել են մանկավարժական գործունեությունը (թե՛ իրավահաջորդ, թե՛ այլ դպրոցում), նրանց աշխատանքային զբաղվածությունը հիմնականում նվազել է` նախկին աշխատանքային զբաղվածության ծավալի (դրույքի) համեմատ: Բնականաբար, նվազել է նաև այդ ուսուցիչների աշխատավարձը:

- Դպրոցների փոփոխության արդյունքում բազմաթիվ դեպքերում աճել են աշակերտների հավելյալ ծախսերը՝ տրանսպորտի, սննդի, որոշ դեպքերում՝ նաև կրկնուսուցման[2] համար: Եթե նախկինում հնարավոր էր դպրոց հասնել ոտքով, ապա այժմ երեխաների մի մասը ստիպված է օգտվել հանրային տրանսպորտից և տաքսուց:
- Գյուղական բնակավայրերում դպրոցների վերակազմակերպման առկա և կանխատեսվող բացասական հետևանքներն ավելի ցայտուն են: Աշակերտների տեղաշարժը՝ դեպի այլ համայնքների դպրոցներ, ռիսկեր է պարունակում երեխաների կյանքի և առողջության համար: Այդ ռիսկերն առավել ակնհայտ են բարձր լեռնային շրջանների բնակլիմայական վատ պայմաններում (օրինակ՝ ձնաբքի պայմաններում փակված ճանապարհներին մնալու վտանգը): Գյուղերում աշակերտների տրանսպորտային տեղաշարժի ապահովումը բարդ է՝ հանրային տրանսպորտի անհարմար և անկանխատեսելի չվացուցակի, անապահով ընտանիքների համար առաջացող լրացուցիչ ծախսերի, և այլ պատճառներով:
- Հետազոտված մարզային համայնքներում դպրոցի օպտիմալացման հետևանքով մի քանի ընտանիքներ արդեն իսկ տեղափոխվել են այլ համայնքներ (այդ թվում՝ արտերկիր):
- Դպրոցների վերակազմակերպման դրական հետևանքներն են. իրավահաջորդ դպրոցում աշակերտների թվաքանակի ավելացումը և աշակերտների միջև մրցակցության խթանումը, սովորողների նոր սոցիալական կապերի ձևավորումը, համայնքային կյանքին բնորոշ «փակ» մշակույթի «բացումը», վերակազմակերպված որոշ դպրոցներում աշակերտների՝ դասերից բացակայության, ուշացումների, ցածր առաջադիմության նկատմամբ ձևավորված լոյալ մոտեցման հաղթահարումը և նոր դպրոցներում ավելի «խիստ», կարգապահությանն ու կրթական վերջնարդյունքների ապահովմանը միտված մոտեցումների կիրառությունը:

**Հետազոտության հիմնական առաջարկություններն են.**

- ՀՀ-ում դպրոցների վերակազմակերպման ներկայիս գործընթացն անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել և, նախքան որևէ ձևաչափով դրա շարունակությունը, իրականացնել արդյունքների և հետևանքների համակողմանի ուսումնասիրություն (ներառյալ՝ դիտարկել այս հետազոտության արդյունքները):
- Դպրոցների օպտիմալացումը պետք է լինի կրթական առավել լայն բարեփոխումների մի մասը: Դպրոցի վերակազմակերպումը պետք է դիտարկվի որպես ածանցյալ խնդիր, բազմաթիվ քայլերից մեկը՝ կրթության որակի ապահովման ավելի ընդգրկուն վերջնարդյունքին հասնելու ճանապարհին:
- Դպրոցների վերակազմակերպման գործընթացը շարունակելու պարագայում անհրաժեշտ է հանրությանը ներկայացնել համապարփակ ծրագիր, որտեղ պատասխաններ կլինեն նաև այս հետազոտությամբ բարձրաձայնված խնդիրներին: Միայն կառավարության որոշումները բավարար չեն՝ ռեֆորմների արդյունավետ իրականացման համար: Ակնկալվող համակողմանի ծրագրում պետք է շարադրված լինեն դպրոցների օպտիմալացման այնպիսի սկզբունքներ, որոնք կերաշխավորեն յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի անխոչընդոտ իրացումը, կրթության մատչելիության, հասանելիության և հավասարության ապահովումը:
- Կարևոր է գյուղական դպրոցների օպտիմալացման (լուծարման, վերակազմակերպման կամ այլ եղանակով) արգելքի սահմանումը: Գյուղական դպրոցների օպտիմալացումը կարող է իրականացվել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ գյուղաբնակ երեխաների որակյալ կրթության ապահովման անհնարինության պայմաններում:
- Յուրաքանչյուր դպրոցի վերակազմակերպման որոշմանը պետք է նախորդի դրա նպատակահարմարության, հնարավոր դրական ու բացասական հետևանքների, ռիսկերի մանրակրկիտ վերլուծություն: Այն իր հերթին պետք է ձևավորված լինի դպրոցի բոլոր շահառուների կարծիքների համակողմանի ուսումնասիրության և դպրոցի պայմանների օբյեկտիվ չափանիշներով գնահատման հիման վրա:

---

[2] Կրկնուսուցման անհրաժեշտությունը հիմնականում ծագել է այն դեպքերում, երբ նոր (ընդունող) դպրոցում սովորողների ուսումնական առաջադիմությանն առաջադրվող պահանջներն ավելի բարձր են եղել: Որոշ դեպքերում օտար լեզվի կրկնուսուցման պահանջ է առաջացել, քանի որ փակված և նոր (ընդունող) դպրոցներում տարբեր օտար լեզուներ են դասավանդվել:

- Դպրոցների վերակազմակերպման հնարավոր հաջորդ որոշումներում ակնկալվող արդյունքները պետք է լինեն կոնկրետ, չափելի և իրատեսական: Եթե նախատեսված է, օրինակ, կրթության որակի բարձրացման նպատակ, պետք է ներկայացված լինեն նաև դրան հասնելու կոնկրետ ուղիները, անհրաժեշտ ռեսուրսները և որակի գնահատման չափանիշները: Նույնը վերաբերում է նաև բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործման, սովորողների բնականոն ուսուցման ապահովման և նմանատիպ այլ խնդիրների ձևակերպմանը:
- Վերակազմակերպման ենթակա (թեկնածու) դպրոցներին անհրաժեշտ է առկա իրավիճակի բարելավման հնարավորություն ընձեռել: Շահագրգիռ կողմերի աջակցությամբ դպրոցը կարող է կազմել գործողությունների ծրագիր՝ ուղղված կրթության որակի բարելավմանը, կրթական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը, կրթության կազմակերպման միջավայրի բարելավմանը, ֆինանսական միջոցների առավել արդյունավետ տնօրինմանը, և այլն: Միայն այդ ծրագրի իրականացումից հետո, գնահատելով արդյունքները, կարելի է վերջնական որոշում կայացնել դպրոցի վերակազմակերպման անխուսափելիության մասին:
- Անհրաժեշտ է ուսումնասիրել և փորձարկել դպրոցների օպտիմալացման այլընտրանքային մոդելներ: Օրինակ, որոշ դեպքերում կարող է ընդունելի լինել վարչական օպտիմալացման մոտեցումը: Մի քանի դպրոցներ կարող են միավորվել որպես մեկ իրավաբանական անձ՝ միաժամանակ պահպանելով յուրաքանչյուր դպրոցի մանկավարժական անձնակազմն ու կրթության կազմակերպման միջավայրը՝ դպրոցի շենքը: Այս մոտեցումը թույլ կտա բյուջեի միջոցների խնայողություն անել՝ միաժամանակ պահպանելով դպրոցների մանկավարժական կազմը:

# Ներածություն

2017թ. մայիսին Հայաստանի Հանրապետության (այսուհետ՝ ՀՀ) կառավարության հերթական նիստում քննարկվեց քաղաքային դպրոցների օպտիմալացման հարցը: Դպրոցների օպտիմալացման[3] անհրաժեշտությունը հիմնավորվում էր թերբեռնվածության և կրթության որակի հետ կապված խնդիրներով: Կրթության ոլորտի պատասխանատուների՝ Կառավարության նիստին հետևած հրապարակային ելույթներում նշվում էր, որ առաջիկայում միավորվելու են քաղաքներում գործող մինչև 300 աշակերտ ունեցող դպրոցները, իսկ հետագայում՝ նաև մինչև 450 աշակերտ ունեցող քաղաքային դպրոցները:

2017թ. օգոստոսի 24-ի ՀՀ կառավարության նիստում որոշումներ ընդունվեցին մայրաքաղաքի և մարզերի մի շարք դպրոցների վերակազմակերպման և այլ դպրոցներին միացման մասին: Ի հակասություն մինչ այդ բարձրաձայնված սկզբունքների, վերակազմակերպված ուսումնական հաստատությունների շարքում կային գյուղական բնակավայրերում գործող դպրոցներ:

Հայաստանում դպրոցների վերակազմակերպման գործընթացի հիմքերն իսկապես մտահոգիչ են: ՀՀ պաշտոնական վիճակագրությունն արձանագրում է ՀՀ աշակերտների թվի շարունակական նվազումը վերջին երկու տասնամյակում: Այսպես՝ ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների,

- 1996-1997 ուս. տարում Հայաստանում գործում էր 1.439 դպրոց, որտեղ 590.7 հազար աշակերտներ էին սովորում և դասավանդում էին 61.8 հազար ուսուցիչներ[4]:
- 2006-2007 ուս. տարում Հայաստանում գործում էր 1.467 դպրոց, որտեղ 465.4 հազար աշակերտներ էին սովորում և դասավանդում էին 43.1 հազար ուսուցիչներ[5]:
- 2016-2017 ուս. տարում Հայաստանում գործում էր 1.432 դպրոց, որտեղ 364.9 հազար աշակերտներ էին սովորում և դասավանդում էին 38.3 հազար ուսուցիչներ[6]:

Այսպիսով, վերջին 20 տարվա ընթացքում Հայաստանի հանրակրթական դպրոցներում սովորողների թվաքանակը կրճատվել է մոտ 225.000-ով, որից՝ վերջին տասը տարվա ընթացքում՝ շուրջ 100.000-ով:

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի (այսուհետ՝ ԿՏԱԿ) ավելի թարմ տվյալների[7] համաձայն, 2017-2018 ուս. տարում Հայաստանում գործում էր 1.416 դպրոց, որտեղ սովորում էին 368.722 աշակերտներ և դասավանդում էին 38.270 ուսուցիչներ: 2017-2018 ուս. տարվա սկզբին աշակերտների արտահոսքը ՀՀ-ից դուրս կազմել է 6.320:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դպրոցների թիվն էական փոփոխության չի ենթարկվել, այս դինամիկան նշանակում է դպրոցների շենքերի թերբեռնվածություն՝ սովորողների պլանավորված (ակնկալվող) թվաքանակի համեմատ: Այսպես, Հայաստանի դպրոցների շենքերի նախագծային հզորությունը (աշակերտական տեղերի նախատեսված քանակ) կազմում է 649.660[8]: Մինչդեռ ներկայումս սովորողների թիվն այս նախատեսված հզորության ընդամենը 57%-ն է: Սա նշանակում է դպրոցների՝ միջինում 57%-անոց ծանրաբեռնվածություն:

ԿՏԱԿ տվյալների[9] համաձայն, 2017-2018 ուսումնական տարում Հայաստանի հանրակրթական ուսումնական հաստատությունների քանակն՝ ըստ աշակերտների թվաքանակի, հետևյալն է.

- Մինչև 100 աշակերտ - 461 դպրոց (ընդհանուրի 32%-ը),
- 101 - 300 աշակերտ - 524 դպրոց (37%),
- 301 - 500 աշակերտ - 252 դպրոց (18%),
- 501 և ավելի աշակերտ - 184 դպրոց (13%):

---

3 Կառավարության համապատասխան որոշումներում կիրառված է «վերակազմակերպում» հասկացությունը: Այս ուսումնասիրության շրջանակներում «օպտիմալացված» և «վերակազմակերպված» հասկացությունները համարժեք կիրառություն են ունեցել՝ որպես հոմանիշներ: Մոնիտորինգի գործիքներում, օրինակ, երբեմն օգտագործվել է «դպրոցի փակում» հասկացությունը՝ հարցն ավելի պարզ, հասկանալի դարձնելու համար:

4 Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Կրթություն և մշակույթ, 2001:

5 Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Կրթություն և մշակույթ, 2008:

6 Հայաստանի վիճակագրական տարեգիրք, Կրթություն և մշակույթ, 2017:

7 Հանրակրթական ուսումնական հաստատությունների 2017-2018 ուս. տարվա վիճակագրական տվյալները, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոն:

8 Նույն տեղում:

9 Նույն տեղում:

Բերված վիճակագրությունը վկայում է հանրակրթության համակարգում սովորողների թվաքանակի կրճատմամբ պայմանավորված ճգնաժամի մասին, ինչը կրթական քաղաքականության որոշակի վերանայում է պահանջում:

ՀՀ-ում դպրոցների օպտիմալացման լայնածավալ մի գործընթաց տեղի է ունեցել 2003-2004թթ., որի արդյունքում փակվեց շուրջ 60 դպրոց, մոտ 6.000 ուսուցիչ (յուրաքանչյուր 6-րդ ուսուցիչը) դարձավ գործազուրկ:

Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակն իրականացրել է ուսումնասիրություն[10]՝ 2003-2004թթ. ընթացքում Լոռու մարզի դպրոցներում իրականացված օպտիմալացման գործընթացի արդյունքների վերաբերյալ: Ըստ այդ ուսումնասիրության,

*... օպտիմալացման ծրագրում ընդգրկվել են Լոռու մարզի 60 համայնքներ, կրճատվել է 572 ուսուցիչ, մարզում փակվել է 5 դպրոց: Աշխատանքից ազատված ուսուցիչներից 123-ը (յուրաքանչյուր 5-րդը) դիմել է Լոռու մարզի առաջին ատյանի դատարան՝ բողոքարկելով աշխատանքից ազատելու որոշումը: Դատարանը 47 անձի (դիմողների 37.4%) վերականգնել է նախկին աշխատանքում, ինչը նշանակում է, որ ուսուցիչներին աշխատանքից ազատելու գործընթացում տեղի են ունեցել լուրջ խախտումներ:*

*Ըստ ուսումնասիրության հեղինակների, օպտիմալացման ծրագիրը նախապատրաստված և հիմնավորված չի եղել: Այն չի նպաստել կրթության համակարգի բարեփոխմանը, որովհետև մինչ ծրագրի իրականացումը դպրոցական համակարգում չի իրականացվել մասնագետների որակական գնահատում՝ ատեստացիայի միջոցով: Օպտիմալացման ծրագիրը չի ընդգրկել գյուղական բնակավայրերում ուսուցչական կադրերի պահանջարկը բավարարելուն ուղղված սոցիալական, կազմակերպական և ֆինանսական ապահովման խնդիրների լուծման ուղիները: Ծրագրի իրականացման հետևանքով կրթական համակարգից դուրս են մնացել փորձառու և որակյալ կադրեր, որոշ առարկաներ մնացել են առանց դասավանդող ուսուցիչների: Մի շարք դպրոցի տնօրեններ կողմից թույլ է տրվել պաշտոնական դիրքի չարաշահում, ուսուցիչների նկատմամբ հալածանքների դրսևորում և ուսուցչական կոլեկտիվներում ոչ բարենպաստ աշխատանքային մթնոլորտի ձևավորում: Ընդհանուր առմամբ, հանրակրթական դպրոցներում կրթության որակը չի բարձրացել:*

Օպտիմալացման նախկին՝ 2003-2004թթ. ծրագրի վերոնշյալ բացասական հետևանքները (անգամ մեկ մարզի օրինակով) մտահոգության առիթ են տալիս նաև դպրոցների վերակազմակերպման ներկայիս (2017թ.-ից մեկնարկած) գործընթացի առնչությամբ:

Այս ուսումնասիրության նպատակն էր՝ իրականացնել ՀՀ-ում դպրոցների օպտիմալացման գործընթացի մասնակցային մոնիտորինգ՝ հնարավոր հիմնախնդիրները բացահայտելու և գործընթացի բարելավման առաջարկություններ ներկայացնելու համար:

Ծրագրի խնդիրներն էին.

1. Ուսումնասիրել դպրոցների օպտիմալացման գործընթացն ու դրա արդյունքները՝ մի շարք չափանիշների համաձայն:
2. Մոնիտորինգի արդյունքների հիման վրա մշակել առաջարկություններ՝ ուղղված օպտիմալացման հետագա գործընթացի բարելավմանը և ռիսկերի կանխարգելմանը/նվազեցմանը:
3. Իրականացնել ջատագովության արշավ՝ ներգրավելով որոշում ընդունող և քաղաքականություն իրականացնող կառույցներին, շահառուներին, շահագրգիռ կողմերին:

Ավելի կոնկրետ, հետազոտությունն անդրադառնում է այն հարցերին, թե ինչպես են մշակվել դպրոցների վերակազմակերպման մասին որոշումները և ինչպես է ապահովվել դրանց վերաբերյալ հանրային իրազեկումը, դպրոցների վերակազմակերպումն ինչ ազդեցություն է ունեցել կրթության որակի վրա, արդյոք բարելավվել է կրթության կազմակերպման միջավայրը (գույքային և շենքային պայմանները), ինչ սոցիալական հետևանքներ են առաջ եկել դպրոցների վերակազմակերպման

[10] Հաշվետվություն Լոռու մարզի դպրոցներում օպտիմալացման գործընթացի մոնիտորինգի արդյունքների վերաբերյալ, Հելսինկյան Քաղաքացիական Ասամբլեայի Վանաձորի գրասենյակ:

հետևանքով (վերահարմարման խնդիրներ, հավելյալ ծախսեր, գործազրկություն, այլ), որոնք են եղել հետևանքները համայնքների համար, և այլն:

Եզրահանգումներն ամփոփող գլխում ներկայացված են վերակազմակերպման գործընթացին և դրա արդյունքներին բնորոշ առավել տիպական, կրկնվող խնդիրները: Հազվադեպ, սակայն կարևոր նշանակություն ունեցող առանձին խնդիրներ, օրինակներ նույնպես ներկայացված են: Օրինակ, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ) երեխաների վրա վերակազմակերպման գործընթացի բացասական ազդեցության միայն մեկ դեպք է բացահայտվել, որը տեղ է գտել և՛ տվյալ դպրոցի դեպքի նկարագրության, և՛ եզրահանգումների մեջ: Հետազոտական թիմը ելնում է այն համոզմունքից, որ երեխայի կրթության իրավունքի իրացմանը խոչընդոտող յուրաքանչյուր խնդիր, անկախ դրա տարածվածության աստիճանից, հատուկ շեշտադրման կարիք ունի:

Կատարված բացահայտումներին համապատասխան՝ մշակվել են առաջարկություններ: Հետազոտական թիմը լիահույս է, որ այս ուսումնասիրությունը հնարավորություն կտա խուսափելու նախկինում գործած սխալներից և չվնասելու հազարավոր ուսուցիչների և աշակերտների:

Ուսումնասիրությունն իրականացվել է Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ֆինանսավորմամբ, «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» ՀԿ (ԹԻՀԿ) կողմից իրականացվող «Պահանջատեր հասարակություն՝ հանուն պատասխանատու կառավարման» ծրագրի շրջանակներում:

# Մեթոդաբանություն

2017թ. օգոստոսի 24-ին, ՀՀ Կառավարության հերթական նիստում[11] որոշումներ ընդունվեցին մի շարք դպրոցների՝ միացման ձևով վերակազմակերպման մասին:

Կառավարության որոշումներով նախատեսված էր 15 դպրոցի վերակազմակերպում[12], որից.

- 6-ը՝ Երևանում
- 3-ը՝ Շիրակի մարզում (Գյումրի և Արթիկ համայնքներ),
- 2-ը՝ Կոտայքի մարզում (Փյունիկ և Ջրվաշեն բնակավայրեր),
- 1-ը՝ Արմավիրի մարզում (Փարաքար համայնք),
- 2-ը՝ Վայոց Ձորի մարզում (Եղեգնաձոր և Վայք համայնքներ),
- 1-ը՝ Տավուշի մարզում (Բերդ համայնք):

Հետագայում, 2017թ. հոկտեմբերի 19-ին, Կառավարության հերթական նիստում[13] որոշում ընդունվեց նաև Վանաձորի N26 հիմնական դպրոցի՝ միացման ձևով վերակազմակերպման մասին: Երեք ամիս անց՝ 2018թ. հունվարի 25-ի Կառավարության հերթական նիստում[14] որոշում ընդունվեց լուծարելու ՀՀ Արագածոտնի մարզի Մեծաձորի հիմնական դպրոցը:

Քանի որ ծրագրի նախապատրաստական աշխատանքները մեկնարկել էին դեռևս 2017թ. օգոստոսից, մոնիտորինգի ընտրանքի ձևավորման համար հիմք է ընդունվել Կառավարության օգոստոսի 24-ի նիստի որոշումներով վերակազմակերպման ենթակա 15 դպրոցների ցանկը: Վանաձորի և Մեծաձորի դպրոցների վերակազմակերպման և լուծարման որոշումները կայացվել էին այն ժամանակ, երբ մոնիտորինգի ընտրանքն արդեն մշակված էր:

Մասնակցային մոնիտորինգն իրականացվել է Բազելի կառավարման ինստիտուտի կողմից մշակված մեթոդաբանությամբ[15], ինչը ենթադրում է հանրային ծառայության (տվյալ դեպքում՝ կրթության) անմիջական սպառողների և շահագրգիռ այլ անձանց ներգրավում մոնիտորինգային խմբերում:

Իրականացվել է որակական հետազոտություն՝ դեպքի ուսումնասիրության մեթոդով, նկարագրական նպատակով: Փաստացի փակված յուրաքանչյուր դպրոց՝ իրեն բնորոշ վերակազմակերպման գործընթացով ու արդյունքներով, ուսումնասիրվել է որպես առանձին դեպք:

Իրականացվել են կիսաձևայնացված հարցազրույցներ օպտիմալացման գործընթացի ազդեցությունը կրող անձանց և անմիջական շահառուների հետ. վերակազմակերպված դպրոցների անձնակազմի ներկայացուցիչներ (տնօրեններ, փոխտնօրեններ, ուսուցիչներ), վերակազմակերպված դպրոցների աշակերտների ծնողներ, իրավահաջորդ դպրոցների ներկայացուցիչներ (տնօրեններ, փոխտնօրեններ):

Մոնիտորինգի արդյունքները ներկայացված են ըստ վերակազմակերպված դպրոցների: Տվյալների մշակման փուլում պարզվեց, որ թեև կան կրկնվող, համընդհանուր խնդիրներ, սակայն յուրաքանչյուր դպրոցի բնորոշ են նաև ուրույն, տարբերվող հիմնախնդիրներ: Բացի այդ, ըստ դպրոցների տարբերվում են հիմնախնդիրների խորության և սրության աստիճանները:

Այս հանգամանքը ևս մեկ անգամ վերահաստատեց ընտրված մեթոդի (դեպքի ուսումնասիրություն) հիմնավորվածությունը: Այն թույլ է տալիս առավել խորությամբ նկարագրել յուրաքանչյուր դպրոցի իրավիճակը, առանձնահատկությունները, տարբերությունները՝ այլ դեպքերից:

Յուրաքանչյուր դեպքի նկարագրություն մեկնարկում է դպրոցի վերակազմակերպման մասին Կառավարության համապատասխան որոշման բովանդակության համառոտ շարադրանքով: Այնուհետև, ենթավերնագրերով տարանջատված, ներկայացվում են այդ դեպքին բնորոշ առավել ակտուալ հիմնախնդիրները:

[11] Տե՛ս ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի նիստի օրակարգի 28-34 կետերը:
[12] Հավելվածում ներկայացված է Կառավարության՝ 2017թ. օգոստոսի 24-ի նիստի որոշումներով օպտիմալացման ենթակա դպրոցների ամբողջական ցանկը:
[13] Տե՛ս նիստի օրակարգը:
[14] Տե՛ս նիստի օրակարգը:
[15] Տե՛ս «Մասնակցային մոնիտորինգի ձեռնարկ», Բազելի կառավարման ինստիտուտ, 2016:

Նախքան ուսումնասիրության ենթակա կոնկրետ դպրոցների ընտրությունն իրականացնելը, ձևավորվել է ընտրանքի կառուցվածքը: Վերակազմակերպված դպրոցները խմբավորվել են մոնիտորինգի խնդիրների տեսանկյունից նշանակալի համարվող 2 չափանիշով: Այսպես, ըստ 1. բնակավայրի տեսակի և 2. իրականացվող կրթական ծրագրի աստիճանի, առանձնացվել են հետևյալ խմբերը.

**Աղյուսակ 1. Ընտրանքի նախնական կառուցվածքը:**

| | Հիմնական (1-9 դասարան) | Միջնակարգ (1-12 դասարան) | Ավագ (10-12 դասարան) | Վարժարան (5-12 դասարան) | Ընդհանուր |
|---|---|---|---|---|---|
| Մայրաքաղաքային դպրոցներ | 2 | 2 | 2 | 0 | **6** |
| Մարզային քաղաքների դպրոցներ | 0 | 0 | 3 | 3 | **6** |
| Մարզերում գյուղական բնակավայրերի դպրոցներ | 2 | 1 | 0 | 0 | **3** |
| **Ընդհանուր** | **4** | **3** | **5** | **3** | **15** |

Ընտրանքի ձևավորման համար կարևոր էր դեպքերի տիպականության ապահովումը: Ցանկալի էր, որպեսզի ընտրված յուրաքանչյուր դեպք տիպային լինի դպրոցների որոշակի խմբի (վերը բերված աղյուսակից) համար:

Ըստ այդմ, մոնիտորինգի նպատակով ընտրվել են 2-րդ աղյուսակում ներկայացված, հետևյալ 6 վերակազմակերպված դպրոցները:

**Աղյուսակ 2. Մոնիտորինգի համար ընտրված դպրոցներն ու դրանց իրավահաջորդ դպրոցները:**

| **Վերակազմակերպված դպրոց** | **Այսուհետ, տեքստում՝** | **Իրավահաջորդ դպրոց** | **Այսուհետ, տեքստում՝** |
|---|---|---|---|
| Երևանի Ծ. Ռուսթավելու անվան N23 հիմնական դպրոց[16] | N23 դպրոց | Երևանի Մ. Իշխանի անվան N5 հիմնական դպրոց | N5 դպրոց |
| Երևանի Գ. Չոհրապի անվան N 43 ավագ դպրոց[17] | N43 դպրոց | Ա. Իսահակյանի անվան N16 ավագ դպրոց | N16 դպրոց |
| ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն[18] | Բերդի Վարժարան կամ՝ Վարժարան | Բերդի ավագ դպրոց | Բերդի ավագ դպրոց կամ՝ ավագ դպրոց |
| ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոց[19] | Փյունիկի դպրոց | ՀՀ Կոտայքի մարզի Արտավազի միջնակարգ դպրոց | Արտավազի դպրոց |
| ՀՀ Կոտայքի մարզի Ձովաշենի հիմնական դպրոց[20] | Ձովաշենի դպրոց | ՀՀ Կոտայքի մարզի Հատիսի Վարդան Վարդանյանի անվան միջնակարգ դպրոց | Հատիսի դպրոց |
| Փարաքարի հիմնական դպրոց[21] | Փարաքարի հիմնական դպրոց կամ՝ հիմնական դպրոց | Փարաքարի միջնակարգ դպրոց | Փարաքարի միջնակարգ դպրոց կամ՝ միջնակարգ դպրոց |

[16] Տե՛ս N 23 դպրոցի վերակազմակերպման վերաբերյալ Կառավարության որոշումը:
[17] Տե՛ս N 43 դպրոցի վերակազմակերպման վերաբերյալ Կառավարության որոշումը:
[18] Տե՛ս Բերդի վարժարանի վերակազմակերպման վերաբերյալ Կառավարության որոշումը:
[19] Տե՛ս Փյունիկի դպրոցի վերակազմակերպման վերաբերյալ Կառավարության որոշումը:
[20] Տե՛ս Ձովաշենի դպրոցի վերակազմակերպման վերաբերյալ Կառավարության որոշումը:
[21] Տե՛ս Փարաքարի հիմնական դպրոցի վերակազմակերպման վերաբերյալ Կառավարության որոշումը:

Մոնիտորինգի համար ընտրված դպրոցները ներկայացնում են ընտրանքի կառուցվածքում առանձնացված բոլոր խմբերը: Մասնավորապես,

- N23 և N43 դպրոցները **մայրաքաղաքային** դպրոցներ են, որոնցից առաջինը՝ **հիմնական** դպրոց է, իսկ մյուսը՝ **ավագ:**
- Բերդի **վարժարանը մարզային քաղաքի** դպրոց է,
- Փյունիկի, Զովաշենի և Փարաքարի դպրոցները **մարզերում գյուղական բնակավայրերի** դպրոցներ են, որոնցից առաջինը՝ **միջնակարգ,** իսկ վերջին երկուսը՝ **հիմնական:**

Ընտրանքի ձևավորման հաջորդ կարևոր սկզբունքը ռիսկայնության մակարդակը հաշվի առնելն էր: Օրինակ, Կոտայքի մարզի Փյունիկ և Զովաշեն բնակավայրերի դպրոցները միացվել են մի քանի կմ հեռավորության վրա գտնվող բնակավայրերի դպրոցներին: Տարածաշրջանի բնակլիմայական պայմանները հաշվի առնելով՝ այս հանգամանքը երեխաների կրթության հասանելիության կարևոր խոչընդոտ է: Քանի որ նմանատիպ դպրոցներում կանխատեսվում էին ավելի շատ և բազմաբնույթ հիմնախնդիրներ, այդ խմբի դպրոցների համամասնությունն ընտրանքում ավելի մեծ է:

Այսպես, ուսումնասիրվող գլխավոր համախմբության (15 դպրոց) 3 դպրոցներ էին գյուղական բնակավայրերից: Դրանք բոլորն էլ ներառվել են հետազոտության ընտրանքում:

Ընտրանքի ձևավորման այս «ուղղորդված» մոտեցումը արդարացված է գործնական նպատակ ունեցող հետազոտություններում: Ի վերջո, մոնիտորինգի վերջնական նպատակը վերակազմակերպման գործընթացին բնորոշ հիմնախնդիրների բացահայտումն է և դրանց հաղթահարման ուղղությամբ առաջարկների մշակումը: Հետևաբար, միանգամայն արդարացված է հետազոտողների ուշադրության կենտրոնացումն այն թիրախների ուղղությամբ, որոնց իրավիճակն առավել խնդրահարույց, ռիսկային է համարվում:

**Դիտարկման միավորները, նրանց ընտրության եղանակը և մոնիտորինգի գործիքները**

Տվյալները հավաքվել են **կիսաձևայնացված հարցաթերթով իրականացված հարցազրույցների** միջոցով:

Հարցազրույցների նպատակով ընտրվել են դիտարկման միավոր հանդիսացող 4 խումբ.

1. Վերակազմակերպված դպրոցի տնօրեն և փոխտնօրեն,
2. Իրավահաջորդ դպրոցի տնօրեն և փոխտնօրեն,
3. Վերակազմակերպված դպրոցի ուսուցիչ,
4. Վերակազմակերպված դպրոցի աշակերտի ծնող:

Վերոնշյալ յուրաքանչյուր խմբի ներկայացուցչի հետ հարցազրույց իրականացնելու համար առանձին հարցաթերթ է կիրառվել: Օգտագործված հարցաթերթերը ներկայացված են զեկույցի հավելվածում:

Յուրաքանչյուր խմբից հարցվողի ընտրությունն իրականացվել է ձնագնդի մեթոդի միջոցով: Մոնիտորինգի նախապատրաստական փուլում հետազոտական թիմը կապ է հաստատել պոտենցիալ հարցվողների առաջին շրջանակի՝ դպրոցների տնօրենների և փոխտնօրենների հետ, նրանց աջակցությամբ ձեռք է բերել որոշ ուսուցիչների և ծնողների տվյալներ: Մոնիտորինգի առաջին փուլում հարցազրույցներ են իրականացվել այս առաջին շրջանակից այն անձանց հետ, որոնք նման ցանկություն են հայտնել:

Այնուհետև, հարցվողների առաջին խմբի օգնությամբ դիտորդները կապ են հաստատել այլ ուսուցիչների և ծնողների հետ, և այսպես շարունակ: Դիտորդները հայցել են յուրաքանչյուր հարցվողի աջակցությունը՝ նոր, պոտենցիալ հարցվողներ հայտնաբերելու գործում:

Սովորաբար, ձնագնդի մեթոդով իրականացվող հարցազրույցների դադարեցման հիմք է համարվում տեղեկատվության հագեցվածությունը (տվյալների կրկնությունը և նոր տվյալների բացակայությունը): Այս մոնիտորինգի ընթացքում դիտորդները չեն դադարեցրել հարցազրույցներն այդ հիմքով: Հասանելի բոլոր հարցվողների հետ, նրանց համաձայնության դեպքում, հարցազրույցներ են իրականացվել: Այս մոտեցումը թույլ է տվել ամրապնդել տվյալների արժանահավատությունը, խուսափել տեղեկատվության հնարավոր կորստից:

Վերակազմակերպված դպրոցի՝ ընտրանքում ընդգրկված յուրաքանչյուր երեխայի համար առանձին հարցաթերթ է լրացվել, եթե անգամ այդ երեխաները մեկ ընտանիքից են եղել կամ հարցվողը միևնույն ծնողն է եղել: Այս մոտեցման հիմքում այն սկզբունքն էր ընկած, որ

վերակազմակերպման ազդեցությունը սովորողների վրա կարող է տարբեր լինել՝ կախված նրանց տարիքից, դասարանից և անձնային այլ առանձնահատկություններից:

Ընդհանուր առմամբ, հարցազրույց է իրականացվել 144 անձի հետ:

Ստորև բերված աղյուսակում ներկայացված են յուրաքանչյուր խմբի ներկայացուցիչների հետ իրականացված հարցազրույցների քանակները:

**Աղյուսակ 3. Հարցվողների թվաքանակը՝ ըստ յուրաքանչյուր խմբի:**

| Վերակազմակերպված դպրոց | Վերակազմակերպված դպրոցի աշակերտներ[22] | Վերակազմակերպված դպրոցի ուսուցիչներ | Վերակազմակերպված դպրոցի տնօրեն և/կամ փոխտնօրեն | Իրավահաջորդ դպրոցի տնօրեն և/կամ փոխտնօրեն |
|---|---|---|---|---|
| N23 դպրոց | 20 | 2 | 1 | 2 |
| N43 դպրոց | 13 | 11 | 0 | 1 |
| Բերդի Վարժարան | 20 | 11 | 1 | 1 |
| Փյունիկի դպրոց | 12 | 12 | 1 | 1 |
| Ձովաշենի դպրոց | 9 | 2 | 1 | 1 |
| Փարաքարի դպրոց | 9 | 9 | 2 | 2 |
| **Ընդհանուր** | **83** | **47** | **6** | **8** |

Կառավարության համապատասխան որոշումների նախագծերում բերված տվյալների համաձայն, ընտրանքում ներառված 6 ուսումնական հաստատություններում, որոշումների կայացման պահին 452 աշակերտներ էին սովորում:

Հետազոտության ընտրանքում ներառվել է 83 աշակերտ, ինչը վերոնշյալ համախմբության մոտ 18%-ն է կամ՝ յուրաքանչյուր 5-րդ սովորողը:

Կան դպրոցներ, որտեղ ընտրանքում ներառված սովորողների ցուցանիշը միջինից բավական բարձր է: Օրինակ, Ձովաշենի դպրոցում սովորող բոլոր 9 աշակերտներն ընդգրկվել են ընտրանքում: Փյունիկի դպրոցում սովորողներից յուրաքանչյուր 3-րդն է ընդգրկվել ընտրանքում, Երևանի N23 դպրոցում՝ աշակերտների 30%-ը, և այլն:

Իրականացվել է նաև **փաստաթղթերի որակական վերլուծություն**: Դրանց թվում էին.

- ՀՀ կողմից վավերացված, կրթության իրավունքի կարգավորումներ պարունակող միջազգային իրավական ակտերը,
- Կրթության ոլորտը կարգավորող՝ ՀՀ օրենսդրական և ենթաօրենսդրական ակտերը,
- Դպրոցների վերակազմակերպման մասին Կառավարության համապատասխան որոշումները,
- Թեմայի վերաբերյալ տարբեր հետազոտությունների արդյունքները,
- Ինտերնետային մամուլի հրապարակումները (այդ թվում՝ լրագրողական հետաքննություններ, հարցազրույցներ),
- ՀՔԻ կողմից պետական մարմիններին (ԿԳՆ, Երևանի քաղաքապետարան, Կոտայքի մարզպետարան) ուղղված հարցումների պաշտոնական պատասխանները:

Հարցազրույցների միջոցով ստացված տվյալները համադրվել և համեմատվել են վերոնշյալ փաստաթղթերում ամփոփված տվյալների հետ, ինչը թույլ է տվել բարձրացնել եզրահանգումների արժանահավատության մակարդակը:

Հարցվողների խոսքից մեջբերումները ներկայացված են շեղատառերով:

**Մասնակցային մոնիտորինգը** մասնակցային ներգրավվածության հատուկ տեսակ է, որը վերաբերում է մատուցվող հանրային ծառայությունների դիտարկման և գնահատման գործընթացում քաղաքացիների, ծառայություն ստացողների կամ քաղաքացիական հասարակության կառույցների ներգրավվածությանը: Դա մի գործընթաց է, որը թույլ է տալիս

[22] Հարցազրույցներն իրականացվել են աշակերտների ծնողների հետ:

հասարակությանը՝ հետևել կառավարության որոշումների և քաղաքականությունների իրականացմանը տեղական մակարդակում, չափում է դրանց արդյունավետությունը և համապատասխանությունը, տալիս է հետադարձ կապ և, ի վերջո, հանրային պաշտոն զբաղեցնողներից պահանջում է հաշվետվողականություն:

Քանի որ պետության կողմից մոնիտորինգ իրականացնելու կարողությունները ապակենտրոնացված միջավայրում հաճախ սահմանափակ են, ուստի կատարողականի մոնիտորինգը՝ հենց քաղաքացիների կամ ծառայություն ստացողների կողմից, առավել արդյունավետ է և չի պահանջում մեծ ծախսեր: Քաղաքացիների ներգրավվածությունը կարող է մոնիտորինգը դարձնել պրոակտիվ գործընթաց, որի միջոցով ապահովվում է համապատասխանությունը կատարողականի չափանիշներին[23]:

Հաշվի առնելով մասնակցային մոնիտորինգի նշված առավելությունները՝ ՀՔԻ թիմը կիրառել է հենց այդ մոտեցումը: ՀՔԻ կողմից տարածված հայտարարությունների միջոցով հավաքագրվել են դիմումներ՝ կամավորներից, որոնք հրավիրվել են մասնակցային մոնիտորինգի առանձնահատկություններին և մեթոդներին նվիրված դասընթացին:

Ընտրված 11 դիտորդները հավաքել են առաջնային հետազոտական տվյալները, իսկ ՀՔԻ թիմն իրականացրել է մոնիտորինգի դաշտային աշխատանքների ընդհանուր համակարգումը:

Մոնիտորինգի դաշտային աշխատանքներն իրականացվել են 2018թ. փետրվար և մարտ ամիսներին:

**Մոնիտորինգի սահմանափակումները**

Մասնակցային մոնիտորինգի ձևաչափը ենթադրում էր որոշակի սահմանափակումներ: Դրանցից գլխավորը վերաբերում էր դիտորդների հետազոտական կարողություններին: Մոնիտորինգի մասնակցայնության սկզբունքն ուներ գերակայություն՝ դիտորդների արհեստավարժության, հավաքված տվյալների որակի, և այլ սկզբունքների նկատմամբ:

Մասնակցային մոնիտորինգը կարևորվում էր որպես քաղաքացիների հետազոտական և այլ կարողությունների զարգացման, նրանց ուշադրությունը կրթության ակտուալ հիմնախնդիրների վրա բևեռելու գործընթաց: Այս մոտեցման շրջանակներում քաղաքացու ակտիվացումն ու հզորացումը նույնքան կարևոր նպատակ է, որքան նրա կողմից հավաքված տեղեկությունների որակի ապահովումը: Նշված պայմաններում թույլատրելի էր, դիտորդների ոչ արհեստավարժության պատճառով, տեղեկատվության որակի մասնակի նվազեցում:

Այնուամենայնիվ, ՀՔԻ թիմը գնահատում է հավաքված տվյալները որպես բավական որակյալ՝ արժանահավատության տեսանկյունից: Առանձին դեպքերում դիտորդները չեն կարողացել ձեռք բերել ակնկալվող տվյալները (օրինակ՝ լուսանկարել դպրոցի շենքային պայմանները կամ ճշտել որոշ քանակական տվյալներ), ինչն էական ազդեցություն չի ունեցել հետազոտության եզրահանգումների վրա:

Մոնիտորինգի մյուս կարևոր սահմանափակումը վերաբերում էր պոտենցիալ հարցվողների հասանելիությանը: Դպրոցի վերակազմակերպման արդյունքում շահառուներն ու ուսուցիչները ոչ միշտ են տեղափոխվել իրավահաջորդ դպրոց, ինչը թույլ կտար նրանց հեշտությամբ գտնել:

Մարզային բնակավայրերում պոտենցիալ հարցվողներին գտնելն ավելի հեշտ էր՝ համայնքային սերտ կապերի շնորհիվ: Երևանում այդ խնդրի լուծումն ավելի բարդ էր, քանի որ անձնային տվյալները (հասցե, հեռախոսահամար) հասանելի չէին դիտորդներին: Հարցվողները հաճախ տեղեկություն չունեին իրենց նախկին (վերակազմակերպված) դպրոցների այլ շահառուների և ուսուցիչների մասին: Այդ պատճառով, օրինակ, հարցազրույց է իրականացվել վերակազմակերպված դպրոցներից մեկի երկու ուսուցչի հետ, ինչը հարցվողների ակնկալվող թվից ցածր արդյունք է:

[23] Տե՛ս «Մասնակցային մոնիտորինգի ձեռնարկ», Բազելի կառավարման ինստիտուտ, 2016:

# Մոնիտորինգի արդյունքները

## ՀՀ հանրակրթության բնագավառը կարգավորող հիմնական իրավական դրույթները

ՀՀ-ում հանրակրթությունը և այդ համակարգում ընթացող գործընթացները (ներառյալ՝ դպրոցների վերակազմակերպումը), պետք է համապատասխանեն ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ կողմից վավերացված կոնվենցիաներով և համաձայնագրերով, ՀՀ օրենքներով, ՀՀ կառավարության կողմից հաստատված ծրագրերով, ՀՀ կառավարության որոշումներով և այլ իրավական փաստաթղթերով նախատեսված իրավական կարգավորումներին:

Ստորև բերված են այդ փաստաթղթերի այն իրավական դրույթները, որոնք ուղղակի կամ անուղղակի առնչություն ունեն Հայաստանում դպրոցների վերակազմակերպման գործընթացին: Մասնավորապես, առանձնացված են այն իրավական կարգավորումները, որոնց խախտման առերևույթ ռիսկերն են առկա Հայաստանում դպրոցների օպտիմալացման գործընթացում:

***Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների միջազգային դաշնագիր[24], հոդված 13***

- 2. Սույն դաշնագրին մասնակցող պետությունները գտնում են, որ այդ (կրթության) իրավունքի լրիվ իրականացման համար՝
  a/ սկզբնական կրթությունը պետք է լինի պարտադիր և անվճար բոլորի համար,
  b/ միջնակարգ կրթությունն իր զանազան ձևերով, ներառյալ պրոֆեսիոնալ-տեխնիկական կրթությունը, պետք է լինի բաց և մատչելի բոլորի համար՝ բոլոր անհրաժեշտ միջոցների ձեռնարկման և, մասնավորապես, անվճար կրթություն աստիճանաբար մտցնելու ուղիով,
  e/ պետք է եռանդագին իրագործվի բոլոր աստիճանների դպրոցների ցանցի զարգացումը, պետք է սահմանվի կրթաթոշակների բավարար համակարգ, և պետք է մշտապես բարելավվեն ուսուցչական կազմի նյութական պայմանները:
  3. Սույն դաշնագրին մասնակցող պետությունները պարտավորվում են հարգել իրենց երեխաների համար ոչ միայն պետական իշխանությունների կողմից հիմնադրված դպրոցները, այլև մյուս այն դպրոցները ընտրելու ծնողների և համապատասխան դեպքերում օրինական խնամակալների ազատությունը, որոնք համապատասխանում են կրթության պահանջների այն նվազագույնին, որը կարող է սահմանվել կամ հաստատվել պետության կողմից, և հարգել իրենց երեխաների կրոնական և բարոյական դաստիարակությունը իրենց սեփական համոզմունքներին համապատասխան ապահովելու նրանց ազատությունը:

***Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիա[25], հոդված 1***

- 1. Սույն Կոնվենցիայի նպատակի համար «խտրականություն» հասկացությունը ներառում է ցանկացած տարբերակում, բացառություն, սահմանափակում կամ նախապատվություն՝ ռասայի, մաշկի գույնի, սեռի, լեզվի, կրոնի, քաղաքական կամ այլ համոզմունքի, ազգային կամ սոցիալական պատկանելության, տնտեսական դրության կամ ծննդի հիմքով, ինչի նպատակը կամ հետևանքն է կրթության բնագավառում հավասար վերաբերմունքի վերացումը կամ խախտումը, մասնավորապես.
  ա) որևէ անձի կամ անձանց խմբի՝ ցանկացած տեսակի կամ մակարդակով կրթություն ստանալու հնարավորությունից զրկելը,
  բ) որևէ անձի կամ անձանց խմբի կրթությունը ցածր ստանդարտով սահմանափակելը,
  գ) որևէ անձի կամ անձանց խմբի համար կրթական առանձին համակարգեր կամ ուսումնական հաստատություններ ստեղծելը կամ պահպանելը, բացի այն դեպքերից, որոնք նախատեսված են Կոնվենցիայի 2-րդ հոդվածի դրույթներով:

***Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիա, հոդված 5***

---

[24] ՀՀ-ը վավերացրել է 1993թ.:
[25] ՀՀ-ը վավերացրել է 1993թ.:

- դ) էական նշանակություն ունի, առաջին հերթին, ծնողների և, համապատասխան դեպքերում, խնամակալների՝ իրենց երեխաների համար հանրային իշխանությունների կողմից պահվող ուսումնական հաստատություններից բացի այլ ուսումնական հաստատություններ ընտրելու ազատության հարգումը, պայմանով, որ այդ ուսումնական հաստատությունները համապատասխանեն իրավասու իշխանությունների սահմանած կրթական նվազագույն ստանդարտներին...:

*Երեխայի իրավունքների մասին կոնվենցիա[26], հոդված 28*

- 1. Մասնակից պետությունները ճանաչում են երեխայի կրթության իրավունքը և հավասար հնարավորությունների հիման վրա այդ իրավունքի իրականացմանն աստիճանաբար հասնելու համար նրանք, մասնավորապես.
  (ա) մտցնում են պարտադիր և անվճար տարրական կրթություն,
  (բ) խրախուսում են միջնակարգ կրթության տարբեր ձևերի, ներառյալ՝ ընդհանուր և մասնագիտական կրթության զարգացումը, ապահովում են դրանց մատչելիությունը բոլոր երեխաների համար և ձեռնարկում են այնպիսի անհրաժեշտ միջոցներ, ինչպիսիք են անվճար կրթություն տրամադրելը և կարիքի դեպքում ֆինանսական օգնություն ցույց տալը,
  (ե) միջոցներ են ձեռնարկում նպաստելու կանոնավոր դպրոց հաճախելուն և դպրոցը թողած սովորողների թվաքանակի նվազմանը:

*ՀՀ Սահմանադրություն, հոդված 38*

- Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

*ՀՀ օրենքը Կրթության մասին, հոդված 5*

- Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքներն են՝
  2) կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ,
  3) կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը,
  7) ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը,
  8) պետական և ոչ պետական ուսումնական հաստատություններում քաղաքացիների կրթություն ստանալու հնարավորությունների երաշխավորումը.

*ՀՀ օրենքը Կրթության մասին, հոդված 6*

- 1. Հայաստանի Հանրապետությունն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից: Մասնագիտական կրթության իրավունքի սահմանափակումները նախատեսվում են օրենքով:
  2. Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ:

*ՀՀ օրենքը Երեխայի իրավունքների մասին, հոդված 23*

- Հայաստանի Հանրապետությունում երաշխավորվում է երեխայի անվտանգությունը:

*ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագիր*

[26] ՀՀ-ը վավերացրել է 1993թ.:

- 7. Կրթության բնագավառի գերխնդիրն է կրթության որակի բարձրացումը՝ ապահովելով համակարգի արդյունավետ գործունեությունը և քաղաքացիների՝ իրենց ձգտումներին և ընդունակություններին համապատասխան կրթություն ստանալու հավասար մատչելիությունը:
  74. Հաշվի առնելով Հայաստանի տնտեսական զարգացման միտումները՝ այս բնագավառում (կրթության) ևս առաջնային է դառնում որակյալ մասնագիտական կրթություն ստանալու հնարավորությունների ընդլայնումը սոցիալական անհավասարությունն ու տարածքային անհամաչափ զարգացումը մեղմելու հրամայականով:
  82. Կրթության զարգացման ռազմավարական նպատակին հասնելու համար սահմանվում են մինչև 2015թ. կրթության զարգացման հետևյալ նպատակները.
  1) բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուրը ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան: Մասնավորապես, մինչև 2015թ.՝
  գ. ընդլայնել դպրոցահասակ երեխաների (ներառյալ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող), ազգային փոքրամասնությունների և խոցելի մյուս բոլոր խմբերի երեխաների՝ որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում,
  88. Ռեսուրսների տարբերակված բաշխում՝ ըստ գործունեության արդյունքների: Պետությունը պարտավորություն ունի ապահովել որակյալ կրթության մատչելիությունը քաղաքացիների համար՝ ստեղծելով հավասար հնարավորություններ և բարելավելով ուսումնական հաստատությունների կարողությունները: Դրա կարևոր նախապայման է ռեսուրսների արդյունավետ և արդարացի բաշխումը: Կարևորելով հավասարության սկզբունքը՝ միջոցների բաշխման «կարիքներից կախված» սկզբունքին զուգահեռ, կընդունվեն այնպիսի մոտեցումներ, որոնք արդարացի, սակայն տարբերակված բաշխման միջոցով առավելագույն հնարավորություններ կընձեռեն լավ արդյունք ցուցաբերողներին:

Եթե վերը բերված կարգավորումներն ուրվագծում են կրթության իրավունքի իրացման ընդհանուր շրջանակը, ապա Հայաստանում դպրոցների վերակազմակերպման գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության առանձին որոշումներով:

Ինչպես վերը նշվել էր, 2017թ. օգոստոսի 24-ին, ՀՀ Կառավարության հերթական նիստում որոշումներ ընդունվեցին մի շարք դպրոցների՝ միացման ձևով վերակազմակերպման մասին:

Ստորև, համառոտ ներկայացված են հետազոտության ընտրանքում ներառված դպրոցների՝ վերակազմակերպման մասին որոշումները:

## Դպրոցների վերակազմակերպման մասին ՀՀ կառավարության որոշումները

*ՀՀ Կառավարության որոշումը՝ Բերդի դպրոցի վերակազմակերպման մասին*

Տավուշի մարզի Բերդի վարժարանը միացման ձևով վերակազմակերպվել է՝ միանալով Բերդի ավագ դպրոցին:

Կառավարության որոշմամբ Բերդի ավագ դպրոցին թույլատրվել է մարման կարգով շարունակել Վարժարանում հիմնական ծրագրով սովորող 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ դասարաններում սովորողների ուսումնառությունը:

Վարժարանի վերակազմակերպման անհրաժեշտությունը պայմանավորված է ուսումնական հաստատություններում **աշակերտների թվի նվազմամբ և ուսումնական տարածքների (շենք) օպտիմալ օգտագործմամբ:**

Ըստ Կառավարության որոշման մեջ բերված տվյալների, Բերդի ավագ դպրոցում ուսումնառում է 150 աշակերտ, սակայն դպրոցը նախատեսված է 250 աշակերտի համար:

Ավագ դպրոցից մոտ 300 մետր հեռավորության վրա, հարմարեցված (ոչ տիպային) շենքում, գործում է Վարժարանը, որտեղ ուսումնառում է շուրջ **70** աշակերտ: Վարժարանն ունի 27 աշխատող՝ **18** ուսուցիչ, **2** վարչական աշխատող, ուսումնաօժանդակ և տնտեսական անձնակազմ (թվով **8**):

Որոշման մեջ նշված է, որ Վարժարանը վերակազմակերպելով և միացնելով ավագ դպրոցին՝ **հնարավորություն կստեղծվի ուսումնական տարածքների օպտիմալ օգտագործման համար, ինչի արդյունքում միացվող դպրոցներում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կկազմակերպվի առավել արդյունավետ, ինչն էլ իր հերթին կնպաստի կրթության որակի բարձրացմանը:**

Միացման ձևով վերակազմակերպման արդյունքում Վարժարանի աշխատողները համարվում են Բերդի ավագ դպրոցի աշխատողներ[27]:

Որոշման մեջ նշված է, որ միացման արդյունքում, նոր հաստիքացուցակի հաստատմամբ **հնարավոր են հաստիքների կրճատումներ,** մասնավորապես՝ վարչական և ուսումնաօժանդակ, պայմանավորված նոր ուսումնական տարվա սկզբին արտադրական ծավալների փոփոխմամբ (աշակերտների թվի փոփոխություն):

Որոշմամբ նախատեսված փոփոխությունների ակնկալվող արդյունքն է՝ **«Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով»:**

*ՀՀ Կառավարության <u>որոշումները</u>՝ Ֆյունիկի դպրոցի վերակազմակերպման մասին*

ՀՀ Կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի որոշմամբ Կոտայքի մարզի Ֆյունիկի միջնակարգ դպրոցը վերակազմակերպվել է՝ միանալով Արտավազի միջնակարգ դպրոցին:

Ֆյունիկի դպրոցի վերակազմակերպման հիմնավորման մեջ նշված է, որ այս դպրոցում բնականոն հանրակրթական ուսուցում իրականացնելուն խոչընդոտ է հանդիսանում աշակերտների թվի նվազումը, որը հանգեցնում է ոչ լիարժեք դասարանների կոմպլեկտավորմանը: Որոշման կայացման պահին Ֆյունիկի դպրոցում աշակերտների թիվը 39 էր, ուսուցիչների, վարչական և սպասարկման անձնակազմի թիվը՝ 20:

Որոշման մեջ նշված է նաև, որ օպտիմալացման արդյունքում կկրճատվի շուրջ 20 աշխատակից:

Դպրոցների միջև եղած հեռավորությունը շուրջ 3.5 կմ է: Ֆյունիկի դպրոցի 39 աշակերտի տեղափոխությունը նախատեսվում է իրականացնել Հրազդան-Հանքավան ներմարզային երթուղին սպասարկող 2 կազմակերպությունների միկրոավտոբուսներով՝ միավորման արդյունքում տնտեսված միջոցների հաշվին:

[27] Կառավարության որոշման մեջ հղում է արված ՀՀ աշխատանքային օրենսգրքի 126-րդ հոդվածին. «Կազմակերպության վերակազմակերպումը, ինչպես նաև դրա նկատմամբ պարտավորական կամ այլ իրավունքներ ունեցող անձանց փոփոխությունը հիմք չէ աշխատանքային պայմանագիրը լուծելու համար, եթե տեղի չի ունենում աշխատողների թվաքանակի և (կամ) հաստիքների կրճատում»:

Որոշմամբ նախատեսված փոփոխությունների ակնկալվող արդյունքն է՝ «... վերոնշյալ ՊՈԱԿ-ների միացման արդյունքում՝ **ապահովել դրանց գործունեության արդյունավետության բարձրացումը և պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործումը»:**

ՀՀ ԿԳՆ-ն առարկություն է ներկայացրել Փյունիկի դպրոցի վերակազմակերպման՝ Կառավարության համապատասխան որոշման նախագծի վերաբերյալ. «ՀՀ կառավարության հանձնարարականի համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՀՀ մարզպետարանների հետ համատեղ քննարկում են հանրապետությունում գործող քաղաքային դպրոցների օպտիմալացման հարցը, ինչի համար **ներկայումս նպատակահարմար չենք գտնում այս փուլում անդրադառնալ գյուղական դպրոցների վերակազմակերպումներին և առաջարկում ենք շրջանառությունից հանել** «ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու և գույքը հետ վերցնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը»:

ԿԳՆ այս առարկությունը Կառավարության կողմից չի ընդունվել՝ «... **հաշվի առնելով դպրոցի ֆինանսական վիճակի բարելավման և աշակերտներին տրամադրվող կրթության որակի բարձրացման անհրաժեշտությունը»:**

ՀՀ Կոտայքի մարզպետարանը ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չի ներկայացրել:

ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 16-ի նիստում[28] որոշում կայացվեց ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի N1039-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին, համաձայն որի, Փյունիկի դպրոցի վերակազմակերպման գործընթացը **սկսվելու է 2018թ. հունիսի 1-ից[29]:**

Որոշման նախագծի ընդունման անհրաժեշտությունը պայմանավորված էր Փյունիկ համայնքի դպրոցական տարիքի երեխաների ուսուցումը բնականոն կազմակերպելու պահանջից: Մասնավորապես, ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ Կոտայքի մարզի Արտավազի միջնակարգ դպրոցի շենքային պայմանները ոչ բարվոք են, ընթանում են վերանորոգման աշխատանքներ[30]:

Որոշման մեջ նշված է. «...վերակազմակերպման աշխատանքներն արդյունավետ իրականացնելու, սովորողների՝ տրանսպորտային միջոցներով տեղափոխումը կազմակերպելու համար **նպատակահարմար է փոփոխություն կատարել որոշման մեջ՝ ուժի մեջ մտնելու ժամկետները երկարացնելով մինչև 2018թ. հունիսի 1-ը»:**

Ժամկետի երկարաձգման ակնկալվող արդյունքն է. հնարավորություն ընձեռել 2018-2019 ուսումնական տարվա սկզբին բնականոն կազմակերպելու Փյունիկի դպրոցի սովորողների ուսումնառությունը՝ ապահովելով կրթական բարենպաստ միջավայր:

Քանի որ Փյունիկի դպրոցի վերակազմակերպման գործընթացի մեկնարկը հետաձգվել էր մինչև 2018թ. հունիսի 1-ը, իսկ հարցումն իրականացվել է 2018թ. փետրվարին, հարցման մասնակիցներին ուղղված հարցերը ձևափոխվել են՝ հարմարեցվելով այդ իրավիճակին: Մասնավորապես, հարցերի զգալի մասը կանխատեսող բնույթ է ունեցել, դրանց միջոցով դուրս են բերվել համայնքի անդամների տեսակետները (կանխատեսումները) դպրոցի վերակազմակերպման հնարավոր հետևանքների վերաբերյալ:

Հարցման այս առանձնահատկությամբ պայմանավորված, դուրս չեն բերվել քանակական տվյալներ, քանի որ բազմաթիվ հարցերի վերաբերյալ պատասխաններն ունեին ոչ թե փաստական, այլ՝ կանխատեսող բնույթ:

---

[28] ՀՀ Կառավարության 2017թ. նոյեմբերի 16-ի նիստի օրակարգը:

[29] ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի N 1039-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին որոշման նախագիծ:

[30] Այս առումով, պարզ չէ, թե ինչու այդ ուսումնասիրությունը չէր իրականացվել նախքան դպրոցների վերակազմակերպման մասին որոշման կայացումը: Ակնհայտ է, որ Արտավազի դպրոցի ոչ բարվոք պայմանները նոր չեն ի հայտ եկել և կարելի էր (ու անհրաժեշտ էր) դրանք ուսումնասիրել որոշման նախապատրաստման փուլում: Բացի այդ, Փյունիկի միջնակարգ դպրոցն ունի 44 աշակերտ և գտնվում է շուրջ 1820 մ բարձր լեռնային գոտում: Արտավազի միջնակարգ դպրոց հասնելու համար երեխաները պետք է մոտ 2-3 կմ ճանապարհ անցնեն՝ հաղթահարելով խոչընդոտներ, հատկապես 5-6 ամիս տևող խիստ ձմեռվա եղանակային պայմաններում:

Փյունիկի դպրոցի վերաբերյալ ՀՀ կառավարության 3-րդ որոշումն[31] ընդունվեց 2018թ. հունիսի 1-ին, երբ այս զեկույցի պատրաստման աշխատանքներն ավարտին էին մոտենում: Դրանում, մասնավորապես, ասված է. «Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է. ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի «ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին» N1039-Ա որոշումը»:

Վերոնշյալ որոշման նախագծում[32], որպես հիմնավորում, նշված է. հաշվի առնելով բնակիչների շարունակվող դժգոհությունները և ՀՀ Կոտայքի մարզպետարանի դիրքորոշումը այն մասին, որ դպրոցների միացումը այս պահին համարում են ոչ նպատակահարմար, անհրաժեշտություն է առաջացել ուժը կորցրած ճանաչել ՀՀ կառավարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N1039-Ա որոշումը: Նշված է նաև, որ նախագծի ընդունմամբ ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկ համայնքում հնարավոր կլինի կրթական գործընթացն իրականացնել բնականոն հունով:

*ՀՀ Կառավարության որոշումը՝ Ձովաշենի դպրոցի վերակազմակերպման մասին*

Ձովաշենի դպրոցը վերակազմակերպվել է՝ միանալով Հատիսի դպրոցին:

Ձովաշենի դպրոցի վերակազմակերպման հիմնավորման մեջ նշված է, որ համայնքի բնակիչների և դպրոցահասակ երեխաների թվաքանակի նվազեցման պատճառով դպրոցում խաթարվում է բնականոն հանրակրթական ուսուցումը, դասարանները կոմպլեկտավորում են ոչ լիարժեք: Որոշման կայացման պահին Ձովաշենի դպրոցում սովորում էին **9** աշակերտ, ուսուցիչների, վարչական և սպասարկման անձնակազմի թվաքանակը **12** էր:

Կառավարության որոշման մեջ նշված է նաև, որ օպտիմալացման արդյունքում կկրճատվի շուրջ **15** աշխատակից:

Դպրոցների միջև հեռավորությունը շուրջ **6** կմ է: Ձովաշենի դպրոցի **9** աշակերտի՝ Հատիսի դպրոց տեղափոխության համար նախատեսվում է իրավահաջորդ դպրոցում ավելացնել վարորդի 1 հաստիք և ձեռք բերել տրանսպորտային միջոց՝ միավորման արդյունքում տնտեսված միջոցների հաշվին:

Որոշմամբ նախատեսված փոփոխությունների ակնկալվող արդյունքն է՝ «... վերոնշյալ ՊՈԱԿ-ների միացման արդյունքում՝ **ապահովել դրանց գործունեության արդյունավետության բարձրացումը և պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործումը»:**

Հատկանշական է այն հանգամանքը, որ Կառավարության համապատասխան որոշման առարկությունների և առաջարկությունների ամփոփաթերթում, ինչպես Փյունիկի դպրոցի պարագայում, տեղ է գտել ՀՀ ԿԳՆ առարկությունը: Դրանում նշված է. «ՀՀ կառավարության հանձնարարականի համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ՀՀ մարզպետարանների հետ համատեղ քննարկում են հանրապետությունում գործող քաղաքային դպրոցների օպտիմալացման հարցը, ինչի համար ներկայումս **նպատակահարմար չենք գտնում այս փուլում անդրադառնալ գյուղական դպրոցների վերակազմակերպումներին և առաջարկում ենք շրջանառությունից հանել** «ՀՀ Կոտայքի մարզի Ձովաշենի հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու և գույք հետ վերցնելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը»:

Սակայն ԿԳՆ-ն այս առարկությունը չի ընդունել՝ «... **հաշվի առնելով դպրոցի ֆինանսական վիճակի բարելավման և աշակերտներին տրամադրվող կրթության որակի բարձրացման անհրաժեշտությունը»:**

ՀՀ Կոտայքի մարզպետարանը ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ առաջարկություններ և դիտողություններ չի ներկայացրել:

---

[31] ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի N1039-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշումը:

[32] ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի N1039-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին ՀՀ կառավարության որոշման նախագիծը:

*ՀՀ Կառավարության որոշումը՝ Փարաքարի դպրոցի վերակազմակերպման մասին*

Փարաքարի հիմնական դպրոցը վերակազմակերպվել է՝ միանալով Փարաքարի միջնակարգ դպրոցին: Փարաքարի հիմնական դպրոցի իրավահաջորդը Փարաքարի միջնակարգ դպրոցն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները:

Կառավարության որոշման մեջ նշված է, որ Փարաքար համայնքի վարչական տարածքում գործում է 3 հանրակրթական դպրոց՝ «Փարաքարի միջնակարգ դպրոց», «Փարաքարի հիմնական դպրոց» և «Թաիրովի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունները:

Փարաքարի միջնակարգ դպրոցը և Փարաքարի հիմնական դպրոցը գտնվում են գյուղի կենտրոնական մասում և նրանց շենքերի միջև հեռավորությունն առնվազն **300** մետր է: Թաիրովի միջնակարգ դպրոցը գտնվում է Թաիրով գյուղում և ավելի քան 1 կմ հեռու է նշված դպրոցներից:

Վերջին տասնամյակում էականորեն նվազել է Փարաքար համայնքում աշակերտների թիվը, ինչի արդյունքում Փարաքարի միջնակարգ դպրոցում և Փարաքարի հիմնական դպրոցում նվազել է աշակերտների թիվը:

2016-2017 ուս. տարում Փարաքարի միջնակարգ դպրոցում սովորում էին **405** աշակերտ, իսկ Փարաքարի հիմնական դպրոցում՝ **190** աշակերտ:

Փարաքարի միջնակարգ դպրոցին ամրացված ուսումնական մասնաշենքի հզորությունը **960** աշակերտների համար է, իսկ Փարաքարի հիմնական դպրոցինը՝ **350**:

Երկու դպրոցներում էլ աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կազմակերպելու նպատակով առաջարկվում է Փարաքարի հիմնական դպրոցը միացման ձևով վերակազմակերպել՝ այն միացնելով Փարաքարի միջնակարգ դպրոցին, որը, **հետագայում աշակերտական համակազմ ձևավորվելու արդյունքում, անխափան կիրականացնի տվյալ տարածքի սովորողների բնականոն ուսումնական գործընթացը:**

Կառավարության որոշման նախագիծը մշակվել է ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կողմից:

Որոշմամբ նախատեսված փոփոխությունների ակնկալվող արդյունքն է. Վերոնշյալ դպրոցների միացման արդյունքում՝ **ապահովել դրանց գործունեության արդյունավետության բարձրացումը և պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործումը:**

*ՀՀ Կառավարության որոշումը՝ Երևանի N23 դպրոցի վերակազմակերպման մասին*

Երևանի N23 դպրոցը վերակազմակերպվել է՝ միացվելով Երևանի N5 հիմնական դպրոցին: N23 դպրոցի իրավահաջորդը N5 դպրոցն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները՝ փոխանցման ակտին համապատասխան:

Կառավարության որոշման մեջ նշված է նաև. առաջարկել Երևանի քաղաքապետին՝ որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում ապահովել՝ հանձնվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, հաստատել գույքի կազմը, արժեքը, միացման պայմանագրերը և փոխանցման ակտերը, ինչպես նաև՝ սովորողների՝ ուսումնառության բնականոն գործընթացը:

Դպրոցների վերակազմակերպման անհրաժեշտությունը պայմանավորված է **ուսումնական հաստատություններում աշակերտների թվի նվազմամբ և ուսումնական տարածքների (շենք) օպտիմալ օգտագործմամբ:**

N23 հիմնական դպրոցում ուսումնառում է **68** սովորող, սակայն դպրոցը նախատեսված է **365** սովորողի համար:

Որոշման մեջ նշված է, որ դպրոցների **վերակազմակերպման արդյունքում հնարավորություն կստեղծվի ուսումնական տարածքների օպտիմալ օգտագործման համար, ինչի արդյունքում միացվող դպրոցներում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կկազմակերպվի առավել արդյունավետ, ինչն էլ իր հերթին կնպաստի կրթության որակի բարձրացմանը:**

Միացման արդյունքում, նոր հաստիքացուցակի հաստատմամբ **հնարավոր են հաստիքների կրճատումներ, մասնավորապես՝ վարչական և ուսումնաօժանդակ, պայմանավորված նոր**

**ուսումնական տարվա սկզբին արտադրական ծավալների փոփոխմամբ (աշակերտների թվի փոփոխություն):**

Որոշմամբ նախատեսված փոփոխությունների ակնկալվող արդյունքն է՝ **«Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով»:**

*ՀՀ Կառավարության որոշումը՝ Երևանի N43 դպրոցի վերակազմակերպման մասին*

Երևանի N43 ավագ դպրոցը վերակազմակերպվել է՝ միանալով N16 ավագ դպրոցին: N43 դպրոցի իրավահաջորդը N16 դպրոցն է, և վերջինիս են անցնում միացված իրավաբանական անձի իրավունքներն ու պարտականությունները:

**Վերակազմակերպման հետ կապված ծախսերը կատարվելու են N16 դպրոցի միջոցների հաշվին:**

ՀՀ ԿԳ նախարարը որոշումն ուժի մեջ մտնելուց հետո երկամսյա ժամկետում պետք է ապահովեր միացման արդյունքում իրավահաջորդ դպրոցին հանձնվող գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև՝ սովորողների ուսումնառության բնականոն գործընթացը:

N43 դպրոցում սովորում է **253** աշակերտ, մինչդեռ դպրոցի շենքը նախատեսված է **800** սովորողի համար:

N16 դպրոցում սովորում է **76** աշակերտ, սակայն դպրոցի շենքը նախատեսված է **575** սովորողի համար:

Դպրոցների վերակազմակերպման անհրաժեշտությունը **պայմանավորված է ուսումնական հաստատություններում աշակերտների թվի նվազմամբ և ուսումնական տարածքների (շենք) օպտիմալ օգտագործմամբ:**

Կառավարության որոշմամբ նախատեսված էր N16 դպրոցի շենքն անժամկետ, անհատույց օգտագործման իրավունքով ամրացնել «Գնահատման և թեստավորման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործման համար:

Որպես հիմնավորում, նշված է, որ ՀՀ ԿԳՆ նախատեսում է բարձրագույն ուսումնական հաստատությունների ընդունելության քննական համակարգում կատարել բարեփոխումներ, ինչը կհանգեցնի տարբեր ժամանակահատվածներում «Գնահատման և թեստավորման կենտրոն»-ի կողմից իրականացնելու ընդունելության քննություններ: Նշված քննությունների իրականացման բարձր որակը ապահովելու, ինչպես նաև՝ առարկայական մասնագետների համար աշխատանքային պայմաններ ապահովելու նպատակով, անհրաժեշտություն է առաջացել կազմակերպությանը ամրացնել լրացուցիչ տարածքներ:

Որոշման մեջ նշված է, որ դպրոցների վերակազմակերպման արդյունքում **հնարավորություն կստեղծվի ուսումնական տարածքների օպտիմալ օգտագործման համար, ինչի արդյունքում միացվող դպրոցներում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացը կկազմակերպվի առավել արդյունավետ, ինչն էլ իր հերթին կնպաստի կրթության որակի բարձրացմանը:**

Միացման արդյունքում, նոր հաստիքացուցակի հաստատմամբ **հնարավոր են հաստիքների կրճատումներ, մասնավորապես՝ վարչական և ուսումնաօժանդակ, պայմանավորված նոր ուսումնական տարվա սկզբին արտադրական ծավալների փոփոխմամբ (աշակերտների թվի փոփոխություն):**

Որոշմամբ նախատեսված փոփոխությունների ակնկալվող արդյունքն է՝ **«Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով»:**

Ի տարբերություն վերակազմակերպված այլ դպրոցների, N43 դպրոցի դեպքն առանձնահատուկ է նրանով, որ իրավահաջորդ (N16) դպրոցի աշխատանքային կոլեկտիվն ու աշակերտներն են տեղափոխվել «փակվող» դպրոց, ոչ թե հակառակը (ինչպես սովորաբար տեղի էր ունենում):

Այդ մոտեցման հիմնական պատճառն այն էր, որ N16 դպրոցում ուսուցման փորձնական ծրագիր էր իրականացվում, որի հեղինակներից մեկը N16 դպրոցի տնօրենն էր: Փորձնական

ծրագրի պահպանման և շարունակականության ապահովման համար, ըստ հարցվողների, որոշում է կայացվել իրավահաջորդ ճանաչել հենց այս դպրոցին:

Իրավահաջորդ N16 դպրոցի շենքը հանձնվել է «Գնահատման և թեստավորման կենտրոն»-ին, և կոլեկտիվն ու աշակերտները տեղափոխվել են N43 դպրոցի շենք:

Հետաքրքիր է, որ իրավահաջորդ՝ N16 դպրոցի թե՛ անձնակազմը, թե՛ աշակերտները փոքրաթիվ էին՝ համեմատած վերակազմակերպված դպրոցի անձնակազմի և աշակերտների թվաքանակի: Այդ պայմաններում, չնայած իրավական կարգավիճակին՝ իրավահաջորդությանը, հենց N16 դպրոցի կոլեկտիվն ու աշակերտներն էին «հարկադրված» ինտեգրվելու վերակազմակերպված դպրոցի միջավայրին:

Սպասելի էր նաև, որ վերակազմակերպման գործընթացի հետևանքներն ավելի շատ պետք է կրեին տեղափոխված անձինք:

Իրավիճակի այս յուրահատկությամբ պայմանավորված՝ դիտորդական խումբը որոշում է կայացրել հետազոտության թիրախ խմբեր դիտարկել իրավահաջորդ՝ N16 դպրոցի կոլեկտիվին և աշակերտների ծնողներին: Հարցումներն իրականացվել են այս խմբերի ներկայացուցիչների հետ:

## Բերդի վարժարան

*Վարժարանի վերակազմակերպման որոշման կայացումն ու դրա մասին իրազեկումը*

Նախքան Բերդի Վարժարանի վերակազմակերպման որոշման կայացումը, թե՛ ծնողների ու աշակերտների, թե՛ մանկավարժական կոլեկտիվի կարծիքը որևէ կերպ չի քննարկվել կամ ուսումնասիրվել: Վարժարանում չի իրականացվել ուսումնասիրություն կամ գնահատում՝ պարզելու վերակազմակերպման նպատակահարմարությունը, սկզբունքները կամ պայմանները:

Վարժարանի վերակազմակերպման մասին աշակերտներն ու նրանց ծնողներն իրազեկվել են 2017թ. օգոստոսի վերջին՝ հիմնականում մանկավարժական կոլեկտիվի և/կամ համայնքի այլ անդամների, ծանոթների կողմից: Որոշման մասին ուսուցիչներին տեղեկացրել է Վարժարանի տնօրինությունը՝ գրեթե նույն ժամանակահատվածում:

Վարժարանի աշակերտների ծնողները դժգոհություն են հայտնել առ այն, որ մինչև դպրոցի փակման վերջին պահը լիարժեք, հստակ տեղեկություն չի տրվել այն մասին, թե որ փուլում է դպրոցի վերակազմակերպման գործընթացը: Ավելին, Վարժարանի մանկավարժական կոլեկտիվը պարբերաբար հորդորել է ծնողներին սպասել, երեխաներին չտեղափոխել այլ դպրոցներ:

Ծնողների հիմնական դժգոհությունն էր, որ եթե ժամանակին իմանային, որ դպրոցը *«...հաստատ փակվում է և պետք է կցվի ավագին, ավելի շուտ կվերցնեին իրենց երեխայի թղթերն ու կտեղափոխեին այլ դպրոց»:* Անորոշության և սպասողական վիճակի պատճառով աշակերտներն «ավտոմատ կերպով» համարվել են իրավահաջորդ ավագ դպրոցի սովորողներ: Մինչդեռ ծնողները նշում էին, որ բավարար ժամանակ ունենալու դեպքում որևէ այլ դպրոց կընտրեին իրենց երեխայի համար:

- *«Մեզ մինչև վերջ չէին պատմում ճշմարտությունը, մինչև սեպտեմբերի վերջ գնում էինք Վարժարան»:*
- *«Մեզնից թաքցնում էին իրական որոշումները, մինչև վերջին պահը»:*

*(Ծնողներ)*

Հետաքրքիր է, որ հարցված ծնողների մի մասը համաձայնել է այն մտքի հետ, որ Վարժարանը վերակազմակերպելու կարիք/անհրաժեշտություն կար.

- *«Վարժարանն ու բոլոր դպրոցները (հատկապես ավագ դպրոցը) անընդհատ աշակերտաթվի կռվի մեջ էին, կարծում եմ՝ օպտիմալացումը լուծեց այդ խնդիրը»,*
- *«Ինչ-որ տեղ արդեն ավելորդ էր անիմաստ մրցակցությունը դպրոցների միջև՝ աշակերտ խլելու համար»,*
- *«Վարժարանն ուներ արժանի և փորձառու ուսուցիչներ, սակայն որպես ծնող այժմ ավելի գոհ եմ իմ երեխայի կրթական գործընթացից: Ավելի մեծ դպրոց է, իրեն ավելի լավ է զգում»:*

*(Ծնողներ)*

Այնուամենայնիվ, հարցված ծնողների մեծամասնությունը նշել է, որ Վարժարանը վերակազմակերպելու կարիք/անհրաժեշտություն չկար՝ հիմնավորելով այդ տեսակետը կրթության որակից ունեցած բավարարվածությամբ և Վարժարանի մանկավարժական կոլեկտիվի մասնագիտական բարձր պատրաստվածությամբ/արհեստավարժությամբ:

Վարժարանի մանկավարժական կոլեկտիվը դիմում-նամակ է ներկայացրել ԿԳՆ՝ հիմնավորելով Վարժարանի պահպանման կարևորությունը, սակայն այդ գործողությունը որևէ արդյունք չի տվել: Հարցման մասնակից գրեթե բոլոր ուսուցիչներն իրենց անհամաձայնությունն են հայտնել Վարժարանը վերակազմակերպելու՝ Կառավարության համապատասխան որոշման և դրանում բերված հիմնավորումների հետ:

- *«Ընդհանրական հիմնավորումներ են, հաշվի չեն առնվել տարածքային առանձնահատկությունները: Եթե մի շրջանում օպտիմալացումը կարող է դրական լինել, ապա մեկ այլ շրջանում լրիվ բացասական հետևանքներ է ունենում»:*
- *«Կարծում եմ՝ Կառավարությունը միայն մտածում է բյուջեն խնայելու մասին, սակայն ճիշտ տարբերակներ չի ընտրում: Մեր կամ ընդհանրապես՝ սահմանամերձ շրջանում կրթօջախ փակելը շատ վատ հետևանքներ ունի»:*
- *«Կառավարության կողմից անգամ մինչև որոշում կայացնելը չեն եկել գնահատողներ: Ես համակողմանի չեմ համարում այդ որոշումը և ոչ էլ արդարացի»:*

*(Ուսուցիչներ)*

***Կրթության որակ և կազմակերպում***

Աշակերտների ծնողներին հարց է ուղղվել այն մասին, թե ինչպես են գնահատում կրթության որակն իրենց նախկին (վերակազմակերպված) և ներկայիս դպրոցում[33]: Թե նախկին, թե ներկայիս դպրոցում կրթության որակը գնահատվել է որպես «Հիմնականում լավ»՝ հարցվածների գերակշիռ մեծամասնության կողմից (17 ծնող՝ 20-ից): Կրթության որակի փոփոխության մասին (թե դրական, թե բացասական) որևէ պատասխան չի հնչել:

6 աշակերտների ծնողներ նշել են, որ Վարժարանում իրենց երեխաները կոմպլեկտավորված դասարանում էին սովորում: Ներկայումս այս երեխաները, անկախ իրենց նախընտրած դպրոցից, սովորում են ոչ կոմպլեկտավորված դասարաններում:

Հարցված ուսուցիչների համար հիմնականում պարզ չէ, թե ինչպես է ապահովվելու Կառավարության որոշմամբ նախատեսված փոփոխությունների ակնկալվող արդյունքը. այն է՝ «Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով»:

- *«Ուսումնական գործընթացի կազմակերպման և որակի բարձրացման համար ոչ մի տեսանելի քայլ չի արվել մինչև այսօր»,*
- *«Աշակերտներից շատերը դժվար կհարմարվեն նոր կոլեկտիվին և նոր ուսուցիչներին, ինչը կբերի ուսումնական գործընթացի հապաղման»,*
- *«Երեխաների կամքին հակառակ պարտադրված միացումն այլ դպրոցի չէր կարող նպաստել կրթական որակի բարձրացմանը»,*
- *«Կրթության որակը բարձրացնելու համար ոչինչ չի արվել, մի շենքից տարել են մեկ այլ շենք ու փաստ չէ, որ ավելի լավ մասնագետների մոտ»,*
- *«Ոչ մի ուսումնասիրություն չի արվել, և վստահ եմ, որ ուսումնական գործընթացը շահում է լավ մանկավարժների առկայությամբ, իսկ վարժարանի շատ արժանի ուսուցիչներ այսօր իրենց տեղում չեն»:*

*(Ուսուցիչներ)*

Այնուամենայնիվ, ուսուցիչներից մի քանիսը նշել են դրական հետևանքների հնարավորության մասին:

- *«Վարժարանը փոքրաքանակ դպրոց էր և նրա միացումն ավագին գուցե ավելի առողջ ու ճիշտ միջավայր ապահովի աշակերտների համար»,*
- *«Ավագ դպրոցն ունի լաբորատորիաներ և շատ այլ ծրագրերում երեխաների մասնակցությունն ապահովելու հնարավորություն, գուցե դա նպաստի կրթական որակի զարգացմանը»,*
- *«Երեխաները կսովորեն ավելի մեծ և լիարժեք դասարաններում, և գուցե դա նպաստի կրթության որակի զարգացմանը»,*
- *«Ինչ-որ տեղ հնարավոր է: Այսօր ավագ դպրոցի բոլոր պայմաններն ավելի լավն են, քան մերը: Գուցե դա նպաստի ուսումնական գործընթացի որակի բարձրացմանը»:*

*(Ուսուցիչներ)*

Բերդի Վարժարանի հետ կապված հիմնական խնդիրներից է կրթության բովանդակության և պայմանների փոփոխությունը՝ սովորողների և նրանց ընտանիքների ակնկալիքների համեմատ: Մասնավորապես, Վարժարան ընդունված սովորողների մի մասը նաև մասնագիտություն ստանալու ակնկալիք ուներ: Մինչդեռ ավագ դպրոցում կրթական ծրագրերը տարբերվում են՝ առավելապես մասնագիտական ուսուցման ուղղվածություն ունեցող Վարժարանի ծրագրերից:

***Շենքային և գույքային պայմաններ***

Ընդհանուր առմամբ, հարցվողներն ավելի բարձր, դրական են գնահատել իրենց երեխաների ներկայիս (ոչ միայն իրավահաջորդ) դպրոցի շենքային պայմանները՝ համեմատած Վարժարանի համանման պայմանների հետ:

---

[33] Գնահատման սանդղակն է. 1. Գերազանց, 2. Հիմնականում լավ, 3. Բավարար, 4. Հիմնականում վատ, 5. Շատ վատ:

«Ձեր կարծիքով, այժմյան դպրոցի շենքային պայմաններն ավելի լա՞վն են՝ համեմատած նախկին (փակված) դպրոցի հետ» հարցին ի պատասխան հարցված գրեթե բոլոր ծնողները (19-ը՝ 20-ից) տվել են «միանշանակ այո» կամ «այո» պատասխանը:

Հարցված 11 ուսուցիչներից 10-ը ևս համաձայնել են, որ իրավահաջորդ ճանաչված դպրոցի շենքային պայմաններն ավելի բարենպաստ են:

- *«Ավագ դպրոցն ունի մարզահրապարակ, մարզասրահ, լաբորատորիաներ և այլ հարմարություններ»,*
- *«Ավագ դպրոցը տիպային դպրոց է, վերանորոգվել է վերջին 10 տարում և ավելի լավ վիճակում է»:*

*(Ուսուցիչներ)*

Հարցված 20 ծնողներից 18-ը նշել են, որ Վարժարանի շենքն ուներ հիմնանորոգման կարիք: Նմանատիպ պատասխան են տվել նաև հարցված 11 ուսուցիչներից 10-ը:

Ծնողների որոշ, առավել տիպական, կրկնվող կարծիքները՝ Վարժարանի շենքային պայմանների վերաբերյալ, ներկայացված են ստորև.

- *«Վարժարանի երկհարկանի շենքը միանշանակ նորոգման կարիք ուներ: Որոշ տեղերում քանդված էր մանրահատակը: Պատուհանները լավ վիճակում չէին: Ջեռուցման խնդիր էլ կար»,*
- *«Չունեինք բուֆետ, լաբորատորիա և այլ շենքային պայմաններ»,*
- *«Վարժարանն ուներ ջերմամատակարարման խնդիր»,*
- *«Դպրոցի շենքը տիպային չէ, նախատեսված չի եղել դպրոցի համար, սակայն հարմարեցված և մասամբ վերանորոգված է եղել»,*
- *«Իհարկե, 3-րդ դպրոցն էլ, ավագն էլ՝ Վարժարանի համեմատ, ավելի լավ շենքային պայմաններ ունեն և ավելի լավ տեխնիկական ապահովվածություն. մարզադաշտ, լաբորատորիաներ, համակարգչային սենյակ, և այլն»,*
- *«Իհարկե, նոր կրթօջախն էլ ունի նորոգման խնդիր, բայց համեմատության մեջ դնելով՝ անհամեմատ առավել լավ վիճակում են»,*
- *«Ավագ դպրոցի շենքը վերջերս վերանորոգվել էր, և ունի ավելի լավ պայմաններ»:*

*(Ծնողներ)*

***Աշակերտների՝ դեպի իրավահաջորդ դպրոց տեղաշարժի հետ կապված հնարավոր խնդիրները***

Հետազոտության ընտրանքում ներառված 20 աշակերտները տեղափոխվել են հետևյալ կրթական հաստատությունները.

- 9 աշակերտ՝ Բերդի ավագ դպրոց (իրավահաջորդ),
- 5 աշակերտ՝ Բերդի N3 հիմնական դպրոց,
- 3 աշակերտ՝ Բերդի N1 հիմնական դպրոց,
- 3 աշակերտ՝ Բերդի պետական քոլեջ:

Բերդի Վարժարանի և իրավահաջորդ ավագ դպրոցի միջև հեռավորությունը շուրջ 300 մետր է, ինչի պատճառով իրավահաջորդ դպրոց տեղափոխված աշակերտների տրանսպորտային տեղաշարժի հետ կապված խնդիրներ չեն առաջացել: Մյուս կրթական հաստատությունները ևս բավական մոտ են տեղակայված Վարժարանին: Բերդի N 1 հիմնական դպրոցն, օրինակ, Վարժարանից մոտ 250 մետր հեռավորության վրա է:

Հարցման մասնակիցները չեն մատնանշել Վարժարանի վերակազմակերպման արդյունքում առաջ եկած այլ, հավելյալ ծախսեր:

Այնուամենայնիվ, փակված Վարժարանի փոխարեն նոր դպրոց հասնելու ժամանակը փոքր-ինչ աճել է: Եթե նախկինում ոտքով Վարժարան գնալու և վերադառնալու համար աշակերտները միջինում ծախսում էին մոտ 33 րոպե, ապա հիմա նոր դպրոց հասնելու և տուն վերադառնալու համար միջինում 52 րոպե են ծախսում՝ մոտ 20 րոպեով ավելի շատ:

***Աշակերտների հոգեբանական և սոցիալական ադապտացիայի խնդիրները***

Որպես դպրոցի վերակազմակերպման բացասական հետևանք՝ հարցված ծնողներից յուրաքանչյուր երկրորդը նշել է երեխաների ադապտացիայի դժվարությունների մասին:

- *«Երեխան դժվար հարմարվեց հոսքային կրթությանը՝ չգիտեր, թե որ հոսք նստի»:*
- *«Նոր կրթօջախի համակարգը շատ էական տարբերվում էր քոլեջի համակարգից: Սկզբում դժվարություններ էին առաջացել՝ հիմնականում կրթական պահանջների հետ կապված»:*
- *«Սկզբում պահանջներին չէր հարմարվում, սովոր չէր մեծ դասարանին: Փոխվել էին ուսուցիչների պահանջները, բայց արդեն մի քանի ամիս անց հարմարվեց»:*
- *«Երեխան դժվարանում էր կոմպլեկտավորված փոքր դասարանից անցում կատարելու մեծ դպրոց, բայց հիմա խնդիրներ չկան»:*
- *«Որոշ ուսուցիչների հետ դեռևս չի հարմարվում երեխան, իսկ երեխաների հետ ամեն ինչ կարգին է»:*
- *«Կրթության նկատմամբ ավագ դպրոցի ուսուցիչներն ավելի պահանջկոտ են, դա նկատելի է»:*

*(Ծնողներ)*

Ներկայում՝ ըստ ծնողների, երեխաների ադապտացիայի հետ կապված էական խնդիրներ չեն մնացել: Վերոնշյալ խնդիրները հաղթահարվել են թե՛ Վարժարանի, թե՛ նոր դպրոցների ուսուցիչների աջակցությամբ: Հարցված գրեթե բոլոր ծնողները գոհունակություն են հայտնել իրենց երեխաների նկատմամբ ցուցաբերված հոգատար վերաբերմունքից:

***Դպրոցների միջև մրցակցության չեզոքացման բացասական ազդեցությունը***

Հարցման մասնակից շատ ծնողներ նշել են, որ Վարժարանի առկայությունը Բերդի դպրոցների միջև ընտրություն կատարելու հնարավորություն էր տալիս, քանի որ Վարժարանը նաև ավագ դպրոցի գործառույթներ ուներ: Աշակերտներն ու նրանց ծնողները կարող էին ուսումնառության համար ընտրել փաստացի գործող 2 ավագ դպրոցներից մեկը:

Ուսումը շարունակելու մյուս հնարավոր տարբերակը Բերդի պետական քոլեջն է, որն ունի երկու մասնագիտական ուղղվածություն՝ մենեջմենթ և տնտեսագիտություն: Սակայն, եթե հիմնական դպրոցի շրջանավարտի համար դրանք նախընտրելի մասնագիտություններ չեն, մնում է միայն մեկ տարբերակ՝ Բերդի ավագ դպրոցը:

Այսպիսով, հիմնական դպրոցի շրջանավարտները զրկվել են ավագ դպրոցի մի կարևոր այլընտրանքից:

Ավագ դպրոցի աշակերտների ծնողները նշել են, որ ակնհայտ է ավագ դպրոցի ուսուցիչների վարքի, աշակերտների նկատմամբ վերաբերմունքի բացասական փոփոխությունը: Եթե նախկինում ուսուցիչները կաշկանդված էին այն հանգամանքով, որ «դժգոհ» աշակերտները կարող են տեղափոխվել Վարժարան, ապա այժմ այդ զսպող գործոնը չկա: Դպրոցների միջև մրցակցության բացակայության պայմաններում ուսուցիչները աշակերտների նկատմամբ երբեմն կոպիտ, անհարգալից վերաբերմունք են դրսևորում, ինչը համեմատաբար հազվադեպ էր Վարժարանի գործառության ժամանակ:

Դպրոցների ընտրության հարցում կարևոր նշանակություն ունի նաև ծնողների վերաբերմունքը մանկավարժական կոլեկտիվի նկատմամբ: Հարցվողները նշել են, որ Վարժարանի առնվազն 15 աշակերտների ծնողներ նրանց տեղափոխել են այլ (ոչ իրավահաջորդ) դպրոցներ, քանի որ բացասական դիրքորոշում ունեին իրավահաջորդ՝ ավագ դպրոցի կոլեկտիվի նկատմամբ:

- *«Օրինակ ես հարմար չեմ գտել, որ իմ երեխան շարունակի կրթությունը ավագ դպրոցում և տեղափոխել եմ իմ երեխային այլ դպրոց: Հիմնական պատճառն այն է, որ ավագ դպրոցի որոշ ուսուցիչներ ինձ չեն բավարարում»,*
- *«Ավագ դպրոցում կան մանկավարժներ, ումից խուսափում էի, բայց այժմ փորձում ենք այդ խնդիրը հաղթահարել»,*
- *«Անձնական խնդիրների (համակրանք-հակակրանք) հարց է»:*

*(Ծնողներ)*

Այսպիսով, ուսումնական հաստատությունների միջև մրցակցության չեզոքացումն արդեն իսկ հանգեցրել է բացասական հետևանքների: Կարելի է կանխատեսել, որ կրթության որակի վրա ևս

այն չի կարող դրական ազդեցություն ունենալ, քանի որ սովորողներն այժմ չունեն ավագ դպրոցի այլընտրանք:

*Գործազրկությունը և այլ սոցիալական հետևանքները*

Վարժարանի վերակազմակերպումը հանգեցրել է սոցիալական լարվածության որոշ դրսևորումների: Մասնավորապես, Վարժարանի նախկին աշխատակիցների մի մասը աշխատանքի է տեղավորվել Բերդի տարբեր կրթական հաստատություններում: Աշխատանքային կոլեկտիվներում նոր գործընկերների ներառումը կոնֆլիկտային իրավիճակներ է ստեղծել, քանի որ տնօրենները կանգնել են սահմանափակ ժամաքանակները վերաբաշխելու խնդրի առջև: Բացի այդ, սկզբնապես «համեստ» դրույքով աշխատանքի ընդունված ուսուցիչները ներկայումս պահանջում են իրենց մանկավարժական ստաժին համարժեք ծանրաբեռնվածություն, ինչը կրկին լարվածություն է ստեղծում թե դպրոցի ղեկավարության, թե գործընկերների հետ հարաբերություններում:

Հարցված ծնողները, խոսելով Վարժարանի փակման բացասական հետևանքների մասին՝ առավել հաճախ նշել են գործազրկության և Վարժարանի կայացած, փորձառու կոլեկտիվի փլուզման մասին: Ծնողները նույնպես դիտարկումներ են ներկայացրել կոնֆլիկտային երևույթների վերաբերյալ:

- *«Փոքրիկ քաղաքում Վարժարանի փակվելը թշնամանքի պատճառ դարձավ, գործազրկությունը ավելացրեց»,*
- *«Օպտիմալացումը լուծում է բյուջեի խնդիր, բայց, իմ կարծիքով, շատ մարդկանց մի փոքրիկ քաղաքում թշնամացրեց, և դա շատ բացասական է»:*

*(Ծնողներ)*

Բերդի վարժարանի վարչական աշխատակազմը բաղկացած էր 3 անձից՝ տնօրեն և 2 փոխտնօրեններ: Ներկայումս տնօրենը գործազուրկ է, երկու փոխտնօրեններից մեկն աշխատում է Բերդի դպրոցներից մեկում, իսկ մյուս փոխտնօրենը՝ այլ բնագավառում (ոչ դպրոցում):

Վերակազմակերպման գործընթացի մեկնարկին Վարժարանում աշխատում էին 17 ուսուցիչ և մանկավարժական այլ աշխատողներ: Ներկայումս աշխատանք ունեն նրանցից 14-ը:

Վերակազմակերպման գործընթացի մեկնարկին Վարժարանի ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի թվաքանակն էր՝ 7: Ներկայումս աշխատանք ունեն նրանցից միայն 2-ը[34]:

Վարժարանի նախկին ուսուցիչների աշխատանքային ներկայիս զբաղվածությունը համարժեք չէ նախկինին: Թեև դրական է այն հանգամանքը, որ հարցված 11 ուսուցիչներն էլ ներկայումս աշխատանք ունեն, սակայն նրանցից 9-ն են շարունակում աշխատել որպես ուսուցիչ: Մյուս 2 անձանց ներկայիս զբաղվածությունը թեև դասավանդում չի ենթադրում, սակայն կրկին սերտորեն կապված է կրթական միջավայրի հետ (հիմնականում՝ կրթության կազմակերպման կամ վարչարարության):

Ստորև բերված աղյուսակում ներկայացված է աշխատող ուսուցիչների ծանրաբեռնվածության (դրույքի) փոփոխությունը:

**Աղյուսակ 4. Ուսուցիչների ծանրաբեռնվածությունը (դրույքը) Վարժարանում և ներկայիս դպրոցում:**

| Հարցվողի հ/հ-ը | Ուսուցչի դրույքը՝ Վարժարանում | Ուսուցչի դրույքը՝ ներկայիս աշխատավայրում (նոր դպրոցում) |
|---|---|---|
| 1 | 0.75 | 0.5 |
| 2 | 0.75 | 0.5 |
| 3 | 0.75 | 0.75 |
| 4 | 0.5 | 0.5 |
| 5 | 0.75 | 1 |

[34] Ներկայացված են դպրոցի անձնակազմի թվաքանակի վերաբերյալ հարցվողների տրամադրած տվյալները, որոնք փոքր-ինչ տարբերվում են Կառավարության համապատասխան որոշման մեջ բերված տվյալներից:

| | | |
|---|---|---|
| 6 | 0.75 | 0.5 |
| 7 | 0.5 | 0.75 |
| 8 | 1 | 0.75 |
| 9 | 1 | 0.25 |

Ինչպես տեսնում ենք բերված աղյուսակից, ուսուցիչների ծանրաբեռնվածությունը (հետևաբար՝ նաև աշխատավարձը) հիմնականում նվազել է:

- Չորս ուսուցչի ծանրաբեռնվածությունը նվազել է 0.25 դրույքի չափով,
- Մի ուսուցչի ծանրաբեռնվածությունը նվազել է 0.75 դրույքի չափով,
- Երկու ուսուցչի ծանրաբեռնվածությունը նույնն է մնացել,
- Երկու ուսուցչի ծանրաբեռնվածությունն աճել է 0.25 դրույքի չափով:

Օրինակ, Վարժարանում լրիվ դրույքով աշխատող ուսուցիչներից մեկն այժմ 5 դասաժամ ունի Բերդի հիմնական դպրոցներից մեկում, և 8 դասաժամ՝ մեկ այլ հիմնական դպրոցում: Բացի այն հանգամանքը, որ զբաղվածությունն ու աշխատավարձը կրճատվել է էականորեն, այժմ այդ ուսուցիչը ստիպված է միաժամանակ աշխատել երկու տարբեր, իր համար նոր հաստատություններում, տարբեր աշխատանքային կոլեկտիվներում: Բնականաբար, սա չի նպաստում ուսուցչի մասնագիտական կարողությունների արդյունավետ կիրառությանը: Կանխատեսելի է, որ այս առկախված իրավիճակը չի նպաստելու նաև ուսուցչի մասնագիտական աճին:

Վարժարանի նախկին ուսուցիչները նշել են, որ աշխատանք գտնելու հարցում հիմնականում աջակցություն չեն ստացել պետական կամ համայնքային մարմինների կողմից:

Մանկավարժական կոլեկտիվի՝ հարցմանը մասնակցած անձանցից 2-ը հայտնել են, որ աշխատավայրի փոփոխության բերումով ավելացել են տրանսպորտի և սննդի (աշխատանքային ընդմիջման ժամին) ծախսեր:

Օրինակ, ուսուցիչներից մեկի նոր աշխատավայրը (գյուղերից մեկի դպրոցը) Բերդից 35 կմ հեռավորության վրա է: Ուսուցիչն ամեն օր մոտ 70 կմ ճանապարհ է անցնում՝ աշխատանքի հասնելու և վերադառնալու համար:

Ուսուցիչներից մյուսը մանկավարժական աշխատանքը շարունակելու համար մշտական բնակության է տեղափոխվել հարևան գյուղերից մեկը՝ մոտ 10 կմ հեռավորության վրա:

Վարժարանի աշխատակազմի նախկին աշխատողներից մեկը (ոչ հարցման մասնակից)՝ Բերդից տեղափոխվել է այլ քաղաք՝ աշխատանքը կորցնելու պատճառով:

Եվս երկու ուսուցիչ նշել են, որ նախկինում աշխատում էին համատեղությամբ (Վարժարանում և այլ դպրոցում): Ներկայումս պահպանվել է մեկ աշխատատեղը՝ դրանից բխող ֆինանսական դժվարություններով:

## Փյունիկի դպրոց

*Դպրոցի վերակազմակերպման որոշման կայացումն ու դրա մասին իրազեկումը*

Նախքան Փյունիկի դպրոցի վերակազմակերպման որոշման կայացումը, թե՛ ծնողների ու աշակերտների, թե՛ մանկավարժական կոլեկտիվի կարծիքը որևէ կերպ չի քննարկվել կամ ուսումնասիրվել: Դպրոցում չի իրականացվել ուսումնասիրություն կամ գնահատում՝ պարզելու վերակազմակերպման նպատակահարմարությունը, սկզբունքները կամ պայմանները:

Համայնքի անդամները նշել են, որ նախքան Կառավարության որոշումը, դպրոց է այցելել Կոտայքի մարզպետը և դպրոցում շրջելուց հետո հայտնել, որ այն պետք է փակվի: Այդ պնդման համար որևէ հիմնավորում չի ներկայացվել ոչ մարզպետի, ոչ էլ այլ պաշտոնատար անձանց կողմից:

Փյունիկի դպրոցի վերակազմակերպման մասին ծնողներն առաջին անգամ իրազեկվել են 2017թ. օգոստոսի վերջին (օգոստոսի 29-ին), դպրոցի տնօրենից, ծնողական ժողովի ժամանակ: Հարցված ուսուցիչները նույնպես այդ օրն են իրազեկվել որոշման մասին՝ ժողովի ժամանակ: Ուսուցիչներից մի քանիսը որոշման մասին իմացել են ինտերնետային լրատվամիջոցներից, նախքան ժողովը:

Հատկանշական է, որ Կառավարության 2-րդ՝ վերակազմակերպման գործընթացի հետաձգման մասին որոշումը (2017թ. նոյեմբեր) նույնպես որևէ կերպ չի քննարկվել դրա անմիջական շահառուների հետ, թեև մինչ այդ վերջիններս մի քանի բողոքի ակցիաներ էին իրականացրել:

Կառավարության համապատասխան որոշման կայացման ընթացքում կարծես հաշվի չի առնվել այն հանգամանքը, որ Փյունիկի դպրոցում վերջին տարիներին սովորողների թվի աճ է գրանցվում: Մասնավորապես, 2018թ. փետրվարին, անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, աշակերտների թիվն աճել է 2-ով: Հարցվողները նշել են, որ 2018թ. սեպտեմբերին ևս աշակերտների աճ է ակնկալվում:

Գյուղի բնակչությունը ևս վերջին տարիներին բնական աճի դրական միտում է ցուցաբերում, ինչը նշանակում է առաջիկա տարիներին աշակերտների թվի ավելացում:

Փյունիկի դպրոցի շահառուների համար խնդրահարույց է Կառավարության որոշման հիմնավորվածությունը: Մասնավորապես, հարցվողները նշել են, որ Կոտայքի մարզում կան գյուղական դպրոցներ, որոնց աշակերտների թվաքանակները գրեթե հավասար են Փյունիկի դպրոցի աշակերտների թվին, որոշ դեպքերում՝ նույնիսկ զիջում են:

map.schoolnet.am կայքի տվյալներով, Կոտայքի մարզում մինչև 50 աշակերտ ունեցող 10 դպրոց կա: Ըստ նշված կայքի, Կոտայքի մարզի Թեղենիք գյուղի դպրոցում 39 աշակերտ է սովորում, Ջրաբերդ գյուղի դպրոցում՝ 43, Հատիսի դպրոցում՝ 40, Սևաբերդի դպրոցում՝ 29, և այլն: Փյունիկի բնակիչների համար պարզ չէ այն սկզբունքը, որի համաձայն՝ մի շարք դպրոցներից վերակազմակերպման համար ընտրվել է հենց իրենց դպրոցը:

*Դպրոցի վերակազմակերպման վերաբերյալ շահառուների անհամաձայնությունն ու դրանից բխող գործողությունները*

Փյունիկի բնակիչները որոշման վերաբերյալ իրենց անհամաձայնությունը հայտնելու համար սեպտեմբերի 1-ին բողոքի ցույց են իրականացրել համայնքում (նաև՝ սեպտեմբերի առաջին շաբաթվա ընթացքում աշակերտները դասի չեն ներկայացել), այնուհետև՝ Կառավարության շենքի դիմաց: Փյունիկի բնակիչները նամակով դիմել են Հանրապետության նախագահին, վարչապետին, ԿԳ նախարարին՝ խնդրելով վերացնել Փյունիկ գյուղի դպրոցի վերակազմավորելու կառավարության որոշումը[35]:

Սեպտեմբերի 11-ին աշակերտներն ու ծնողները բողոքի ակցիա են իրականացրել Կառավարության շենքի դիմաց՝ որոշումը չեղարկելու պահանջով: Կառավարության ներկայացուցիչը հավաքվածներին տեղեկացրել է, որ ԿԳ նախարարությունը որոշման նախագիծ է պատրաստում, որով 6 ամսով սառեցվելու է օգոստոսի 24-ին ընդունված որոշումը:

[35] Բողոքի ակցիաների մասին առավել մանրամասն՝ տե՛ս Հետք online-ի հետևյալ հրապարակումներում. «Փյունիկ գյուղում առաջին զանգն այսօր չհնչեց. աշակերտներն ու ծնողները բոյկոտեցին դպրոցը փակելու կառավարության որոշումը», «Փյունիկի երեխաները շարունակում են բոյկոտել և դպրոց չհաճախել. գյուղացիները դիմել են նախագահին և վարչապետին», «Փյունիկցի երեխաները կառավարության շենքի դիմաց բողոքի ակցիա իրականացրին»:

*Կրթության որակ*

Փյունիկի դպրոցի 12 ուսուցիչներից 11-ը, իսկ Արտավազի դպրոցի 17 ուսուցիչներից 14-ն ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն:

Երկու դպրոցներում էլ կան կոմպլեկտավորված դասարաններ: Փյունիկի դպրոցում դրանք 3-ն են, իսկ Արտավազի դպրոցում՝ 2-ը:

Հարցվող ծնողները հիմնականում բարձր են գնահատել կրթության որակը Փյունիկի դպրոցում. *«Երեխան դպրոցից տուն է գալիս նյութը լիովին յուրացրած: Երեխաների հետ զրուցելուց հասկանում ենք, որ ուսուցչական անձնակազմն իր աշխատանքը կատարում է բարեխիղճ և սրտացավ»:*

Մյուս կողմից, հարցվողները (թե՛ ծնողները, թե՛ ուսուցիչները) պատկերացում չունեին, թե դպրոցների միացումն ինչպես կարող է նպաստել «դրանց գործունեության արդյունավետության բարձրացմանը»[36] և որն է լինելու դրա հնարավոր դրական ազդեցությունը կրթության որակի վրա:

Հարցված ծնողները նշել են, որ *«... երեխաների ուսումը կազմակերպելու համար հարկավոր է սոցիալական տարրական պայմաններ, որոնք չկան Արտավազի դպրոցում: Օրինակ, համապատասխան լաբորատոր սարքավորումներ, համակարգչային սենյակ, սանհտարահիգիենիկ պայմաններ: Իսկ Փյունիկում կա և համակարգչային սենյակ, և լաբորատորիա»:*

Դպրոցի մանկավարժական անձնակազմն անհամաձայնություն է հայտնել Կառավարության որոշման մեջ բերված այն հիմնավորման հետ, որ Փյունիկի դպրոցում «... բնականոն հանրակրթական ուսուցում իրականացնելուն խոչընդոտ է հանդիսանում աշակերտների թվի նվազումը, որը հանգեցնում է ոչ լիարժեք դասարանների կոմպլեկտավորմանը»: Ըստ ուսուցիչների, աշակերտների ցածր թվաքանակը հնարավորություն է տալիս յուրաքանչյուր աշակերտի անհատական մոտեցում ցուցաբերել և ավելի շատ ժամանակ հատկացնել նրա անհատական կարիքներին. *«Յուրաքանչյուր աշակերտի տրամադրվում է բավականաչափ ժամանակ՝ «անհատական պարապմունքի» նման և, ելնելով աշակերտի ընդունակությունից, ապահովվում է առավելագույն արդյունք»:*

Որպես կրթության որակի հիմնավորում՝ անձնակազմի ներկայացուցիչները նշել են այն մասին, որ ամեն տարի շրջանավարտների կեսից ավելին բուհեր են ընդունվում:

Կրթության որակի վրա հնարավոր բացասական ազդեցություն կարող է ունենալ ուսուցիչ-ծնող-աշակերտ կապի խզումը: Հիմա այդ հաղորդակցությունը բավական դյուրին է, քանի որ ուսուցիչները միշտ հասանելի են ծնողների հետ ուղիղ շփման համար, և հակառակը: Կանխատեսվում է, որ Արտավազի դպրոցի ուսուցչական անձնակազմի և Փյունիկի երեխաների ծնողների միջև կապը կարող է տուժել:

*Շենքային և գույքային պայմաններ*

Փյունիկի դպրոցը կառուցվել է 1988թ., դպրոցի տիպային շենք է: Իրավահաջորդ Արտավազի դպրոցը կառուցվել է 1982թ., նույնպես տիպային շինություն է:

Երկու դպրոցներն էլ թերբեռնված են: Փյունիկի դպրոցը նախատեսված է շուրջ 390 աշակերտի համար, մինչդեռ 2018թ. փետրվարի դրությամբ այնտեղ սովորում էր 42 աշակերտ (որից 39-ը՝ համայնքի բնակիչ): Արտավազի դպրոցը նախատեսված է շուրջ 320 աշակերտի համար, և 2018թ. փետրվարի դրությամբ այնտեղ սովորում էր 71 աշակերտ (որից 64-ը՝ համայնքի բնակիչ):

Հարցման մասնակիցների զգալի մասը նշել է, որ իրենց (Փյունիկի) դպրոցն ունի կոսմետիկ վերանորոգման կարիք: Մասնավորապես՝ կարիք կա վերացնելու պատերի ճաքերն ու փոխելու որոշ խողովակներ:

Ըստ հարցվողների, իրավահաջորդ Արտավազի դպրոցի շենքն ավելի վատ պայմաններ ունի *«... գտնվում է վթարային վիճակում, երբևէ չի վերանորոգվել: Հատակը քայլելուց շարժվում է, սանհտարահիգիենիկ պայմանները բացակայում են, սանհանգույցը գտնվում է դպրոցի շենքից դուրս և փայտաշեն է, մարզադահլիճն ունի հիմնանորոգման կարիք: Դպրոցն ապահոված չէ խմելու ջրով»:*

[36] Մեջբերում է՝ Կառավարության համապատասխան որոշումից:

Արտավազի դպրոցում խմելու ջրի բացակայության մասին նշել են նաև Արտավազ համայնքի բնակիչները՝ դիտորդների հետ զրույցի ընթացքում:

ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 16-ի՝ վերակազմակերպման գործընթացը հետաձգելու որոշման հիմնավորման մեջ նշված էր, որ «…ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ ՀՀ Կոտայքի մարզի Արտավազի միջնակարգ դպրոցի շենքային պայմանները ոչ բարվոք են, ընթանում են վերանորոգման աշխատանքներ»:

Արտավազի դպրոց այցելած դիտորդներն (2018թ. փետրվար) ականատես չեն եղել ոչ վերանորոգման ընթացիկ աշխատանքների, ոչ էլ դրանց (եթե այդպիսիք եղել են նախկինում) հնարավոր արդյունքներին: Արտավազի համայնքի բնակիչները նշել են, որ դպրոցում առնվազն վերջին մեկ տարվա ընթացքում չեն իրականացվել վերանորոգման աշխատանքներ, իրենք տեղյակ չեն նաև, թե արդյոք վերանորոգում նախատեսված է թե ոչ:

Ընդ որում, վերանորոգման կարիք ունեն նաև Արտավազի դպրոցի ճանապարհը և դրսում տեղակայված սանհանգույցը: Աշակերտների ծնողները նշել են, որ իրենց երեխաներն օգտվում են հենց այդ՝ դպրոցից դուրս գտնվող սանհանգույցից: Իսկ դպրոցի ներսում գտնվող միակ սանհանգույցը ուսուցիչների համար է նախատեսված:

*Աշակերտների՝ դեպի իրավահաջորդ դպրոց տեղաշարժի հետ կապված հնարավոր խնդիրները*

Փյունիկի և Արտավազի դպրոցների միջև հեռավորությունը շուրջ 3.5 կմ է: Բացի այդ, Արտավազի դպրոցը բարձրադիր վայրում է տեղակայված, փոքր-ինչ բարձր է՝ գյուղի այլ հատվածներից: Միջհամայնքային տրանսպորտը չի հասնում դպրոցի մուտքի մոտ: Ըստ հարցվողների, աշակերտները ստիպված են լինելու շուրջ 800 մետր բարձրադիր տեղամասը հաղթահարել ոտքով:

Ձմռանը (որ նման բարձրադիր վայրերում սովորականից խստաշունչ է ու երկարատև) ճանապարհները դառնում են դժվարանցանելի, ձյան բարձրությունը կարող է մի քանի մետրի հասնել: Ձնաբքի դեպքում համապատասխան ծառայությունները չեն էլ փորձում մաքրել ձյունը: Միջհամայնքային տրանսպորտը ձմռանը գրեթե չի սպասարկում: Բնակլիմայական այս պայմաններում շատ հավանական է դասերից ուշանալը և անգամ՝ մի քանի օր շարունակ դասի չներկայանալը (ճանապարհը կարող է մի քանի օր փակ լինել):

Թեև Կոտայքի մարզպետարանից համայնքի բնակիչներին հավաստիացրել են, որ փոխադրամիջոց կտրամադրեն, սակայն ծնողները չեն վստահում այս խոստմանը՝ հղում անելով Հանքավանի դպրոցի դեպքին: Մոտ տասը տարի առաջ Հանքավանի դպրոցը ևս օպտիմալացվել է, և Հանքավանից 5 աշակերտ հաճախում է Արտավազի դպրոց: Թեև նմանատիպ (փոխադրամիջոց տրամադրելու) խոստում է տրվել նաև այդ համայնքին, սակայն մինչ օրս այն չի կատարվել: Հանքավանի աշակերտները դասերին են ներկայանում ուշացումով (մոտ ժամը 10:00-ին) և, չսպասելով դասերի ավարտին, հեռանում են դպրոցից (մոտ ժամը 12:00-ին), որպեսզի հասցնեն օգտվել միջհամայնքային տրանսպորտից:

Փյունիկից Արտավազ կարելի է հասնել Հրազդան-Արտավազ միջհամայնքային տրանսպորտի միջոցով, որը շարժվում է Հրազդանից օրը 3 անգամ. 08:00-ից, 12:00-ից և 15:45-ից: Արտավազից դեպի Հրազդան տրանսպորտը շարժվում է ժամը 10:00-ին, 12:10-ին և 16:20:

Գործող չվացուցակի պահպանման պարագայում, դասից չուշանալու համար, աշակերտները պետք է օգտվեն Հրազդանից ժամը 08:00-ին մեկնող ավտոբուսից: Սակայն այդ պարագայում էլ նրանք Արտավազի դպրոց կհասնեն մինչև դասը սկսելը՝ մոտ կես ժամ շուտ: Չվացուցակով նախատեսված հաջորդ (Հրազդանից մեկնում է 10:00-ին) փոխադրամիջոցից օգտվելու դեպքում էլ դասից կուշանան մոտ 1.5 ժամ:

Բացի այդ, առավոտյան դասի գնացող Փյունիկի դպրոցի շուրջ 40 աշակերտները, հնարավոր է, միաժամանակ չտեղավորվեն մեկ ավտոբուսում, եթե այն նախատեսված է նաև հանրային օգտագործման (այլ ուղևորների) համար:

Արտավազի դպրոցից աշակերտների վերադարձը նույնպես կբարդանա՝ անհարմար չվացուցակի պատճառով: Դասերն ավարտող երեխաները ստիպված են լինելու սպասել մինչև առաջին մեկնող ավտոբուսը:

Անգամ Փյունիկի աշակերտներին հատուկ փոխադրամիջոցի տրամադրման պարագայում էլ խնդիրը չի կարգավորվում: Երեխաները տարբեր տարիքային խմբեր են ներկայացնում,

հետևաբար, կախված դասացուցակից, դասերն ավարտում են տարբեր ժամերի: Ցածր դասարանների երեխաները սովորաբար դասերն ավարտում են 1-1.5 ժամ շուտ: Նրանքստիպված են լինելու սպասել բարձր դասարանների աշակերտներին՝ միասին գյուղ վերադառնալու համար:

Ներկայումս Փյունիկում երեխաները ծախսում են 10-20րոպե՝ դպրոց գնալու և վերադառնալու համար (կախված այն բանից, թե գյուղի որ հատվածում են բնակվում): Նորմալ եղանակային պայմանների դեպքում ոտքով Արտավազի դպրոց գնալու և վերադառնալու համար շուրջ երկու ժամ կարող է պահանջվել, մեքենայի դեպքում՝ մոտ 40 րոպե: Ընդ որում, այդ ժամանակն ավելի շատ կարող է լինել՝ վատ եղանակային պայմանների, ինչպես նաև՝ ներմարզային ավտոբուսներին սպասելու պատճառով:

Հարցվողները նշել են նաև, որ շատ վտանգավոր է Փյունիկ-Արտավազ ճանապարհի 1000-1200 մետրանոց մի հատված, որն ամայի է և, ոտքով անցնելու դեպքում, կա գիշատիչ կենդանիների կողմից հարձակման վտանգ:

Մեկ այլ խնդիր է երեխաների տարիքային պահանջներին համապատասխան փոխադրամիջոցի ապահովումը: Ծնողները նշում են, որ ներկայումս ներմարզային երթուղիներում գործող ավտոբուսներից օգտվելը բարդ է լինելու 6-ից 7 տարեկան երեխաների համար: Առանց կողմնակի օգնության երեխաները չեն կարող ինքնուրույն բարձրանալ ավտոբուս կամ իջնել դրանից:

Թեև հետազոտության ընթացքում դիտորդները չեն առնչվել հենաշարժողական խնդիրներ ունեցող երեխաների կամ նրանց ծնողների հետ, սակայն կանխատեսելի է, որ գյուղում դպրոցի բացակայությունը հատկապես ծանր է անդրադառնալու այդ երեխաների տեղաշարժի և կրթության վրա:

Մի քանի ծնող նշել են, որ ստեղծված պայմաններում իրենց համար նախընտրելի է՝ երեխային իրավահաջորդ դպրոց ուղարկելու փոխարեն, տանել այլ դպրոցներ՝ Հրազդանում կամ Երևանում՝ իրենց ներկայիս աշխատավայրին ավելի մոտ: Պարզ չէ, թե այս դեպքերում ինչպես է կարգավորվելու տրանսպորտային ծախսերի հնարավոր փոխհատուցման հարցը:

Փյունիկի դպրոցի աշակերտներից երկուսը Մեղրաձոր համայնքից են: Դպրոցի վերակազմակերպման դեպքում նրանց տեղաշարժը՝ դեպի իրավահաջորդ՝ Արտավազի դպրոց, փոքր-ինչ երկարելու է[37]:

**Նկարներ 1 և 2. Փյունիկի դպրոցի իրավահաջորդ՝ Արտավազի դպրոցի ճանապարհը:**





*Դպրոցի վերակազմակերպման արդյունքում հավելյալ ծախսերի առաջացումը*

Եթե Փյունիկի աշակերտներին հատուկ փոխադրամիջոց չտրամադրվի կամ տրանսպորտային ծախսերի փոխհատուցում չտրվի, յուրաքանչյուր երեխայի համար ընտանիքը կատարելու է օրական մոտ 200, իսկ ամսական՝ մոտ 4500 դրամի ծախս: Այս ծախսը հաշվարկված է ներմարզային երթուղիներից օգտվելու դեպքում: Քանի որ, ինչպես վերը տեսանք, դրանց չվացուցակն այնքան էլ հարմար չէ, տաքսու վրա կատարվող ծախսերն ավելի բարձր կարող են լինել:

[37] Բնակավայրերի դասավորությունը հետևյալն է. Արտավազ - Փյունիկ - Մեղրաձոր:

Վերջապես, տրանսպորտային ծախսերից բացի, ընտանիքների համար կարող են ավելանալ սննդի վրա կատարվող ծախսերը: Ներկայումս Փյունիկում դպրոցական սննդի ծրագիր է իրականացվում՝ ՅՈՒՆԻՍԵՖ-ի ֆինանսական օժանդակությամբ և աշակերտների ընտանիքների մասնակի ներդրմամբ: Քանի որ Արտավազի դպրոցում չկա ճաշարան, երեխաների դպրոցական սննդի կազմակերպումը կարող է լրացուցիչ ֆինանսական բեռ դառնալ ընտանիքների համար:

*Դպրոցի վերակազմակերպման հնարավոր ազդեցությունը համայնքի վրա*

Փյունիկում դպրոցի փաստացի փակումը հատկապես զգայուն խնդիր է, քանի որ գյուղի բնակչությունը գրեթե ամբողջությամբ կազմված է շուրջ 30 տարի առաջ Ադրբեջանից բռնագաղթած հայերից: Գյուղի բնակիչները դպրոցն իրավամբ համարում են համայնքաստեղծ և համայնքապահպան գործոն, դրա բացակայությունն էլ մեկնաբանում են որպես բնակչության հնարավոր արտահոսքի լուրջ խթան. *«Մեկ անգամ զգացել ենք արտագաղթի դառնությունը, երկրորդ անգամ չենք ցանկանում»:*

Քանի որ այս ընկալումը բավական տարածված էր հարցվողների շրջանում, կարելի է անգամ խոսել **կրկնակի զոհականացման** երևույթի մասին, երբ մարդկանց միևնույն խումբը վերապրում է անցյալի հոգեբանական տրավման՝ արդեն ներկայում, նոր գործոնների ազդեցությամբ:

Հարցված ուսուցիչները նշել են, որ իրենց, 2018թ. փետրվարի դրությամբ, դեռևս չեն առաջարկվել այլ աշխատատեղեր, որտեղ հնարավոր է աշխատել դպրոցի վերակազմակերպումից հետո:

Ինչպես վերը տեսանք, Կառավարության որոշումից կատարված մեջբերմամբ, օպտիմալացման արդյունքում կրճատվելու է շուրջ 20 աշխատակից: Եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ նրանց կեսը Փյունիկի բնակիչ է (թե՛ ուսուցիչներ, թե՛ ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի ներկայացուցիչներ), դա բացասական ազդեցություն է ունենալու գյուղի մի քանի տասնյակ բնակիչների (այդ թվում՝ ընտանիքների անդամների) կենսամակարդակի վրա:

## Ձովաշենի դպրոց

*Դպրոցի վերակազմակերպման որոշման կայացումն ու դրա մասին իրազեկումը*

Նախքան Ձովաշենի դպրոցի վերակազմակերպման որոշման կայացումը, թե՛ ծնողների ու աշակերտների, թե՛ մանկավարժական կոլեկտիվի կարծիքը որևէ կերպ չի քննարկվել կամ ուսումնասիրվել: Դպրոցում չի իրականացվել ուսումնասիրություն կամ գնահատում՝ պարզելու վերակազմակերպման նպատակահարմարությունը, սկզբունքները կամ պայմանները:

Դպրոցի վերակազմակերպման մասին թե՛ աշակերտներն ու նրանց ծնողները, թե՛ ուսուցիչները իրազեկվել են 2017թ. օգոստոսի 31 - սեպտեմբերի 1 ժամանակահատվածում՝ դպրոցում, տնօրենի կողմից:

Ի տարբերություն նույն մարզի Փյունիկի դպրոցի ծնողական համայնքի կողմից իրականացված բողոքի ակցիաների, այս գյուղի բնակիչները նման ակցիաներ չեն իրականացրել: Հավանաբար, դրա վրա ազդել է բնակչության և, հատկապես, դպրոցահասակ երեխաներ ունեցողների փոքրաթիվ լինելը:

Թեև ծնողները հիմնականում գոհ են նոր դպրոցի շենքային պայմաններից և կրթության որակից, սակայն համաձայն չեն, որ դպրոցի վերակազմակերպման կարիք/անհրաժեշտություն կար: Այս հարցի առնչությամբ հետևյալ կարծիքներն են հնչել.

- *«Նոր դպրոցը բավականին հեռու ա, թեկուզ և կողքի գյուղում ա: Ես կուզենայի երեխաները մեր մոտ մնային: Երեխան մեծ դասամիջոցին կարող էր տուն գալ, մի բան վերցնել, ուտել»,*
- *«Դասատուների փոփոխությունը լավ բան չի, գնալ-գալը դժվար է: Մի աշակերտի համար էլ լիներ՝ պետք էր պահեին դպրոցը, ոչ թե փակեին»,*
- *«Համայնքն ինչպե՞ս է համայնք, եթե դպրոց չկա: Մենք պատրաստվել էինք ուսումնական տարվան, գրքեր էին ստացել երեխաները և հանկարծ այսպիսի որոշում»,*
- *«Համայնքի դպրոց էր, ուսուցիչների հետ շատ էին կապված երեխաները: Նամանավանդ տղաս իր ուսուցչուհուն շատ կապված էր, մինչև հիմա էլ հիշում է: Բացի այդ, մենք մշակութային շենքեր չունենք և դպրոցը, կարելի ա ասել, միավորող դեր ուներ համայնքի համար: Մեր հարևաններից մեկի երեխան այս տարի առաջին դասարան պետք է գնար իմ աղջկա պես, ու այս որոշման հետևանքով ստացվեց այնպես, որ արտագաղթեցին»:*

*(Ծնողներ)*

Ինչպես Փյունիկում, Ձովաշենում նույնպես վերջին տարիներին բնակչության բնական աճի դրական միտում էր նկատվում, և ակնկալվում էր աշակերտների թվի աստիճանական ավելացում: Սակայն այդ դրական միտումներն արտացոլված չեն Կառավարության համապատասխան որոշման մեջ:

*Կրթության որակ և կազմակերպում*

Ձովաշենի դպրոցում կոմպլեկտավորված դասարաններում էին սովորում գրեթե բոլոր երեխաները: Այժմ, Հատիսի դպրոցում, նրանցից 3-ն են շարունակում ուսումը կոմպլեկտավորված դասարաններում:

Բացի այդ, եթե Ձովաշենի դպրոցում կոմպլեկտավորված դասարանում մինչև 3-4 աշակերտ էին սովորում, այժմ, Հատիսի դպրոցում, կոմպլեկտավորված դասարանում աշակերտների թիվը հասնում է մոտ 10-ի: Ըստ հարցվողների, սա համեմատաբար դրական միջավայր է ստեղծում երեխաների ուսումնառության համար:

Ձովաշենի դպրոցում դասավանդող բոլոր 6 ուսուցիչները բարձրագույն կրթություն ունեին: Յուրաքանչյուր ուսուցիչ մի քանի առարկա էր դասավանդում:

Իրավահաջորդ Հատիսի դպրոցում 13 ուսուցիչ է աշխատում, ինչը ենթադրում է դասավանդման առավել բարձր մասնագիտացում, քան Ձովաշենի դպրոցում:

Աշակերտների ծնողներին հարց է ուղղվել այն մասին, թե ինչպես են գնահատում կրթության որակն իրենց նախկին (վերակազմակերպված) և ներկայիս դպրոցում:

Ինչպես երևում է ստորև բերված աղյուսակից, կրթության որակից ծնողների բավարարվածությունը կամ մնացել է նույնը, կամ աճել է: Ձովաշենի վերակազմակերպված

դպրոցում կրթության որակի առնչությամբ «Բավարար» տարբերակն ընտրած 4 ծնող «հիմնականում լավ» է գնահատել իրավահաջորդ Հատիսի դպրոցում կրթության որակը:

«Հիմնականում լավ» տարբերակի ընտրության դեպքում էլ նմանատիպ աճ կա՝ դեպի «գերազանց» տարբերակը:

Աղյուսակ 5. Ծնողների կողմից նախկին և ներկա դպրոցներում կրթության որակի գնահատումը:

| Հարցվողի h/h-ը | Կրթության որակը վերակազմակերպված դպրոցում | Կրթության որակն իրավահաջորդ դպրոցում |
|---|---|---|
| 1 | բավարար | հիմնականում լավ |
| 2 | բավարար | հիմնականում լավ |
| 3 | բավարար | հիմնականում լավ |
| 4 | բավարար | հիմնականում լավ |
| 5 | հիմնականում լավ | գերազանց |
| 6 | հիմնականում լավ | գերազանց |
| 7 | գերազանց | գերազանց |
| 8 | գերազանց | գերազանց |
| 9 | գերազանց | գերազանց |

Հարցված ծնողներից մեկը, օրինակ, նշել է, որ *«... նոր դպրոցում մի փոքր ավելի խիստ են, ավելի շատ ժամանակ է հատկացվում դասերին»:*

Հատիսի դպրոց տեղափոխված երեխաներից մեկի վերաբերյալ իրավահաջորդ դպրոցում նշվել է հետևյալը. *«Օրինակ, երեխաներից մեկը չունի իր տարիքին համապատասխան գիտելիք՝ համաձայն ծրագրի: Բազմապատկման աղյուսակը չգիտի: Փորձում ենք շահագրգռել խրախուսական նվերներով (խոստացել ենք գնդակ նվիրել), եթե ամբողջը սովորի»:*

Կրթության կազմակերպման հետ կապված մեկ այլ կարևոր հիմնախնդիր վերաբերում է օտար լեզուների ուսուցմանը: Զովաշենի դպրոցում աշակերտները ռուսերեն և անգլերեն էին սովորում, մինչդեռ իրավահաջորդ Հատիսի դպրոցում միայն ռուսերեն և գերմաներեն է դասավանդվում:

Տեղափոխված աշակերտներից մեկը 9-րդ դասարանում է սովորում: Իրավահաջորդ դպրոցում նրան սկսել են գերմաներենի այբուբենը սովորեցնել: Ակնհայտ է (ինչն ընդունում էին նաև մանկավարժները), որ այդ աշակերտի համար դժվար է լինելու հասնել իր համադասարանցիների՝ օտար լեզվի իմացության մակարդակին:

***Շենքային և գույքային պայմաններ***

Իրավահաջորդ Հատիսի դպրոցի շենքը կառուցվել է 1976թ., ինչից հետո չի վերանորոգվել: Նախատեսված է 360 աշակերտի համար, ներկայումս թերբեռնված է. սովորում է 44 աշակերտ (ներառյալ՝ տեղափոխված 7-ը՝ Զովաշենից):

9 աշակերտներից 6-ի ծնողները նշել են, որ Զովաշենի դպրոցն ուներ հիմնանորոգման կարիք. *«Վերանորոգման կարիք ուներ, միայն դռներն էին փոխված, գետինը խարխուլ փայտերով էր, շենքը լավը չէր»:*

Հատիսի դպրոցում շենքային պայմանները գնահատվել են որպես համեմատաբար բարվոք՝ կոսմետիկ վերանորոգման անհրաժեշտությամբ: Նախկին և նոր դպրոցի շենքային պայմանների վերաբերյալ հետևյալ կարծիքներն են հնչել.

- *«Դպրոցի պատերը նորմալ են, դասարանները ավելի լավն են, քան մեր մոտ (նկատի ունեն՝ Զովաշենի դպրոցում)»,*
- *«Հատիսի դպրոցում ջեռուցումը գազի վառարաններով է լինում: Սանհանգույցը այստեղ (նկատի ունեն՝ Զովաշենի դպրոցում) դրսում էր, իսկ Հատիսի դպրոցում շենքի ներսում է: Նոր դպրոցում սպորտ դահլիճ կա, հանդիսությունների դահլիճ, ինչը մեր դպրոցում չկար»,*

- *«Ավելի մեծ շենք է (նկատի ունեն՝ Հատիսի դպրոցը), փայտի փեչով չեն տաքացնում, այլ գազի: Պեռքարանը այստեղ (նկատի ունեն՝ Ձովաշենի դպրոցում) դրսում էր, այնտեղ ներսում ա»:*

*(Ծնողներ)*

Ընդհանուր առմամբ, Հատիսի դպրոցը թե շենքային, թե գույքային պայմաններով նկատելիորեն ավելի բարվոք վիճակում է գտնվում:

Նկարներ 3 և 4. Ձովաշենի դպրոցը:



Նկարներ 5 և 6. Դասասենյակի ներքին ջերմամեկուսացումն ու ջեռուցումը Ձովաշենի դպրոցում:



Նկար 7. Ձովաշենի դպրոցի նախկին (փայտաշեն) և գործող (մետաղյա) զուգարանները[38]:



Նկար 8. Ձովաշենի դպրոցի զուգարանը: Նկար 9. Ձովաշենի դպրոցում ընդմիջումներն ազդարարող զանգը:

[38] Երկուսն էլ՝ դպրոցի շենքից շուրջ 50 մետր հեռավորության վրա են:

 

*Աշակերտների՝ դեպի իրավահաջորդ դպրոց տեղաշարժի հետ կապված խնդիրները*

Զովաշենի և Հատիսի դպրոցների միջև հեռավորությունը, ինչպես նշված է Կառավարության համապատասխան որոշման մեջ, շուրջ 6 կմ է:

Ծնողները նշել են, որ Հատիսի դպրոցից մեքենա են տրամադրել, որը երեխաներին տանում է Հատիսի դպրոց և այնտեղից հետ բերում: Ներկայումս իրավահաջորդ դպրոց տեղափոխված 7 աշակերտներին սպասարկում է թեթև մարդատար ավտոմեքենա (Lexus մակնիշի): Յուրաքանչյուր երեխայի երկկողմ տեղափոխության համար դպրոցը վարորդին օրական վճարվում է 200 դրամ, 7 երեխայի համար՝ 1400 դրամ:

Զովաշենից աշակերտների թվի ավելացման պարագայում (2018թ. սեպտեմբերին լինելու են 3 առաջին դասարանցիներ) հարկ կլինի ապահովել նոր, ավելի տարողունակ տրանսպորտային միջոց:

Քանի որ տարբեր տարիքային խմբի երեխաները տարբեր ժամերի են ավարտում դասերը, խնդիրներ են առաջանում նաև նրանց վերադարձի առնչությամբ: Առաջին դասարանում սովորող երեխան (որ շուտ է ավարտում դասերը) ստիպված է սպասել մյուսների դասերի ավարտին՝ նրանց հետ միասին սպասարկող մեքենայով գյուղ վերադառնալու համար: Դասվարը նրա հետ «զբաղվում է», մինչև մյուսները վերջացնեն:

Մյուսներից ավելի ուշ է դասերը վերջացնում 9-րդ դասարանում սովորող աշակերտը: Նրան երբեմն վերջին դասից՝ ֆիզկուլտուրայից կամ դասղեկի ժամերից ազատում են, որպեսզի երեխաների հիմնական խմբի հետ մեքենայով վերադառնա տուն:

Ծնողներից մեկը նշել է, որ սոցիալական անբարենպաստ վիճակի պատճառով չի կարող երեխաների ուղեվարձը հոգալ և ուղարկել դպրոց, եթե երեխաների փոխադրումը դադարեցնեն:

Թեև գործում է Զովաշեն և Հատիս գյուղերը կապող միջհամայնքային երթուղի, սակայն դրա չվացուցակը, ինչպես Փյունիկ և Արտավազ գյուղերի դեպքում, խիստ անհարմար է: Այդ երթուղուց օգտվելու դեպքում (առաջին ավտոբուսով գնալու դեպքում) աշակերտները կամ բավական շուտ են հասնելու Հատիսի դպրոց և ստիպված են լինելու սպասել դասերի մեկնարկին, կամ՝ ուշացումով են հասնելու (եթե գնան հաջորդ՝ 2-րդ ավտոբուսով): Նույն խնդիրն է լինելու նաև Հատիսից Զովաշեն վերադառնալու դեպքում, քանի որ չվացուցակը չի համընկնում դասերի ավարտի հետ:

Վերջապես, սահմանված չվացուցակը միշտ չէ ճշգրտությամբ պահպանվում երթուղին սպասարկող վարորդների կողմից: Երբեմն կարիք է լինում սահմանված ժամից ավելի սպասելու, ինչը հատկապես դժվար է եղանակային վատ պայմանների և կահավորված կանգառների բացակայության պայմաններում:

Երեխաների տրանսպորտային տեղաշարժի հիմնական խնդիրը կապված է բնակլիմայական պայմանների հետ: Ինչպես նույն մարզի Փյունիկ գյուղում, այստեղ նույնպես ձմեռը շատ խստաշունչ է ու երկարատև: Ձմռանը ճանապարհները դառնում են դժվարանցանելի, ձնաբքի դեպքում մի քանի

օր շարունակ Զովաշեն-Հատիս ճանապարհը կարող է փակ լինել: Զովաշենի բնակիչները նշում էին, որ եղել են դեպքեր, երբ գյուղից դուրս եկած անձինք մի քանի ժամ և նույնիսկ 1-2 օր չեն կարողացել վերադառնալ՝ ձնածածկույթի պատճառով: Նման պայմաններում հաճախ համապատասխան տեխնիկայով էլ հնարավոր չի լինում բացել ճանապարհը:

2017-2018թթ. ձմեռային ամիսներին նմանատիպ խնդիրներ չեն գրանցվել, քանի որ ձմեռը Հայաստանում բավական մեղմ էր: Այնուամենայնիվ, ծնողներն այդ խնդիրները շատ հավանական են համարում հետագայում, ինչի պատճառով կարող է տուժել ուսումնառության նորմալ գործընթացը. *«Ճիշտ ա՝ տրանսպորտ տրամադրել են, ինչի համար շատ շնորհակալ ենք, բայց դե էս ձմեռ ավելի մեղմ էր: Եթե լավ ձմեռ աներ, կարող ա ճանապարհները փակվեն: Երեխաները արդեն ո՞նց են դպրոց գնալու: Կամ կարող ա գնան էն գյուղ, չկարողանան հետ գալ»:*

Ակնհայտ է, որ վերը նկարագրված հնարավոր իրավիճակներն ուղղակի սպառնալիք են ներկայացնում երեխաների կյանքի և առողջության համար: Հանկարծակի սկսված ձնաբքի պատճառով երեխաները կարող են մնալ ճանապարհի կեսին՝ դրանց բխող բոլոր հետևանքներով: Զովաշենի բնակիչների հետ այդպիսի դեպքեր անցյալում եղել են:

Զովաշենում դպրոց գնալու և տուն վերադառնալու համար երեխաները ծախսում էին առավելագույնը 5-ից 7 րոպե: Ներկայումս մեքենայով Հատիսի դպրոց գնալու և վերադառնալու համար ծախսում են մոտ 30 րոպե: Ընդ որում, այդ ժամանակն էականորեն ավելի շատ կարող է լինել՝ վատ եղանակային պայմանների պատճառով:

Նորմալ եղանակային պայմանների դեպքում ոտքով Հատիսի դպրոց գնալու և վերադառնալու համար շուրջ երկու ժամ կարող է պահանջվել: Ոտքով գնալու դեպքում էլ երեխաների համար վտանգավոր է ամայի, չբնակեցված ճանապարհը:

Մեկ այլ խնդիր է երեխաների տարիքային պահանջներին համապատասխան փոխադրամիջոցի ապահովումը: Ծնողները նշում են, որ ներկայումս ներմարզային երթուղիներում գործող ավտոբուսներից օգտվելը բարդ է լինելու 6-ից 7 տարեկան երեխաների համար: Առանց կողմնակի օգնության երեխաները չեն կարող ինքնուրույն բարձրանալ ավտոբուս կամ իջնել դրանից:

***Դպրոցի վերակազմակերպման արդյունքում հավելյալ ծախսերի առաջացումը***

Ծնողները նշել են Զովաշենի դպրոցի վերակազմակերպման արդյունքում հավելյալ ծախսերի առաջացման մասին:

- Ծնողներից մեկը, չսպասելով վերակազմակերպման գործընթացի ավարտին (2017թ. հոկտեմբերի վերջ), իր նախաձեռնությամբ սեպտեմբերի սկզբից երեխաներին սկսել է ուղարկել Հատիսի դպրոց՝ հոգալով նրանց տրանսպորտային ծախսը: Մեկ ուղղությամբ ուղեվարձը 50 դրամ է: Երկու ամսվա ընթացքում (մինչև Հատիսի դպրոցից մեքենա կտրամադրեին), երկու երեխայի տեղաշարժման համար ընտանիքը մոտ 8500 դրամի ծախս է կատարել:
- Ընտանիքներից մյուսը յուրաքանչյուր երեխայի սննդի համար ամեն ամիս հավելյալ 4500 դրամ է ծախսում (երկու երեխայի համար՝ մոտ 9000 դրամ): Մինչև դպրոցի փակվելը երեխաները տանն էին սնվում (օրինակ՝ մեծ դասամիջոցի ընթացքում), և հավելյալ ծախսի կարիք չէր լինում:
- Մեկ այլ ծնող իր երկու երեխաներին սեպտեմբեր ամսից տեղափոխել է Աբովյան քաղաքի դպրոցներից մեկը: Դպրոցի փակումն այս ընտանիքի համար խթան է դարձել՝ տեղափոխվելու Աբովյան քաղաք: Սակայն, քանի որ Աբովյանի նոր դպրոցը հեռու է տեղակայված ընտանիքի բնակության նոր վայրից, տաքսուց օգտվելու կարիք է առաջացել: Ներկայումս երկու երեխայի՝ տաքսուց օգտվելու համար ընտանիքը օրական շուրջ 1000 դրամ է ծախսում:

Այսպիսով, այս ընտանիքի դեպքում դպրոցի վերակազմակերպումն ազդել է ինչպես համայնքից հեռանալու որոշման կայացման, այնպես էլ՝ նոր ծախսերի ավելացման վրա:

***Աշակերտների հոգեբանական և սոցիալական ադապտացիայի խնդիրները***

Որպես դպրոցի վերակազմակերպման բացասական հետևանք՝ ծնողները, բացի առավել հաճախ հիշատակված՝ նոր դպրոցի հեռավորության հարցը, նշել են նաև երեխաների

ադապտացիայի դժվարությունների մասին: Նրանք նշել են, որ երեխաները բավական կապված էին ուսուցիչների հետ և նոր դպրոցի միջավայրին դժվարությամբ են հարմարվել, ինչն էլ որոշակի ազդեցություն է ունեցել ուսումնառության արդյունքների վրա:

- *«Սկզբնական շրջանում շատ էր թուլացել, լավ չէր սովորում: Նույնիսկ դիմեցի բժշկի, ասեց, որ հոգեբանական ա խնդիրը և ժամանակի ընթացքում կադապտացվի»,*
- *«Սկզբում մի քիչ լավ չէր, չէր հարմարվում, որ պետք ա գնա նոր դպրոց, շատ վատ էր հաճախում, բայց հետո շփվեց այնտեղի երեխաների հետ, ադապտացվեց»,*
- *«Ուսուցիչներին շատ էր կապված, սկզբնական շրջանում անընդհատ համեմատում էր, հիշում էր, բացի այդ՝ բնակավայր ենք փոխել. ավելի է դժվարանում երեխայի համար»,*
- *«Կոնֆլիկտներ եղան մի քանի այլ երեխաների հետ»:*

*(Ծնողներ)*

Նմանատիպ խնդիրները հաղթահարվել են հիմնականում նոր դպրոցի ուսուցիչների աջակցությամբ: Իրավահաջորդ դպրոցում չկան սոցիալական աշխատողներ և հոգեբաններ, որոնք կարող էին նպաստել երեխաների հարմարմանը:

***Դպրոցի վերակազմակերպման ազդեցությունը համայնքի վրա***

Զովաշենում, Կոտայքի մարզպետարանի կայքում ներկայացված տվյալների համաձայն, ընդամենը 178 մարդ է բնակվում: Գյուղը գտնվում է Աբովյանից մոտ 20 կմ հյուսիս-արևելք, ծովի մակերևույթից 2030մ բարձրության վրա: Հեռավորությունը մարզկենտրոն Հրազդան քաղաքից 55 կմ է[39]:

Ինչպես Փյունիկ գյուղում, այնպես էլ Զովաշենում դպրոցի փակումը հատկապես զգայուն խնդիր է, քանի որ դպրոցը համայնքաստեղծ լուրջ գործոն է: Դպրոցի բացակայության պայմաններում, ըստ համայնքի անդամների, բնակչության արտահոսք կսկսվի: Ինչպես վերը ցույց տրվեց, առաջին ազդեցությունն արդեն նկատելի է. ընտանիքներից մեկը երկու երեխայի կրթության ապահովման համար բնակության է տեղափոխվել Աբովյան քաղաք: Եվս մեկ ընտանիք մշտական բնակության է տեղափոխվել Եվրոպա՝ դպրոցի վերակազմակերպման ընթացքում:

- *«Սաղ թողնում-գնում են, գյուղում գրեթե մարդ չի մնացել, էս դպրոցն էլ փակվեց, ոնց որ ավելի խթանի»,*
- *«Մի ընտանիք գնաց Իսպանիա, մեր գյուղի համար մի ընտանիքն էլ շատ մեծ նշանակություն ունի: Դպրոցում աշխատում էին գյուղից մարդիկ, ովքեր հիմա գործազուրկ են: Ոչ միայն ուսուցիչները, այլ մյուսները նույնպես»,*
- *«Մի ընտանիք արտագաղթեց Իսպանիա՝ հենց դպրոցի պատճառով: Իրենց երեխան առաջին դասարան պետք է գնար, բայց որ այսպես եղավ, նախընտրեցին գնան այլ երկիր, քանի որ դպրոցի փակմամբ ևս մեկ դժվարություն ավելացավ: Հայր, մայր, երկու երեխա: Երեխաներից մեկն առաջին դասարան պետք է գնար, մյուսը 2 տարի փոքր էր»,*
- *«Երկու ընտանիք տեղափոխվել են. մեկը Իսպանիա, մյուսը՝ Աբովյան քաղաք»,*
- *«Դպրոցի ուսուցիչները, աշխատողները աշխատանք չունեն: Մի ուսուցիչ, ով նախկինում համատեղության կարգով նաև Կապուտանի (հարևան գյուղերից մեկն է) դպրոցում էր աշխատում, հիմա միայն նա է աշխատում՝ Կապուտանում»:*

*(Ծնողներ)*

Մինչև օպտիմալացումը դպրոցում 6 ուսուցիչ էին աշխատում, որոնցից 2-ը՝ համայնքի բնակիչ: Ներկայումս 6 ուսուցիչներից աշխատում է միայն մեկը (ոչ համայնքի բնակիչ)՝ հարևան գյուղերից մեկի դպրոցում:

Մինչև օպտիմալացումը դպրոցի ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի թվաքանակը կազմում էր 3, բոլորն էլ՝ համայնքի բնակիչներ: Ներկայումս երեք անձինք էլ աշխատանք չունեն:

---

[39] Համայնքի և բնակավայրի մասին, Աղբյուր համայնքի Զովաշեն գյուղ

Դպրոցի անձնակազմի ներկայացուցիչներին (թե՛ ուսուցիչներին, թե՛ ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի անդամներին) պետական և համայնքային կառույցների կողմից չեն առաջարկվել այլ աշխատատեղեր, որևէ աջակցություն չի ցուցաբերվել այլ աշխատանք գտնելու հարցում:

Ուսուցիչներից մեկին, օրինակ, հասարակական մի կազմակերպություն աշխատանք է առաջարկել մարզի այլ դպրոցում (Աղվերան համայնքում), ինչից ուսուցիչը հրաժարվել է` հեռավորության պատճառով (Ջովաշենից հեռավորությունը շուրջ 55 կմ է):

*Այլ խնդիրներ*

Ըստ կառավարության համապատասխան որոշման, վերակազմակերպման հետ կապված ծախսերը պետք է կատարվեն իրավահաջորդ դպրոցի միջոցների հաշվին: Դրանց շարքին է պատկանում, օրինակ, վերակազմակերպվող դպրոցի գույքի, արխիվի տեղափոխությունը` իրավահաջորդ դպրոց: Ջովաշենի դպրոցի գույքի տեղափոխությունն իրականացվել է իրավահաջորդ Հատիսի դպրոցի տնօրենի անձնական ջանքերով և Հատիսի բնակիչների աջակցությամբ: Հատիսի դպրոցի բյուջեում նմանատիպ ծախսեր պլանավորված չեն եղել:

***Դեպքի նկարագրություն, Ուսուցիչ` Ջովաշենի դպրոցից (մեջբերումներ հարցազրույցից)***

*Սովորական գյուղական մի փոքրիկ դպրոց էր մեր դպրոցը: Գուցե երեխաների համար բուֆետ չունեինք, բայց բոլորը սիրում էին մեր դպրոցը, համայնքի միակ դպրոցը, որը* ***կարծես համայնքն էր միավորում:***

*Մեր տնօրենը փորձում էր որակն ապահովեր, բոլոր դասատուները բարձրագույն ավարտ են, տարիների ընթացքում քոլեջներ ավարտածները չեն մնացել դպրոցում:*

*Օգոստոս ամսվա վերջից սկսել էինք աշխատանքները, գնում էինք դպրոց, երեխաներին կանչել էինք, գրքեր բաժանել` պատրաստվում էինք Սեպտեմբերի 1-ին:*

*Ծանուցում եկավ դպրոց, որ կառավարության որոշման համաձայն պետք է դպրոցը փակվի,* ***շոկի մեջ էինք հայտնվել: Կարծես թե աչքերդ հանեին և դնեին առաջդ այդ ծանուցումով, թևերս կտրեցին և թողեցին այդպես:***

***Թող, որ լավացնեին պայմանները, այդ դեպքում ավելի շատ երեխա կգար մեր դպրոց:***

*Նշված էր ծանուցման մեջ, որ 2 ամսվա ընթացքում գտնենք նոր աշխատանք: Հոկտեմբերի 27-ին աշխատանքային պայմանագիրը լուծարվեց, վերջնահաշվարկ կարծես թե չենք ունեցել:*

*Ես երիտասարդ ուսուցիչ չեմ, տարիքս 50 անց է: 20 տարվա ստաժ ունեմ, այս դպրոցում 8-9 տարի աշխատել եմ, ես Աբովյան քաղաքից եմ, բայց* ***դարձել էի այս համայնքի անդամ արդեն:***

*Տարբեր ժամանակներ տարբեր ժամաքանակներով եմ աշխատել, ամենավերջում 0,5 դրույք էր:*

*Քանի դուռ եմ ծեծել, որ նոր աշխատանք ունենամ: «Կրթություն» թերթը վերցրի` տեսնեի որտեղ, ինչ աշխատանքներ կային: Ես հրաշալի ձևով տիրապետում եմ իմ առարկան: Երբ սկսեցի աշխատանք փնտրել, բախվեցի մի մեծ խնդրի` պետք է հայերեն լեզվով քննություն տամ մրցույթի համար:* ***Հայերեն խոսում եմ, բայց հայերեն լեզվով քննությունն ինձ համար շատ դժվար է:*** *200 հարց է, որ պետք է սովորես, հանձնես:*

*Վերջերս վերապատրաստում էի անցել, և հիմա որ գնում եմ աշխատանքի համար ուրիշ դպրոցներ, ասում են. դա չի հետաքրքրում, քննությունը տվեք:*

*Երևի թե դուռ չկա, որ ծեծած չլինեմ:*

*Հրազդանի մարզպետարան եմ գնացել, Գեղարդի դպրոց, Պտղնի, Բջնի, Աբովյան:* ***Ես չեմ նստել տեղում ու չեմ ասում, թե չկա աշխատանք: Ես իրականում թակել եմ բոլոր դռները:***

*Մարզպետարանից տեղական ասաց. գնացեք հայերեն սովորեք, քննություններին մասնակցեք: Մեծամասամբ դպրոցներում ասում են. «Ով ես, ինչի համար ես եկել»: Խոստանում էին, որ աշխատանքով կապահովեն, բայց ո՞ւր ա:*

*Գնացել էի Գեղարդի դպրոցում մրցույթի, որ աշխատանք ստանայի, այնտեղ ասեցին՝ Ձեզ համար հեռու ա տեղը, բացի այդ,* ***այլ մարդ կա*** *(այլ, նախընտրելի թեկնածու):* ***Ինչի՞ են մրցույթ դնում այդ դեպքում:***

*Ջրվեժում մեկ ամիս գնացի աշխատեցի, գովեցին, ասեցին. հենց տեղ ունենան, կտեղեկացնեն:*

*Ախր թող օգնեն աշխատանք գտնենք գոնե: Շատ բան չեմ ուզում, մի քանի տարի էլ աշխատեմ և վերջ:*

*Հիմա ընդամենը մի աշակերտ ունեմ, ում հետ պարապում եմ ամսական 5000 դրամով:*

## Փարաքարի դպրոց

*Դպրոցի վերակազմակերպման որոշման կայացումն ու դրա մասին իրազեկումը*

Նախքան դպրոցի վերակազմակերպման որոշման կայացումը, թե՛ ծնողների ու աշակերտների, թե՛ մանկավարժական կոլեկտիվի կարծիքը որևէ կերպ չի քննարկվել կամ ուսումնասիրվել: Դպրոցում չի իրականացվել ուսումնասիրություն կամ գնահատում՝ պարզելու վերակազմակերպման նպատակահարմարությունը, սկզբունքները կամ պայմանները:

Կառավարության որոշման հետ իրենց անհամաձայնությունը հայտնելու համար դպրոցի շահառուները բողոքի ակցիաներ են իրականացրել, որոնց ընթացքում մի քանի անգամ փակել են Երևան-Էջմիածին մայրուղին[40]:

Վերակազմակերպված դպրոցի աշակերտների մի քանի ծնողներ նշել են, որ մինչև վերջին օրը իրենք չեն իմացել, որ դպրոցը «փակվում է»: *«Մեզ ասել են, որ դպրոցը չի փակվելու, ընդամենը վերակազմակերպվելու է»:* Ըստ ծնողների, տեղեկատվական անորոշության նպատակն այն էր, որ *«... երեխաներին չհանենք դպրոցից»:*

Ծնողների այս պատասխաններից ակնհայտ է դառնում, որ թեև դպրոցի անձնակազմը ժամանակին տեղեկացրել է դպրոցի վերակազմակերպման մասին, սակայն այդ գործընթացի իրական էությունն այդպես էլ անորոշ, անհասկանալի է մնացել ծնողների մի մասի համար:

*Կրթության որակ և կազմակերպում*

Աշակերտների ծնողներին հարց է ուղղվել այն մասին, թե ինչպես են գնահատում կրթության որակն իրենց նախկին և ներկայիս դպրոցում: Առավել տարածված են «Հիմնականում լավ» (հանդիպել է 3 անգամ) և «Բավարար» (հանդիպել է 6 անգամ) տարբերակները: Ընդ որում, դպրոցի փոփոխությունն ազդեցություն չի ունեցել կրթության որակի վրա: Հարցված յուրաքանչյուր ծնող, որպես կանոն, միևնույն տարբերակն է ընտրել՝ թե նախկին, թե ներկայիս դպրոցում կրթության որակի վերաբերյալ:

Ծնողներից մեկը նշել է, որ տեղափոխության արդյունքում տուժել է իր երեխայի առաջադիմությունը, քանի որ աճել է դասարանում երեխաների քանակը: Ներկայումս, ըստ ծնողի, դասարանում 30 երեխա կա: Մինչդեռ նախկին դպրոցում աշակերտների ցածր թվաքանակը թույլ էր տալիս ավելի մեծ ուշադրություն դարձնել յուրաքանչյուր երեխայի ուսումնառությանը:

*Շենքային և գույքային պայմաններ*

Հետազոտության մասնակից ծնողները նշել են, որ վերակազմակերպված դպրոցի շենքային պայմաններն ավելի լավն էին՝ համեմատած իրավահաջորդ դպրոցի պայմանների: Թեև, ըստ ծնողների, նախկին դպրոցի շենքը հին էր և հիմնանորոգման կարիք ուներ, սակայն նոր դպրոցի շենքը վթարային է (ըստ ծնողների՝ 4-րդ կարգի վթարայնության) և բավական վտանգավոր:

Թեև հարցված ծնողները վթարային էին համարում միայն իրավահաջորդ դպրոցի շենքը, սակայն, էլեկտրոնային լրատվամիջոցներից մեկի հրապարակման համաձայն, Փարաքարի հիմնական դպրոցի (վերակազմակերպված) շենքը 3-րդ կարգի վթարային է, և չի կարող կրթական նպատակով օգտագործվել: Վերակազմակերպված դպրոցի տեխնիկական վիճակի վերաբերյալ նման եզրակացություն է տրվել ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ի կողմից, 2015թ.: Դպրոցի ուսումնական մասնաշենքերի և մարզադահլիճի ու հանդիսությունների դահլիճի մասնաշենքի տեխնիկական վիճակը գնահատվել է անբավարար (3-րդ աստիճան), այն է՝ կոնստրուկտիվ տարրերի շահագործումը հնարավոր է միայն հիմնանորոգումից հետո: Գործակալությունն իր եզրակացության մեջ նշել է՝ հաշվի առնելով դպրոցի շահագործման ժամկետը (մոտ 50 տարի), սեյսմիկ խոցելիության աստիճանը և տեխնիկական վիճակը, ավելի նպատակահարմար է փոխել դպրոցի շենքի գործառնական նշանակությունը և փոխարենը կառուցել նոր դպրոց[41]:

---

[40] Բողոքի գործողությունների և դրանց ազդեցության մասին առավել մանրամասն՝ տե՛ս էլեկտրոնային լրատվամիջոցների հետևյալ հրապարակումները. Փարաքարի հիմնական դպրոցում լարված մթնոլորտ է. աշակերտների ծնողներն ու ուսուցիչներն՝ ընդդեմ նոր տնօրենի, Ինչո՞ւ են աշակերտների ծնողները փակել Երևան-Էջմիածին մայրուղին (տեսանյութ), Ոչ սա, ոչ նա. Հայտնի է Փարաքարի միջնակարգ դպրոցի ժամանակավոր պաշտոնակատարը:

[41] Փարաքարի դպրոցը կարող է առևտրի կենտրոն լինել, բայց ոչ ուսումնարան:

Դպրոցների շենքային և գույքային պայմանների վերաբերյալ ծնողների և ուսուցիչների կարծիքները ներկայացված են ստորև.

- *«Նախկին շենքը համեմատաբար ավելի լավն էր: Չնայած նա էլ էր հին շենք, բայց եվրո լուսամուտներ, եվրո դռներ էր դրված: Որոշ ծնողների ջանքերով, ներկել էին, վերանորոգել էին դասարանները, այդքան աշխատանք էր տարված: Իսկ էստեղ (նոր դպրոցում) հատկապես երկրորդ կորպուսում վախենում ես ճաղավանդակին հենվել. քեզ թվում ա՝ հեսա կպոկվի-կընկնի: Երկրորդ կորպուս վախենում ես գնաս. աստիճանները վատն են ու շատ թեք, մտածում ես՝ ոնց անես, հանկարծ չընկնես,*
- *«Նոր դպրոցը վթարային վիճակում է, վերանորոգում պետք ա արվի: Բայց մեր դպրոցը (նախկինը), որոշ մասը՝ բարերարների, որոշ մասը՝ ծնողների միջոցով (ընդ որում, ծնողների դերը ավելի մեծ ա. գումար ենք հավաքել) վերանորոգվել է, դռները փոխել ենք, գետինն ենք ներկել»,*
- *«Դպրոցի ծմակ հատվածի դասարանները դասի չեն եկել մեկ-մեկ»*[42]*,*
- *«Երեխաները չեն ուզում գնալ, զոռով եմ ուղարկում, դասարանները շատ ցուրտ են»,*
- *«Հանդիսությունների դահլիճ չկա, գետնանցում չկա, հավաքարարին գումար ենք տալիս: Սանհանգույցից 2-ն է գործում, բուֆետ չկա: Միջոցառումները միջանցքում են արվում, որովհետև ֆիզկուլտուրայի դահլիճը ցուրտ ա, չի ջեռուցվում»,*
- *«Նոր դպրոցի շենքը վթարային ա, երկրաշարժ լինի՝ կփլվի: Պատուհանները ռիսկ չես անում մաքրես, քեզ թվում ա՝ կփշրվի: Ամբողջ մեր դժգոհությունը նոր դպրոցի շենքային պայմաններն ա»,*
- *«Սանհանգույցները ամբողջ դպրոցի համար ընդամենը երեք հատ ա, դա շատ քիչ ա այսքան մեծ դպրոցի համար»,*
- *«Դասարանները այնքան փոքր են, որ գույք չկա, որ նստեն: Ստիպված մեկը պետք ա բացակայի»:*

*(Ծնողներ և ուսուցիչներ)*

**Նկարներ 10-15. Փարաքարի (իրավահաջորդ) դպրոցը:**





[42] Ծնողը նկատի ունի դպրոցի ոչ արևկող և լավ չջեռուցվող հատվածներում դասերի տապալման դեպքերը:






*Աշակերտների՝ դեպի հիմնական դպրոց տեղաշարժի հետ կապված խնդիրներն ու հավելյալ ծախսերը*

Հետազոտության ընտրանքում ընդգրկված ծնողներից մեկը նշել է, որ դպրոցի փոփոխության արդյունքում աճել են տրանսպորտի վրա կատարվող ծախսերը՝ երկու երեխաներից յուրաքանչյուրի համար՝ մոտ 6000 դրամ, ամսական (քանի որ նոր դպրոցը *«…լրիվ հակադիր դիրքում է»*): Ծնողներից երկուսն էլ նշել են, որ դպրոցի փոփոխության պատճառով առաջացել է օտար լեզվի կրկնուսուցման անհրաժեշտություն՝ դրանից բխող լրացուցիչ ծախսերով:

Մտահոգիչ է ծնողներից մեկի խոսքն այն մասին, որ հիմնական դպրոցում *«… հավաքարարին ամսավճար ենք տալիս, մարտի 8-ի գումար ենք հավաքում»:* Ըստ էության, այստեղ բարձրաձայնված է անօրինական դրամահավաքության մասին: Եթե մարտի 8-ի նվերների համար գումար հավաքելը կարող է լինել նաև ծնողների կամավոր նախաձեռնությունը (որքան էլ նմանատիպ երևույթներն անցանկալի են), ապա անհասկանալի է, թե ծնողներն ինչու են վարձատրում դպրոցի հավաքարարին:

Ծնողներից մեկը նշել է նոր դպրոցի ճանապարհի վտանգավորության մասին. *«Դպրոցի դիմաց մայրուղի ա ու բավականին վտանգավոր: Դպրոցի տարածքում անցումներ չկան, անցումներ կան բավականին վերև: Կա կամուրջ, որով հիմնականում երեխաները անցնում են: Բայց իմ տղան անցնում ա հենց մայրուղիով՝ խախտում անելով: Ասում ա՝ ավելի լավ ա սենց անցնեմ, քան կամուրջով. ընդեղ մյուս երեխեքը բոթբոթում են, կամուրջն էլ լավ սարքած չի, ընկնելու վտանգ կա»:*

Եթե նախկինում դպրոց գնալու և վերադառնալու համար աշակերտները միջինում ծախսում էին մոտ14 րոպե, ապա նոր դպրոցի դեպքում այդ ժամանակն աճել է գրեթե 2.5 անգամ և կազմում է մոտ 34 րոպե:

Թե ուսուցիչները, թե աշակերտները օգտվում են միակ հասանելի՝ 67 համարի երթուղուց, որն աշխատում է 15-20 րոպեանոց (երբեմն՝ ավելի երկար և անկանխատեսելի) ընդմիջումներով:

Հարցված ծնողներից մեկը նշել է այլ դպրոցներ տեղափոխված աշակերտների մասին. *«Ուսուցչական լավ համբավ չուներ հիմնական (իրավահաջորդ) դպրոցը: Կային երեխաներ, որոնց ծնողները միջոցներ ունեին ու տարան ուրիշ դպրոց»:* Իրավահաջորդ դպրոցի փոխարեն այլ դպրոց նախընտրելու պատճառների շարքում նշվել է նաև դպրոցի շենքային վատ պայմանների գործոնը:

Իրավահաջորդի փոխարեն այլ դպրոցներ տեղափոխված երեխաները մոտ 10-ն են:

Նկարներ 16 և 17. Փարաքարի դպրոցի վերգետնյա անցումը:





*Աշակերտների հոգեբանական և սոցիալական ադապտացիայի խնդիրները*

Դպրոցների միացումը համայնքում սոցիալական լարվածության պատճառ է դարձել.

- *«Իրավահաջորդ դպրոցի ծնողներն էլ մեզ լավ չեն ընդունել: Ծնողներից մեկը ասում ա. նենց հանեմ երեխուդ էս դպրոցից շպրտեմ որ: Ես էլ ասում եմ. իմ երեխեն քեզ ինչ ա արել: Գյուղի մարդկանց անիմաստ հանեցին իրար դեմ»,*
- *«Գոնե նոր շենք սարքեին, հետո տեղափոխեին բոլորին: Նույն համայնքի մարդիկ ենք ու իզուր տեղը մեզ հանեցին իրար դեմ»:*

*(Ծնողներ)*

Ըստ ուսուցիչների, երեխաների համար անսովոր է նոր դպրոցի տեղակայումը (անմիջապես բանուկ մայրուղու վրա): Դա հատկապես վտանգավոր է ցածր դասարանների երեխաների համար:

Երեխաների նորմալ ադապտացիան ապահովելու հարցում հատկապես կարևոր է եղել, ըստ հարցված ուսուցիչների, հոգեբանի և սոցիալական մանկավարժի դերը, որոնք, ուսուցիչների հետ միասին, ինտենսիվ աշխատել են այդ ուղղությամբ:

*Գործազրկությունը և այլ սոցիալական հետևանքները*

Հարցմանը մասնակցած՝ վերակազմակերպված դպրոցի բոլոր ուսուցիչները ներկայումս աշխատում են իրավահաջորդ դպրոցում: Նրանցից 7-ի աշխատանքային զբաղվածությունը նույնն է մնացել, մի ուսուցչի ծանրաբեռնվածությունը փոքր-ինչ (մի քանի դասաժամով) նվազել է, մյուսինը՝ գրեթե կրկնակի աճել է (0.5 դրույքը դարձել է 1 դրույք):

Հարցման մասնակից ուսուցիչները նշել են, որ վերակազմակերպման գործընթացի մեկնարկին, իրենց դիմումի համաձայն, աշխատանքից ազատվել են իրենց 3 գործընկերները (որոնցից մեկը կենսաթոշակային տարիքի է եղել):

Ընդհանուր առմամբ, այս դպրոցում, ի տարբերություն ընտրանքում ներառված այլ դպրոցների, աշխատանքը շարունակող ուսուցիչների ծանրաբեռնվածությունն էական փոփոխություններ չի կրել:

Վերակազմակերպված դպրոցի ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի առնվազն 4 ներկայացուցիչ ներկայումս աշխատում են իրավահաջորդ դպրոցում: Նրանցից մեկի ծանրաբեռնվածությունը նվազել է՝ 1 դրույքից դարձել է 0.5 դրույք: Մյուս անձանց ծանրաբեռնվածության մասին տվյալները բացակայում են:

Մյուս կողմից, ուսուցիչները նշել են 2018թ. սեպտեմբերին սպասվող կրճատումների մասին: Այս առումով, ներկայումս աշխատող ուսուցիչներից մի քանիսը վստահ չէին, թե որքան ժամանակ դեռ կաշխատեն իրավահաջորդ դպրոցում:

Երկու ուսուցիչ նշել են աշխատավայրի փոփոխության արդյունքում հավելյալ ծախսերի (տրանսպորտի և սննդի) առաջացման մասին:

*Այլ խնդիրներ*

Կառավարության համապատասխան որոշման մեջ նշված է, որ Արմավիրի մարզպետը երկամսյա ժամկետում պետք է ապահովի գույքի հանձնման-ընդունման աշխատանքների կատարումը, ինչպես նաև պետք է հաստատի նշված գույքի կազմը, միացման պայմանագիրը և փոխանցման ակտը:

Գույքի փոխանցման վերաբերյալ հարցերին իրարամերժ պատասխաններ են ստացվել: Մանկավարժական կազմի ներկայացուցիչները նշել են, որ մարզպետարանը միայն երկու բեռնատար է տրամադրել, իսկ գույքի տեղափոխման հետ կապված մնացած աշխատանքներն ու ծախսերը կատարվել են իրավահաջորդ դպրոցի միջոցներով:

Հարցման մասնակից ծնողներն էլ նշել են, որ վերակազմակերպված դպրոցից ամբողջ գույքի տեղափոխումն իրենք են ապահովել՝ սեփական միջոցներով:

## Երևանի N23 դպրոց

*Դպրոցի վերակազմակերպման որոշման կայացումն ու դրա մասին իրազեկումը*

Նախքան դպրոցի վերակազմակերպման որոշման կայացումը, թե՛ ծնողների ու աշակերտների, թե՛ մանկավարժական կոլեկտիվի կարծիքը որևէ կերպ չի քննարկվել կամ ուսումնասիրվել: Դպրոցում չի իրականացվել ուսումնասիրություն կամ գնահատում՝ պարզելու վերակազմակերպման նպատակահարմարությունը, սկզբունքները կամ պայմանները:

Ի տարբերություն վերակազմակերպված մարզային դպրոցների, որտեղ աշակերտներն ու նրանց ծնողները դպրոցի «փակման» մասին իրազեկվել են անսպասելիորեն՝ 2017թ. օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի 1-ին, N23 դպրոցում շահառուների համայնքն ավելի վաղ է տեղեկացել դպրոցի հնարավոր «փակման» մասին: Հարցված ծնողների մեծ մասը նշել է, որ դպրոցի վերակազմակերպման մասին խոսակցությունները բավական ակտիվ են եղել 2017թ. գարնանային կիսամյակի ավարտին՝ մայիս ամսին, իսկ նույն թվականի օգոստոսի վերջին արդեն ստացել են լուրերի պաշտոնական հաստատումը:

Հավանաբար, այս պատճառով է նաև, որ N23 դպրոցի շահառուները, համեմատած մարզային դպրոցների շահառուների, համեմատաբար ավելի պատրաստված են եղել փակմանը, և այդ լուրն այնքան շոկային չի եղել նրանց համար, որքան մարզերի բնակիչների:

Աշակերտներն ու ծնողները իրազեկվել են դպրոցի վերակազմակերպման պաշտոնական լուրի մասին դպրոցի տնօրինությունից կամ ուսուցիչներից: Միայն երկու ծնող են նշել, որ այդ մասին իրազեկվել են ինտերնետային լրատվամիջոցներից կամ ԶԼՄ-ներից:

Այնուամենայնիվ, պատշաճ, համակողմանի իրազեկման պակաս է նկատվում, ինչի պատճառով հարցվողները նշել են դպրոցի փակման այլ, պաշտոնականից տարբերվող վարկածներ:

- *«Դպրոցի շենքի վրա աչք կա: Կոնդում այժմ Դվին հյուրանոց են կառուցում և խոսակցություններ կան, որ դպրոցի տեղում էլ ինչ-որ բան կսարքեն»,*
- *«Ընտրությունների ժամանակ մարդիկ են եղել, որ ակտիվորեն օգնել են գործող քաղաքական ուժին և այդ ամենի իրականացնողին էլ, իհարկե, կխրախուսեն»:*

*(Ծնողներ)*

Խոսելով դպրոցի վերակազմակերպման անհրաժեշտության մասին, ուսուցիչները նշել են, որ *«...թեև երեխաների քանակի խնդիր կար, սակայն միանգամից այդպիսի որոշում կայացնելն, առանց անձնակազմի հետ քննարկման, արդար չէր»:*

Անարդարության մեկ այլ դրսևորում են համարում դպրոցի առկա վիճակն օգտագործելով՝ այն փակելը. *«Այո, քիչ աշակերտ ունեինք: Բայց թող վերանորոգեին, աշակերտներ մեզ մոտ կբերեինք, մյուս դպրոցներում նոց ա: Կարող էր շատանալ քանակը, եթե կառավարությունն իր հերթին օժանդակեր»:*

Հարցվողները նկատի ունեին, որ դպրոցին չի տրվել «երկրորդ շանս», և ներդրումներ չեն կատարվել՝ այն աշակերտների ներգրավման համար գրավիչ դարձնելու նպատակով:

*Կրթության որակ և կազմակերպում*

Աշակերտների ծնողներին հարց է ուղղվել այն մասին, թե ինչպես են գնահատում կրթության որակն իրենց նախկին (վերակազմակերպված) և ներկայիս[43] դպրոցում: 20 պատասխանների բաշխումը ներկայացված է ստորև բերված աղյուսակում:

**Աղյուսակ 6. Ինչպե՞ս եք գնահատում կրթության որակն օպտիմալացված և ներկայիս դպրոցում:**

| | Օպտիմալացված դպրոցում | Այժմյան դպրոցում |
|---|---|---|
| Գերազանց | 4 | 1 |
| Հիմնականում լավ | 8 | 12 |
| Բավարար | 5 | 7 |
| Հիմնականում վատ | 1 | 0 |
| Շատ վատ | 2 | 0 |

[43] Ոչ միայն իրավահաջորդ դպրոցում, քանի որ աշակերտների մի մասը տեղափոխվել է այլ դպրոցներ:

Ինչպես պարզ է դառնում աղյուսակից, նախկին՝ N23 դպրոցում կրթության որակի վերաբերյալ ծնողների ընկալումները բավական բևեռացված են. առկա է և՛ խիստ դժգոհություն («հիմնականում վատ», «շատ վատ» տարբերակները), և՛ դրական գնահատում («գերազանց», «հիմնականում լավ» տարբերակները):

Երեխաների նոր դպրոցներում կրթության որակի վերաբերյալ ընկալումներն արտացոլող տարբերակներն ավելի շատ կենտրոնացած են սանդղակի միջին և ավելի բարձր հատվածներում («բավարար» և «հիմնականում լավ» տարբերակները):

Կրթության որակի ու կազմակերպման գլխավոր խնդիրներից մեկը կապված է երկու դպրոցներում դասավանդվող օտար լեզուների տարբերության հետ: N23 դպրոցում աշակերտները ռուսերեն և անգլերեն էին սովորում, մինչդեռ իրավահաջորդ N5 դպրոցում ռուսերեն և գերմաներեն է դասավանդվում: Տեղափոխված աշակերտները սկսել են սովորել իրենց համար միանգամայն նոր օտար լեզու, ինչի պատճառով կրկնուսուցման անհրաժեշտություն է ծագել: Աշակերտներից մեկի ծնողը նշել է, որ N23 և իրավահաջորդ դպրոցների միջև *«... օտար լեզուների տարբերություն կա: Նոր դպրոցում հնարավորություն կա երեխային խմբակ ուղարկելու, որ հասցնի մյուսների մակարդակին: Դա այս պահին, իհարկե, հավելյալ ծախս է, բայց շատ մատչելի տարբերակ է: Նոր լեզու է սովորում և բավական մատչելի»:*

Տեղափոխված երկու աշակերտի ծնող նշել են, որ իրենց երեխաները կրկնուսույցի ծառայություններից են օգտվում՝ նոր դպրոցի կրթական պահանջներին համապատասխանելու համար: Դա ամսական հավելյալ 30.000 դրամի ծախս է՝ յուրաքանչյուր երեխայի համար:

Հարցված ծնողների գերակշիռ մեծամասնությունը նշել է, որ համաձայն չէ իրենց դպրոցը վերակազմակերպելու որոշման հետ: Որպես հիմնավորում ծնողները հիմնականում նշել են աշակերտների ցածր թվաքանակի և, որպես հետևանք, ուսուցիչների՝ աշակերտների նկատմամբ առավել անհատականացված մոտեցման մասին:

- *«Դասարանները փոքր էին, ավելի էին ուշադիր ուսուցիչները, երեխաները քիչ էին, ավելի հաճախ էին դաս պատասխանում»,*
- *«Քիչ էին աշակերտները, յուրաքանչյուր աշակերտ ամեն օր դաս էր պատասխանում: Ավելի ուշադիր էին: Դասատուներից էլ շատ գոհ էինք»,*
- *«Կրթական առումով ավելի վատ է այս դպրոցում. աշակերտների քանակը համեմատաբար ավելի շատ է դասարանում և, բնականաբար, այն ուշադրությունը, որ ինքը ստանում էր Կոնդում (N23 դպրոցում), այստեղ զուտ ժամանակային առումով ուսուցչուհին չի հասցնի»:*

*(Ծնողներ)*

Որոշ ծնողների հակառակ տեսակետները հիմնականում պայմանավորված են նոր դպրոցներում կրթության ավելի բարձր որակի և խստության (կարգապահություն, ուսուցիչների պահանջկոտություն) առավելություններով:

- *«Սկզբում, ճիշտ է՝ մտածում էի, որ նոր դպրոցը հեռու է, բայց գնացինք նոր դպրոցը ու տեսա, որ այնտեղ պայմաններն ավելի լավն են համեմատաբար, կրթությունն էլ: Շատ խիստ են այս նոր դպրոցում, պահանջում են, որ սովորեն»,*
- *«Յուրաքանչյուր բան համ առավելություն ունի, համ թերություն: Իմ երեխայի օրինակով ես ավելի շատ լավն եմ տեսնում: Ավելի խիստ են նոր դպրոցում, կան իմ երեխայից ավելի լավ սովորող երեխաներ, ինչը մոտիվացնում է իրան»,*
- *«Կրթական առումով ավելի լավ է, ուսուցիչները ավելի պահանջկոտ են, որը գալիս է նոր տնօրենից»,*
- *«Խիստ դպրոց ա ավելի, ավելի պահանջկոտ են ուսման առումով»:*

*(Ծնողներ)*

Հարցված ուսուցիչները ևս նշել են փոքրաքանակ աշակերտների դեպքում անհատական մոտեցման հնարավորության մասին:

- *«Դասարանները մեզ մոտ փոքր էին, և դա ավտոմատ բերում էր նրան, որ շատ ավելի ուշադիր էինք յուրաքանչյուր աշակերտի նկատմամբ: Հիմա համեմատաբար ավելի մեծ դասարաններ են դարձել»,*

- *«Աշակերտների քանակը քիչ էր: Դա տալիս էր հնարավորություն կիսաանհատական, կամ գրեթե անհատական պարապել բոլոր աշակերտների հետ: Հիմա, եթե դասարաններում լիքը աշակերտ է, իհարկե, նույնը չի լինի»:*

*(Ուսուցիչներ)*

Դիտորդների տպավորությամբ, N23 դպրոցում աշակերտների՝ դասերից բացակայության, ուշացումների, ցածր առաջադիմության նկատմամբ առավել լոյալ դիրքորոշում է եղել, քան ներկայումս իրավահաջորդ դպրոցում է: Նախկին դպրոցում գործել է համայնքային փակ հանրույթին բնորոշ յուրօրինակ մշակույթ, որտեղ տարբեր խնդիրների նկատմամբ առավել մեղմ մոտեցում է ցուցաբերվել:

Օրինակ, վերակազմակերպված դպրոցում տարածված է եղել դասերից ուշանալը.

- *«Առավոտյան, քանի որ կոնդեցիները բնավորություն ունեին ուշանալու, երաժշտություն էինք միացնում ու կարծես ողջ համայնքը արթնանում էր: Ճիշտ է, բողոքողներ կային, բայց քիչ էին, իհարկե»:*

*(Ուսուցիչ)*

Իրավահաջորդ դպրոցի անձնակազմի ներկայացուցիչները ևս նշել են ուշանալու սովորույթի մասին.

- *«Մի խնդիր կար ու դեռ կա դպրոցում: Դա աշակերտների հաճախելիությունն է, ուշացումները: Ամեն օր ընկնում էինք տները, զանգում, որ տեսնենք իրենց երեխաներն ուր են, ինչու չեն եկել: Սկզբում կարող էին 40 րոպե ուշանալ որոշ աշակերտներ: Ու զարմանալին ծնողների արձագանքն էր. «երեխաները չեն կարողանում արթնանալ, քնել են ուզում»:*
  *Մի երեխա ունեինք Կոնդից, որ կատեգորիկ չէր գալիս դպրոց: Դասղեկը մի քանի աշակերտների հետ միասին, փուչիկներով, տորթով գնացել էին իրենց տուն, որ համոզեին, բերեին: Դրանից հետո էլի չէր գալիս: Ծնողն էլ ասում էր, որ չի կարողանում ոչինչ անի: Շատ աշխատեցինք այդ երեխայի հետ, հիմա արդեն գալիս է, սկսել է ավելի լավ սովորել»:*

*(Ուսուցիչ)*

Նոր դպրոցներում թե՛ կրթության որակի, թե՛ կարգապահության նկատմամբ պահանջներն ավելի բարձր են: Համայնքային, ոչ ֆորմալ հարաբերությունները դրանցում պակաս ազդեցություն ունեն:

- *«Նոր դպրոցը ավելի խիստ է ուսման առումով, ավելի պահանջկոտ են: Երեխայի մոտ փոփոխություն կա ուսման տեսանկյունից. ավելի լավ է սկսել սովորել, ինչը ուրախացնող հանգամանք է»,*
- *«Երեխաներս, լինում է, որ ուշանան դասից: Դրա հետ կապված՝ նոր դպրոցում այնպես են արձագանքում, որ էլ ասելու չի»,*
- *«Կոնդի դպրոցի փակվելը մյուս կողմից էլ լավ ա նրանով, որ էլ կոնդեցիք մենակ իրանք չեն դպրոցում, ուրիշների հետ էլ կշփվեն: Թե չէ ստեղ համ հայաթում, համ դպրոցում նույն մարդիկ էին: Ու էս դպրոց փակվելուց հետո կարող ա ավելի լավ լինի էդ տեսանկյունից»:*

*(Ծնողներ)*

***Շենքային և գույքային պայմաններ***

Հետազոտության ընտրանքում ընդգրկված 20 աշակերտի ծնողների գերակշիռ մեծամասնության կարծիքով՝ N23 դպրոցն ուներ հիմնանորոգման կամ կոսմետիկ վերանորոգման կարիք: Դպրոցի հիմնանորոգման անհրաժեշտության մասին են նշել նաև հարցման մասնակից ուսուցիչները:

Ընդհանուր առմամբ, հարցվողներն ավելի բարձր, դրական են գնահատել իրենց երեխաների ներկայիս (ոչ միայն իրավահաջորդ) դպրոցի շենքային պայմանները՝ համեմատած նախկին՝ N23 դպրոցի համանման պայմանների հետ:

«Ձեր կարծիքով, այժմյան դպրոցի շենքային պայմաններն ավելի լա՞վն են՝ համեմատած նախկին (փակված) դպրոցի հետ» հարցին ի պատասխան հարցված գրեթե բոլոր ծնողները (19-ը՝ 20-ից) տվել են «միանշանակ այո» կամ «այո» պատասխանը:

- *«Նախկին դպրոցը լավ վիճակում չէր, սանհանգույցները շատ վատն էին, ջուր չկար»,*
- *«Խարխլված, հին շինություն էր, վերանորոգման կարիք ուներ»,*
- *«Ոնց որ Կոնդն ա հին, նույն կերպ էլ՝ դպրոցը»,*
- *«Նոր դպրոցի տնօրենը ամեն ինչ արել է պայմանները բարելավելու համար, սանհանգույցները, բուֆետը շատ լավն են, վերանորոգված են»,*
- *«Մենակ արտաքինից էլ տեսնեք՝ հերիք է: Որ անձրև էր գալիս, պետք է լինեիք Կոնդի դպրոցում (N 23 դպրոցում), որ տեսնեիք հետևանքները»,*
- *«Երկու շենքերն էլ (և նախկինը, և իրավահաջորդը) առանձնապես լավ վիճակում չեն, երկուսի ներսն այնպիսի վիճակ է, որ աշակերտին դժվար տրամադրի ավելի լավ սովորելուն»:*

*(Ծնողներ)*

***Աշակերտների՝ դեպի իրավահաջորդ դպրոց տեղաշարժի հետ կապված խնդիրները***

Երևանի քաղաքապետարանից հարցմամբ ստացված տվյալների համաձայն, 2017թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ (երբ վերակազմակերպման գործընթացն արդեն ավարտվել էր), վերակազմակերպված դպրոցի աշակերտները տեղափոխվել էին հետևյալ կրթական հաստատությունները.

- 33 աշակերտ՝ Երևանի N5 հիմնական դպրոց (իրավահաջորդն է, հեռավորությունը N23 դպրոցից՝ մոտ 300 մետր),
- 7 աշակերտ՝ Երևանի N24 հիմնական դպրոց (հեռավորությունը N23 դպրոցից՝ մոտ 400 մետր),
- 3 աշակերտ՝ Երևանի N1 հիմնական դպրոց (հեռավորությունը N23 դպրոցից՝ մոտ 1200 մետր),
- 2 աշակերտ՝ Երևանի N42 ավագ դպրոց (հեռավորությունը N23 դպրոցից՝ մոտ 400 մետր),
- Այլ դպրոցներ տեղափոխված աշակերտների թիվը ցածր է՝ յուրաքանչյուր դպրոցում՝ 1-2 աշակերտ:

N23 և իրավահաջորդ դպրոցների միջև հեռավորությունը շուրջ 300 մետր է, ինչի պատճառով իրավահաջորդ դպրոց տեղափոխված աշակերտների տեղաշարժի հետ կապված խնդիրներ չեն առաջացել:

Այնուամենայնիվ, նոր դպրոց հասնելու ժամանակը փոքր-ինչ աճել է: Եթե նախկինում ոտքով N23 դպրոց գնալու և վերադառնալու համար աշակերտները միջինում ծախսում էին մոտ 4 րոպե, ապա հիմա նոր դպրոց հասնելու և տուն վերադառնալու համար միջինում 20 րոպե են ծախսում՝ շուրջ 16 րոպեով ավելի շատ:

Թեև իրավահաջորդ դպրոցի հեռավորությունը նախկին դպրոցից այնքան էլ մեծ չէ, այնուամենայնիվ, այն տեղաշարժման խնդիրներ է առաջացրել երեխաներից մեկի համար: Ծնողներից մեկը նշել է. *«Իմ երեխան հիվանդ է, նա անվասայլակի վրա է: Այն ժամանակ նախկին դպրոց գնալուց իր ընկերները գալիս էին, նրան տանում դպրոց: Իսկ հիմա այլևս հնարավոր չէ գնալ անվասայլակով»:*

Վերոնշյալ դեպքում աշակերտը դպրոց է գնում և վերադառնում տաքսիով, ինչի համար ընտանիքն ամսական 36.000 դրամ է ծախսում:

Աշակերտների տեղաշարժման հիմնական խնդիրն այն է, որ նոր՝ իրավահաջորդ դպրոցի մոտ հետիոտնի անցում չկա, իսկ մոտակա անցումներն էլ կահավորված չեն լուսացույցներով, ինչը վտանգներ է առաջացնում երեխաների համար:

- *«Դպրոցի մոտ անցում չկա, անցում կա դպրոցից մի փոքր վերև ու մի փոքր ներքև: Անցումների մոտ լուսացույցներ չկան դրված, էդ ճանապարհն էլ շատ վտանգավոր ա, արագ են քշում: Ոստիկան միայն առաջին շաբաթն էր կանգնած անցումների մոտ, հետո էլ չկար»:*
- *«Անցում կա, որը պետք է անցնեն, այն ժամանակ ոչ մի անցում չկար: Դրա համար երեխայի հետ գնում-գալիս ենք»:*

*(Ծնողներ)*

Յոթ աշակերտի ծնողներ նշել են, որ դպրոցի փոփոխության արդյունքում աճել են սննդի վրա կատարվող ծախսերը: Եթե նախկինում երեխաները մեծ դասամիջոցին գալիս էին տուն՝ ընդմիջում անելու համար, ապա հիմա սնվում են դպրոցում: Միջինում մեկ երեխայի համար (նշված 7 դեպքում) այդ ծախսն ամսական 6000 դրամ է:

*Աշակերտների հոգեբանական և սոցիալական ադապտացիայի խնդիրները*

Որպես դպրոցի վերակազմակերպման բացասական հետևանք՝ հարցված ծնողները նշել են երեխաների ադապտացիայի դժվարությունների և նույնիսկ՝ երեխաների հանդեպ խտրականության ու կոնֆլիկտների մասին:

Յարմարման հետ կապված խնդիրներ.

- *«Երեխաների համար ուժեղ սթրես էր, չէին հարմարվում սկզբում, բայց որոշ ժամանակ անց սովորեցին: Երեխաս սկզբում դպրոց չէր ուզում գնալ, չգիտեմ ինչու, բայց հետո սովորեց»,*
- *«Երեխաները ոչ մի կերպ չեն ընդունում նոր դպրոցը, անձնակազմը: Ուսուցիչների խոսելաձևը երբեմն այնպիսին չի, ինչպես պետք է լիներ: Նախկին դպրոցում այդպես չէր, նման ձևի խոսելաձև չի եղել: Նոր երեխաների հետ հիմնականում չի շփվում, հին դպրոցի երեխեքը, որ գնացել են իր հետ, միայն իրենց հետ է շփվում»:*

*(Ծնողներ)*

Խտրականության դրսևորումներ.

- *«Եղել են խնդիրներ այդ (իրավահաջորդ) դպրոցի այլ ծնողների հետ, ովքեր չընդունեցին մեր երեխաներին, տարբերակում էին դնում երեխաների մեջ, ի զարմանս նրա, որ դպրոցի վաթսուն տոկոսը հենց Կոնդից էին: Դա խոչընդոտ էր ստեղծում, բայց հետո հասկացան, որ էդ երեխաները այդքան էլ վատը չեն, ու նույնիսկ ավելի լավ են սովորում, քան իրենք»,*
- *«Ուսուցիչները տարբերակում են դնում հին դպրոցի և մեր գնացած երեխաների միջև: Օրինակ, կարող են դասը սովորած չլինել և հին դպրոցի երեխաները, և նոր տեղափոխվածները: Բայց նկատողություն կստանան տեղափոխվածները: Իհարկե, լավ չի, որ անպատրաստ ա գնացել իմ երեխան, բայց ինքը երեխա ա, ու տեսնում ա այդ տարբերակումը»,*
- *«Առաջին ամսում կռիվներ եղել են, որովհետև երեխաներին չէին ընդունում, տարբերակում էին, մականուններով էին դիմում (օրինակ՝ «Ոչլոտ կոնդեցիք»): Չէին ընդունում որպես իրենց հավասարի. սենց մի նստի, նենց մի արա: Բայց հետագայում հարմարվեցին, ադապտացվեցին»,*
- *«Խնդիրներ եղել են ոչ միայն աշակերտների մեջ, այլ նաև ծնողների միջև: Նոր դպրոցի ծնողները ասել են՝ «Կոնդի բոշաներն են եկել», «Կոնդեցիները եկել են, մեզ խանգարում են»:*

*(Ծնողներ)*

Կոնֆլիկտներ.

- *«Կոնֆլիկտներ են եղել երեխաների մեջ և, կարելի ա ասել, հիմա էլ շարունակվում են, դեռ երեխան չի հարմարվել»,*
- *«Կոնֆլիկտներ են եղել ծնողների մեջ նույնպես: Ծնողներից մեկը ասել էր, որ եկել են Կոնդի դպրոցից, մեզ խանգարում են: Մի քանի ծնողներով բողոքել էին այդ կապակցությամբ, տնօրենի մոտ նույնպես գնացել էին»:*

*(Ծնողներ)*

Վերոնշյալ խնդիրները մասամբ հաղթահարվել են իրավահաջորդ դպրոցի տնօրինության և ուսուցիչների աջակցությամբ: Որոշակի մասնագիտական միջամտություն է եղել նաև իրավահաջորդ դպրոցի հոգեբանի կողմից:

*Գործազրկությունը և այլ սոցիալական հետևանքները*

Երևանի քաղաքապետարանից հարցմամբ ստացված տվյալների համաձայն, 2017թ. հունվարի դրությամբ (նախքան վերակազմակերպման որոշման ընդունումը), N 23 դպրոցում աշխատում էին 17 ուսուցիչներ և մանկավարժական այլ աշխատողներ (որոնցից 3-ը՝

կենսաթոշակային տարիքի), ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի 8 աշխատողներ (որոնցից 2-ը՝ կենսաթոշակային տարիքի):

2017թ. դեկտեմբերի 15-ի դրությամբ (երբ վերակազմակերպման գործընթացն ավարտվել էր), ըստ Երևանի քաղաքապետարանի տվյալների, Երևան քաղաքի դպրոցներում էին աշխատում վերակազմակերպված N23 դպրոցի նախկին 12 ուսուցիչներ: N23 դպրոցի ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմից 2017թ. դեկտեմբերի դրությամբ աշխատում էր միայն մեկ անձ:

Հարցման մասնակից ծնողները նշել են, որ դպրոցի վերակազմակերպման հետևանքով դպրոցի աշխատակազմից զգալի թվով անձինք (թե ուսուցիչներ, թե ուսումնաօժանդակ անձնակազմի ներկայացուցիչներ) գործազուրկ են դարձել: Բացի այդ, N23 դպրոցի ուսուցիչներից գրեթե ոչ ոք չի տեղափոխվել իրավահաջորդ դպրոց:

- *«Ուսուցիչների մեծ մասը, որ համայնքի անդամ էին, շատերը այժմ գործ չունեն»,*
- *«Մինչ տեղափոխվելը կարծում էինք, որ մեր դպրոցով գնալու ենք միանանք, այսինքն՝ մեր դասատուների հետ, երեխաների հետ միասին: Բայց ստացվեց, որ մեր ոչ մի դասատու չեկավ նոր դպրոց: Շատ ծնողներ էլ այլ դպրոցներ տարան երեխաներին»:*

*(Ուսուցիչներ)*

Ի տարբերություն վերակազմակերպված մի շարք այլ դպրոցների, որտեղ ուսուցիչներն աշխատել են մինչև վերակազմակերպման գործընթացի ավարտը՝ 2017թ. սեպտեմբեր կամ հոկտեմբեր, այս դպրոցից հարցված 2 ուսուցիչն էլ նշել են, որ իրենց աշխատանքային պայմանագրերը խզվել են 2017թ. օգոստոսի վերջին: Աշխատավարձերը նույնպես վճարվել են մինչև 2017թ. օգոստոս ամիսը ներառյալ:

Հարցման մասնակից երկու ուսուցիչներն էլ նշել են, որ դպրոցի փակումից հետո իրենց աշխատանք է առաջարկվել նախկին՝ N23 դպրոցի տնօրենի և Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության կողմից: Երկու հարցվողներն էլ ներկայումս աշխատում են այդ առաջարկված պաշտոններում. ուսուցիչներ են այլ դպրոցներում: Երկուսն էլ սկսել են աշխատել նախկին դպրոցի հետ աշխատանքային պայմանագրերը խզվելուց մի քանի օր անց՝ 2017թ. սեպտեմբերի 1-ից: Երկու դեպքում էլ աշխատանքային պայմանագիր է կնքվել մեկ տարի ժամկետով՝ ինչպես նախկին դպրոցում էր:

Աշխատավայրի փոփոխության արդյունքում ուսուցիչներից մեկի աշխատանքային զբաղվածությունը փոքր-ինչ աճել է՝ 0.5 դրույքից դարձել է 0.75 դրույք, մյուս ուսուցչի զբաղվածությունը նվազել է. ամսական 17 դասաժամից՝ դարձել է 15 դասաժամ:

Հարցված ուսուցիչների մեկը նշել է նոր միջավայրին ադապտացման և մասնագիտական «ինքնահաստատման» դժվարությունների մասին. *«Նոր միջավայր է, տարիների ստեղծածը ջուրն է գնացել: Այն դպրոցում աշխատել էի, բոլորը գիտեին՝ ով եմ, ինչպիսի մասնագետ եմ: Իսկ այստեղ 0-ից եմ սկսել, պետք է ինձ սովորեն, հասկանան՝ ինչպիսի ուսուցիչ եմ»:*

Իր նախկին գործընկերների զբաղվածության վերաբերյալ ուսուցիչներից մեկը նշել է հետևյալը. *«Ուսուցիչների մի մասը, իհարկե, կարողացավ գտներ աշխատանք: Բայց մոտավորապես 30%-ը, որքանով ես եմ տեղյակ, չի գտել աշխատանք, և այժմ գործազուրկ է»:*

# Երևանի N43 դպրոց

*Դպրոցի վերակազմակերպման որոշման կայացումն ու դրա մասին իրազեկումը*

Նախքան դպրոցի վերակազմակերպման որոշման կայացումը, թե՛ ծնողների ու աշակերտների, թե՛ մանկավարժական կոլեկտիվի կարծիքը որևէ կերպ չի քննարկվել կամ ուսումնասիրվել: Դպրոցում չի իրականացվել ուսումնասիրություն կամ գնահատում` պարզելու վերակազմակերպման նպատակահարմարությունը, սկզբունքները կամ պայմանները:

Հարցված գրեթե բոլոր ծնողները (բացառությամբ մեկի), նշել են, որ դպրոցի վերակազմակերպման մասին տեղեկացել են 2017թ. սեպտեմբերի 1-ին: Ընդ որում, հարցվածների գրեթե կեսն այդ մասին իրազեկվել է դպրոցի տնօրենից կամ փոխտնօրենից, իսկ մյուս կեսը` իրենց երեխաներից:

Դպրոցների վերակազմակերպման անհրաժեշտության մասին տեղափոխված ուսուցիչների տեսակետները բավական բազմազան էին: Կառավարության որոշմանը համաձայնություն կամ անհամաձայնություն հայտնող կարծիքները գրեթե հավասարաչափ են բաշխվել:

- *«Համաձայն չեմ որոշման հետ, որովհետև մենք ԿԳՆ-ին ներկայացրել էինք նոր ուսումնական ծրագիր: Սակայն նրանք թույլ չտվեցին, որ դա անենք, այլ տեղափոխեցին նոր դպրոց: Եվ այդ ծրագիրը այս դպրոցում ենք անում, որն այդքան էլ արդյունավետ չի, քանի որ նախորդ դպրոցի համար էինք մենք կազմել այդ ծրագիրը»,*
- *«Կարելի էր դպրոցը պահել և մտածել` ինչպես աշակերտների թիվը ավելացնել: Փակելու որոշումը հեշտ որոշում էր»,*
- *«Քանի որ դպրոցներում աշակերտների թվաքանակն ավելի քիչ էր, իսկ դպրոցի ֆինանսավորումը իրականացվում է աշակերտաքանակով, հետևաբար, դպրոցի շենքը պահել չէր լինի: Սենց ավելի լավ ա, միասին են սովորում ու մրցակցություն կա: Բացի դա, ֆինանսավորումն ավելի ա շատացել հիմա, ու ավելի շատ բան կարան անեն, իսկ նախորդ դպրոցում ֆինանս համարյա չկար»,*
- *«Երեխաները արդեն քչացել էին, թող վերակազմակերպվեր, բայց շենքի փոփոխություն չիրականացվեր»:*

*(Ուսուցիչներ)*

Հարցված ուսուցիչներից մեկը նշել է, իր կարծիքով, դպրոցների օպտիմալացմանը հանգեցնող կարևոր պատճառներից մեկը. *«Մի խնդիր կա. եթե ամեն աշակերտ գնա իր համայնքի, իրեն մոտ դպրոցը, դպրոցների փակման խնդիր չի լինի: Քանի որ դպրոցները աշակերտաքանակով են ֆինանսավորվում, խնդրի առաջ չկանգնելու համար իրենց դպրոց ծանոթ-բարեկամի միջոցով երեխաներ են բերում: Դպրոցներ կան, նույնիսկ երկրորդ հերթով են աշխատում: Իսկ եթե ֆինանսավորումը աշակերտաքանակով չլիներ, դպրոցներում կլիներ հավասար բաշխում: Այսինքն, տնօրենները աշակերտ չէին փախցնի ֆինանսավորման համար»:*

*Կրթության որակ և կազմակերպում*

Աշակերտների ծնողներին հարց է ուղղվել այն մասին, թե ինչպես են գնահատում կրթության որակն իրենց նախկին և ներկայիս դպրոցում: Առավել տարածված են (գրեթե հավասար քանակությամբ) «հիմնականում լավ» և «բավարար» տարբերակները: Ընդ որում, դպրոցի փոփոխությունն ազդեցություն չի ունեցել կրթության որակի վրա: Հարցված յուրաքանչյուր ծնող, որպես կանոն, միևնույն տարբերակն է ընտրել` թե նախկին, թե ներկայիս դպրոցում կրթության որակի վերաբերյալ:

Ծնողների նմանատիպ պատասխանները սպասելի են, քանի որ, ըստ էության, մանկավարժական կոլեկտիվը մնացել է նույնը:

Կրթության որակի և կազմակերպման արդյունավետության վերաբերյալ ուսուցիչների պատասխանները բավական ցրված են և գրեթե հավասարաչափ բաշխված` դրական ակնկալիքներից մինչև որևէ դրական սպասման բացակայություն:

Դրական սպասումների բացակայությունը հիմնավորվում է հետևյալ բնույթի պատասխաններով:

- *«Կարենք, կտեսնենք: Դպրոցների վերակազմավորումը կապ չունի կրթության որակի հետ, որակը կարող էր բարձրանալ նաև առանց վերակազմավորման»,*
- *«Եթե 2 տարբեր դպրոցի երեխաներին խառնենք (ընդ որում՝ կրթության որակները տարբեր), արդյունքում առավել լավ սովորողները կտուժեն դրանից»:*

*(Ուսուցիչներ)*

Դրական ակնկալիքները հիմնականում կապված են այն հանգամանքի հետ, որ աշակերտների թվաքանակի ավելացումը նպաստելու է նոր միջավայրի ձևավորմանը, նրանց միջև մրցակցության խթանմանը: Բացի այդ, դրական ազդեցություն կարող է ունենալ N16 դպրոցի փորձի և դասավանդման նոր մեթոդների ներդրումը:

- *«Քանի որ երեխաները քիչ էին, իրենք այդքան ջանասիրաբար դաս չէին անում, չէին սովորում: Հիմա կարող է ավելի արդյունավետ լինել»,*
- *«Նոր ծրագրային մեթոդները, որով գործում էր համար 16 դպրոցը, կարող է նպաստել այս դպրոցում կրթության որակի բարձրացմանը»:*

*(Ուսուցիչներ)*

***Շենքային պայմաններ***

Թե հետազոտության ընտրանքում ընդգրկված աշակերտների ծնողների, թե ուսուցիչների կարծիքները՝ նախկին և ներկա դպրոցների շենքային պայմանների վերաբերյալ, բավական բազմազան էին: Դրական և բացասական կարծիքները գրեթե հավասարաչափ էին բաշխված, ուստի դժվար է որոշակի օրինաչափություն դուրս բերել: Ծնողներից մեկն, օրինակ, հետևյալ կարծիքն է հայտնել. «Նոր դպրոցի տարածքն ավելի մաքուր է, ավելի է նման դպրոցի՝ հա՛մ կահավորումը, հա՛մ նորոգվածությունը»: Կային նաև հակառակ կարծիքներ. «Սանհանգույցները (նոր դպրոցի) շատ վատ վիճակում են, ընդհանուր դպրոցի շենքը լավը չէ»:

Ստորև ներկայացված են ուսուցիչների մի քանի, առավել հաճախ կրկնվող դիտարկումները.

- *«Համեմատած նախկինի հետ, ավելի լավն է, սակայն դեռ վերանորոգման կարիք ունի: Օրինակ տանիքի հետ կապված խնդիր կար, մեր տնօրենը վերանորոգեց դա: Հիմնական խնդիրը ներկայիս դպրոցի, սանհանգույցի հետ կապված խնդիրն է, որն անտանելի վիճակում է, սակայն միջոցներ դեռ չունենք, որ վերանորոգենք»,*
- *«Սանհանգույցը շատ վատ վիճակում է, կտուրը ունի վերանորոգման կարիք, դասասենյակները ունեն կոսմետիկ վերանորոգման կարիք»:*

*(Ուսուցիչներ)*

***Աշակերտների՝ դեպի իրավահաջորդ դպրոց տեղաշարժի հետ կապված հնարավոր խնդիրներն ու հավելյալ ծախսերը***

Հետազոտության ընտրանքում ընդգրկված 7 աշակերտի ծնող նշել են, որ դպրոցի փոփոխության արդյունքում աճել են տրանսպորտի վրա կատարվող ծախսերը: Ծախսերն աճել են նվազագույնը՝ ամսական 6.000 դրամից մինչև առավելագույնը՝ 30.000 դրամի միջակայքում: Միջինում, յոթ երեխաներից յուրաքանչյուրի համար, տրանսպորտի ամսական հավելյալ ծախսը կազմել է 16.000 դրամ:

Տրանսպորտային նման բարձր ծախսերի պատճառն այն է, որ մեծ թվով երեխաներ սկսել են օգտվել տաքսուց՝ միայնակ, կամ խմբով (դասընկերներով): Տաքսուց օգտվելու հիմնական պատճառներն են՝ և՛ համապատասխան երթուղիների պակասը (միայն մեկ երթուղի է կապում նախկին և ներկա դպրոցների մերձակա տարածքները), և՛ հանրային տրանսպորտի անկանխատեսելի չվացուցակը (առավոտյան դասից ուշանալու հավանականությունը շատ բարձր է):

- *«Մենակ 11 համարի մարշրուտկան ա: Դա էլ հազարից մեկ ա գալիս»:*
- *«Մի մարշրուտկա ա ընդամենը դպրոցի մոտ եկող: Ժամը մեկ ա գալիս համարյա»:*

*(Ծնողներ)*

Կան նաև երեխաներ, որոնց բնակարանը բավական հեռու է գտնվում հանրային տրանսպորտի կանգառից և պետք է երկար քայլել՝ կանգառ հասնելու համար: Բացի այդ, հանրային

տրանսպորտի կանգառը հեռու է տեղակայված նաև նոր դպրոցից (ոտքով՝ մոտ 10-15 րոպե): Այս պայմաններում հանրային տրանսպորտից օգտվելը դառնում է ոչ նպատակահարմար: Միակ պատշաճ այլընտրանքն է մնում տաքսուց օգտվելը: Հարցված ծնողներից մեկը նշել է. *«Նախկին դպրոցը տանն ավելի մոտ էր, տրանսպորտի խնդիրը մեծ ազդեցություն չուներ, հիմա ունի, միայն տաքսիով ենք կարողանում գալ դպրոց: Գրավոր կերպով արտահայտել եմ բողոքս՝ դիմում գրելով և՛ տնօրենին, և՛ ԿԳՆ, և՛ վարչապետին»:*

Հարցվողներից երկուսի պարագայում է դպրոցի վերակազմակերպումը դրական նշանակություն ունեցել՝ դյուրին տեղաշարժման առումով: Նոր դպրոցը այդ աշակերտների տներին ավելի մոտ է տեղակայված, քան նախկինը: Եթե անցյալում այս աշակերտներին միջինում 40 րոպե էր հարկավոր՝ ոտքով N 16 դպրոց հասնելու համար, ապա հիմա այդ ժամանակը էականորեն կրճատվել է:

Եթե նախկինում որոշ երեխաներ դասամիջոցին կարողանում էին գնալ տուն՝ ընդմիջում անելու համար, ապա հիմա, հեռավորության պատճառով, այդ հնարավորությունը չունեն և սնվում են դպրոցում կամ դրա շրջակայքում: Երեք երեխայի ծնողներ նշել են, որ աճել են նաև դպրոցական սննդին ուղղված ծախսերը. ամսական, միջինում, մեկ երեխայի համար՝ մոտ 8000 դրամ:

Հարցվողները նշել են, որ որոշ երեխաներ տեղափոխվել են այլ (ոչ իրավահաջորդ) դպրոցներ, քանի որ վերակազմակերպված (փաստացի փակված) դպրոցին հարակից տարածքում տեղակայված դպրոցները քիչ են:

***<u>Աշակերտների հոգեբանական և սոցիալական ադապտացիայի խնդիրները</u>***

Որպես դպրոցի վերակազմակերպման բացասական հետևանք՝ հարցված ծնողները նշել են երեխաների ադապտացիայի դժվարությունների մասին: Օրինակ, ծնողներից մեկն ասել է. *«Սկզբում երեխաները նեղվում էին, քանի որ նոր դպրոցի երեխաները, իրենց կարծիքով, թարս էին նայում իրենց, չէին ցանկանում շփվել: Կամ, ասենք, ֆիզկուլտուրայի պարապմունքի ժամանակ իրենց հետ չէին խաղում, իրենց գնդակ չէին փոխանցում, և այլն: Բայց ընթացքում երեխաները ադապտացվեցին»:*

Ընդհանուր առմամբ, ի տարբերություն հետազոտված այլ դպրոցների, երեխաների հարմարման խնդիրներն այստեղ այնքան էլ ցայտուն չէին արտահայտված, քանի որ «... ամբողջ դասարանով են տեղափոխվել, նոր միջավայր չէր, ադապտացիայի կարիք չի զգացվել»:

Երեխաների հնարավորինս արագ և սահուն հարմարմանը նպաստել է այն հանգամանքը, որ նրանք տեղափոխվել են նախկին դպրոցի գրեթե բոլոր դասընկերների և մանկավարժական կոլեկտիվի հետ համատեղ: Նախկին սոցիալական միջավայրի կարևոր տարրերը պահպանվել են, և դրան է միացել նոր դպրոցի սոցիալական միջավայրը:

Երեխաների միջև ծագած միջանձնային խնդիրները հարթվել են մանկավարժական անձնակազմի միջամտությամբ (ժողովներ, դասղեկների և այլ ուսուցիչների անհատական զրույցներ, հոգեբանի աջակցություն, և այլն):

***<u>Գործազրկությունը և այլ սոցիալական հետևանքները</u>***

Ըստ հարցվողների տրամադրած տեղեկությունների, N16 դպրոցի 16 ուսուցիչներից 9-ը ներկայումս շարունակում են աշխատանքը նույն դպրոցում, ևս մի ուսուցիչ աշխատանքի է ընդունվել այլ դպրոցում (ոչ իրավահաջորդ): Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի 9 անդամներից 6-ը նույնպես շարունակում են աշխատել դպրոցում:

Մյուս 6 ուսուցիչները և ուսումնաօժանդակ ու սպասարկող անձնակազմի 3 ներկայացուցիչները, ըստ հարցվողների, ներկայումս չեն աշխատում: Հայտնի է միայն, որ աշխատանքից ազատված ուսուցիչներից մեկը և ուսումնաօժանդակ անձնակազմի մի ներկայացուցիչ արտագաղթել են՝ աշխատանք չունենալու պատճառով (ըստ նախկին գործընկերների տրամադրած տեղեկությունների):

N16 դպրոցի մանկավարժական կոլեկտիվի՝ ներկայումս չաշխատող 3 անձանց հետ հարցում է իրականացվել: Ներկայումս չաշխատող ուսուցիչներին չի առաջարկվել որևէ այլ աշխատանք՝ ոչ դպրոցում, ոչ էլ այլ վայրում. *«Սկզբից խոստանում էին, որ աշխատանքներ լինելու են, բայց ոչ մի աշխատանքի առաջարկություն էլ չեղավ»:* Մեկ այլ, ներկայումս չաշխատող ուսուցիչ նշել է. *«Ինձ չեն կոպտել, վեճ չենք ունեցել: Պարզապես կուլտուրական ձևով դուրս թողեցին (առաջարկվող*

*զբաղվածությունը և վարձատրությունը շատ ցածր է եղել): 4-5 ժամ պետք ա ունենայի, 4-5 ժամի համար հասնելն անիմաստ է: Գրեթե ամբողջը (աշխատավարձը) տրանսպորտի կտայի, քանի որ հեռու է դպրոցը»:*

Ներկայումս աշխատող ուսուցիչներից մեկին *«... սպառնացել են տարիքի համար դուրս հանել (կրճատել): Եթե ես համառ չլինեի, ինձ միանշանակ աշխատանքից ազատած կլինեին, քանի որ նոր ու երիտասարդ մասնագետներ են ուզում»:*

Ներկայումս աշխատանքը շարունակող մանկավարժների զբաղվածությունը որոշակի փոփոխություններ է կրել:

Ուսուցիչներից մեկի աշխատանքային զբաղվածությունն աճել է՝ 0.5 դրույքից դառնալով 1 դրույք, մյուս ուսուցչի զբաղվածությունն աճել է՝ 0.5 դրույքից դառնալով 1.25 դրույք:

3 ուսուցչի աշխատանքային զբաղվածությունը նվազել է: Երկուսինը՝ 0.75 դրույքից դարձել է 0.5 դրույք, մի ուսուցչինը՝ 1 դրույքից՝ 0.5 դրույք:

Եվս 3 ուսուցչի զբաղվածությունը մնացել է նույնը:

N16 դպրոցի ուսումնաօժանդակ կազմից հարցմանը մասնակցած 5 անձանց աշխատանքային զբաղվածությունը գրեթե նույնությամբ (բացառությամբ մեկ անձի, ում զբաղվածությունն աճել է) պահպանվել է նաև նոր դպրոցում:

Հարցմանը մասնակցած ուսուցչական կազմի և ուսումնաօժանդակ անձնակազմի 7 ներկայացուցիչ նշել են, որ աշխատավայրի փոփոխության արդյունքում ավելացել են տրանսպորտային ծախսերը (հիմնականում՝ տաքսուց օգտվելու կամ հանրային տրանսպորտի երկու և ավելի երթուղիներ օգտագործելու համար):

### *Այլ խնդիրներ*

Ըստ կառավարության համապատասխան որոշման, վերակազմակերպման հետ կապված ծախսերը պետք է կատարվեին իրավահաջորդ դպրոցի միջոցների հաշվին: Դրանց շարքին է պատկանում, օրինակ, վերակազմակերպվող դպրոցի գույքի, արխիվի տեղափոխությունը՝ իրավահաջորդ դպրոց: Քանի որ իրավահաջորդ դպրոցի բյուջեում համապատասխան ծախսեր նախատեսված չէին, գույքի տեղափոխությունն իրականացվել է դպրոցի անձնակազմի ջանքերով և անձնական միջոցներով:

Ուսուցիչներից մեկը նշել է, օրինակ, որ իրեն չեն աջակցել ուսումնական գործունեությանը նպաստող իրերի տեղափոխմանը. *«Ես իմ նյութերը, օրինակ, ստուգողական աշխատանքների տետրերը, բոլորը միայնակ եմ բերել: Բացարձակ չեն աջակցել»:*

# Եզրահանգումներ

**Հայաստանում դպրոցների վերակազմակերպման գործընթացի բացերը՝ կրթության իրավունքի իրացման տեսանկյունից**

- Հայաստանում դպրոցների օպտիմալացման քննարկվող գործընթացը ՀՀ օրենսդրության և ՀՀ միջազգային պարտավորությունների ու ընդունված սկզբունքների խախտումների էական ռիսկեր է պարունակում: Հատկապես գյուղական դպրոցների վերակազմակերպման պարագայում լուրջ խոչընդոտներ են առաջանում՝ Կրթության մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները) 2-րդ մասի դրույթների (կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ) իրագործման առումով:
- Կրթության շարունակականության սկզբունքի ապահովումն, օրինակ, վտանգված է այն իրավիճակներում, երբ միացված դպրոցներում տարբեր օտար լեզուներ են դասավանդվում: Փաստացի փակված դպրոցի աշակերտները ստիպված են լինում իրավահաջորդ դպրոցում նոր օտար լեզու յուրացնել: Այս հետազոտության ընթացքում այդ խնդիրը բացահայտվել է առնվազն 2 դպրոցում՝ գյուղական և քաղաքային:
- Վտանգված են նաև Կրթության մասին ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի (Կրթական իրավունքի պետական երաշխիքները) 1-ին մասի դրույթը (ՀՀ-ն ապահովում է կրթության իրավունք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային դրությունից կամ այլ հանգամանքներից), ինչպես նաև նույն հոդվածի 2-րդ մասի դրույթը (Պետությունը կրթության իրավունքն ապահովում է կրթության համակարգի բնականոն գործառնությամբ և կրթություն ստանալու համար սոցիալ-տնտեսական պայմանների ստեղծմամբ): Կարծում ենք՝ դպրոցների օպտիմալացումն էականորեն բարդացնում է հատկապես գյուղաբնակ երեխաների կրթության կազմակերպումը:
- Օպտիմալացման գործընթացը հակասության մեջ է նաև ՀՀ կրթության զարգացման 2011-2015թթ. պետական ծրագրի դրույթների հետ, որոնցով նախատեսված էր՝ մինչև 2015թ. բոլոր մակարդակներում բարձրացնել կրթության մատչելիությունը, ստեղծել հավասար հնարավորություններ, որ յուրաքանչյուրը ստանա առավել որակյալ կրթություն՝ իր նախասիրություններին և ընդունակություններին համապատասխան, ընդլայնել դպրոցահասակ երեխաների (ներառյալ՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող), ազգային փոքրամասնությունների և խոցելի մյուս բոլոր խմբերի երեխաների՝ որակյալ հիմնական կրթություն ստանալու հնարավորությունները՝ ստեղծելով ներառական կրթության հնարավորություններ բոլոր հանրակրթական դպրոցներում: Վերջապես, կրթության զարգացման ծրագրում նշված էր նաև, որ պետությունը պարտավորություն ունի ապահովելու որակյալ կրթության մատչելիությունը քաղաքացիների համար՝ ստեղծելով հավասար հնարավորություններ և բարելավելով ուսումնական հաստատությունների կարողությունները, որի կարևոր նախապայմանն է ռեսուրսների արդյունավետ և արդարացի բաշխումը:
- Խնդիրներ են առաջացել նաև ՀՀ միջազգային պարտավորությունների կատարման հարցում: Մասնավորապես, Կրթության բնագավառում խտրականության դեմ կոնվենցիայի առաջին հոդվածն արգելում է որևէ անձի կամ անձանց խմբի՝ ցանկացած տեսակի կամ մակարդակով կրթություն ստանալու հնարավորությունից զրկելը, որևէ անձի կամ անձանց խմբի կրթությունը ցածր ստանդարտով սահմանափակելը: Կարծում ենք՝ գյուղական դպրոցների վերակազմակերպումը գյուղաբնակ երեխաներին փաստացի զրկում է կրթություն ստանալու հնարավորությունից, ինչպես նաև նախատեսում է նրանց կրթության կազմակերպման ավելի ցածր ստանդարտներ (կրթության միջավայրի, ենթակառուցվածքների և այլ պայմանների առումով):
- Այսպիսով, կրթության հասանելիությունը և մատչելիությունը ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով կրթության անհատական իրավունքի առաջնային բաղադրիչն է, որի ապահովումն էականորեն վտանգվում է օպտիմալացման գործընթացի արդյունքում (օրինակ՝ դպրոցները կամ դեպի դրանց ճանապարհները առավել վտանգի աղբյուրների գործողության տիրույթ տեղափոխելով, դպրոցները մեծ հեռավորության վրա տեղափոխելով և աշակերտների

անվտանգ փոխադրում չապահովելով): Թեև կրթության իրավունքը բացարձակ իրավունք չէ, սակայն այն ուղղակիորեն կապված է երեխաների անվտանգության, կյանքի ու առողջության իրավունքի հետ: Այս իմաստով, պետությունը պարտավոր է ապահովել երեխայի լավագույն շահը, նրա անվտանգությունը, առողջությունը, որը բացարձակ իրավունք է:

- Դպրոցների օպտիմալացման արդյունքում խախտվել են նաև Կրթության մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները) հետևյալ դրույթները. կրթության բնագավառում ժողովրդավարության սկզբունքների ապահովումը և ուսումնական հաստատությունների ողջամիտ ինքնավարությունը: Ինչպես վերը ցույց է տրվել՝ կոնկրետ դեպքերի նկարագրությամբ, դպրոցների վերակազմակերպման որոշումները կայացվել են ոչ ժողովրդավարական եղանակով, կրթության անմիջական շահառուների կարծիքը հաշվի չի առնվել և չի ուսումնասիրվել՝ որոշումները նախապատրաստելիս: Դպրոցները չեն ունեցել «ողջամիտ ինքնավարություն»՝ իրենց հետագա ճակատագրի տնօրինման հարցում:
- Վերջապես, դպրոցների օպտիմալացման արդյունքում սահմանափակվել է ծնողների՝ իրենց երեխաների համար ուսումնական հաստատություն ընտրելու ազատությունը (ինչը ևս ՀՀ միջազգային պարտավորությունների կարևոր սկզբունքներից է):

**Դպրոցների վերակազմակերպման վերաբերյալ ՀՀ կառավարության որոշումներում առկա խնդիրները**

- Դպրոցների վերակազմակերպման քննարկվող գործընթացը կարգավորվում է ՀՀ կառավարության որոշումներով: Բացակայում է (առնվազն՝ հանրության համար հասանելի չէ) լիազոր մարմնի կողմից պատրաստված, վերակազմակերպման գործընթացի համապարփակ կարգավորումն ապահովող փաստաթուղթը, որտեղ պետք է նշված լինեին գործընթացի նպատակներն ու խնդիրները, սկզբունքներն ու պայմանները, կոնկրետ թիրախներն ու ծախսային արդյունավետությունը:
- Կառավարության համապատասխան որոշումներում որպես դպրոցի վերակազմակերպման կրկնվող փաստարկ՝ հիմնականում նշված է սովորողների ցածր թվաքանակը: Գրեթե բոլոր վերակազմակերպված դպրոցներում, ըստ ուսուցիչների և ծնողների, վերջին տարիներին նկատվել է սովորողների թվի աճ[44]: Հետազոտության մասնակիցների կողմից սովորողների թվի աճ է կանխատեսվել նաև 2018-2019 ուսումնական տարվա համար՝ հատկապես առաջին դասարանցիների մուտքի շնորհիվ: Կառավարության որոշումներում դպրոցների վերակազմակերպման անհրաժեշտությունը հիմնավորող սովորողների թվաքանակը համադրված չէ դրա դինամիկայի և կանխատեսումների հետ: Սովորողների թվաքանակի դինամիկայի վերլուծության բացակայությունը խոցելի է դարձնում այդ որոշումները:
- Դպրոցների վերակազմակերպման որոշումների մեկ այլ խնդիր է դրանց հիմնավորվածությունը՝ սոցիալական արդարության տեսանկյունից: Ուսումնասիրված գրեթե բոլոր դեպքերում հարցվողներն այդ որոշումներն անարդար են համարում՝ մատնանշելով այլ՝ ավելի քիչ սովորողներ ունեցող կամ կրթության կազմակերպման ավելի վատ պայմաններ առաջարկող, սակայն դեռևս չվերակազմակերպված դպրոցների օրինակներ: Առանձին որոշման մեջ բացակայում է հիմնավորումն այն մասին, թե դպրոցների ամբողջ համախմբությունից ինչու և ինչ չափանիշներով են վերակազմակերպման համար ընտրվել հենց դրանք: Վերակազմակերպվող դպրոցի ընտրության սկզբունքները հստակ և թափանցիկ չեն:
- Թեև կառավարության որոշումներում նշվում է ուսումնական տարածքների օպտիմալ օգտագործման, միացվող դպրոցներում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման, կրթության որակի բարձրացման մասին, սակայն նշված չեն այդ ակնկալվող արդյունքների ապահովման, այնուհետև՝ դրանց չափման և գնահատման մեթոդները: Ուսումնասիրված բոլոր որոշումներում երկու միացվող դպրոցներից միայն մեկի շենքն է նախատեսվում օգտագործել ուսումնական նպատակներով: Այսպիսով, ուսումնական տարածքի օպտիմալ օգտագործումը միայն իրավահաջորդ դպրոցին է վերաբերում, մինչդեռ մյուս՝ փաստացի

[44] Սա շահագրգիռ կողմերի տեսակետն է, որը կարող է հիմնված չլինել փաստերի անկողմնակալ գնահատման վրա:

փակվող դպրոցի շենքը ուսումնական նպատակների չի ծառայելու: Աշակերտների բնականոն ուսումնական գործընթացի՝ առավել արդյունավետ կազմակերպման և կրթության որակի բարձրացման նպատակները ևս հռչակագրային բնույթ ունեն:

- Կառավարության որոշումներում որևէ հիմնավորում չկա այն մասին, թե վերակազմակերպումն ինչպես և ինչ չափով է նպաստելու ուսումնական գործընթացի արդյունավետությանը և կրթության որակի բարձրացմանը, և ինչպես պետք է գնահատվեն ակնկալվող ձեռքբերումները: Նույն խնդիրն է բնորոշ նաև որոշումներում հաճախ հանդիպող մեկ այլ նպատակի. «Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար ստեղծել պայմաններ, կրթական ուսումնական հաստատությունները համալրել մանկավարժական ներուժով»: Իրականում, մանկավարժական ներուժով համալրման շահառու կարող է համարվել միայն իրավահաջորդ դպրոցը: Մինչդեռ փաստացի փակվող դպրոցում մանկավարժական ներուժի զգալի մասը դուրս է մղվում կրթական գործընթացից:
- Մի շարք որոշումներում հանդիպում է նաև հետևյալ ակնկալվող արդյունքը. «... վերոնշյալ ՊՈԱԿ-ների միացման արդյունքում՝ ապահովել դրանց գործունեության արդյունավետության բարձրացումը և պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործումը»: Ինչպես վերը նշված դեպքերում, այստեղ ևս բացակայում են պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործման կոնկրետ գործողությունները: Բացակայում է նաև ֆինանսական հաշվարկն այն մասին, թե որքան միջոց է խնայվելու դպրոցների վերակազմակերպման արդյունքում: Ըստ էության, փաստացի, սա ենթադրում է բյուջեի միջոցների պարզ խնայողություն: Որևէ կարգավորում չկա այն մասին, որ այդ խնայված միջոցները (գոնե մասամբ) ուղղվելու են իրավահաջորդ դպրոցին:
- Ուսումնասիրված դեպքերից երկուսում ՀՀ ԿԳՆ-ն առարկություն է ներկայացրել Կառավարության համապատասխան որոշումների նախագծերի վերաբերյալ՝ նշելով, որ ԿԳՆ-ն ՀՀ մարզպետարանների հետ համատեղ քննարկում էր հանրապետությունում գործող քաղաքային դպրոցների օպտիմալացման հարցը, ինչի համար՝ ներկայումս նպատակահարմար չի գտնում անդրադառնալ գյուղական դպրոցների վերակազմակերպմանը: ԿԳՆ առաջարկն էր՝ շրջանառությունից հանել գյուղական դպրոցների վերակազմակերպման և գույքը հետ վերցնելու մասին որոշման նախագծերը: Սակայն այս առարկությունները չեն ընդունվել ՀՀ կառավարության կողմից, ինչը խնդրահարույց է՝ կրթության բնագավառում պետական լիազոր մարմնի դիրքորոշումն անտեսելու առումով:
- Փյունիկի դպրոցի վերակազմակերպման առաջին որոշման մեջ նախատեսված ժամկետների համաձայն, դպրոցի վերակազմակերպումը պետք է ավարտվեր երկամսյա ժամկետում՝ մինչև 2017թ. հոկտեմբերի 24-ը: ՀՀ կառավարության 2017թ. նոյեմբերի 16-ի նիստում կայացվեց 2-րդ որոշումը՝ ՀՀ կառավարության 2017թ. օգոստոսի 24-ի թիվ N1039-Ա որոշման մեջ լրացում կատարելու մասին, համաձայն որի, Փյունիկի դպրոցի վերակազմակերպման գործընթացը սկսվելու է 2018թ. հունիսի 1-ից: Այսպիսով, 2-րդ որոշման կայացման պահին՝ 2017թ. նոյեմբերի 16-ին, Փյունիկի դպրոցն արդեն պետք է վերակազմակերպված լիներ: Մինչդեռ 2-րդ որոշման մեջ որևէ անդրադարձ չկա այդ հարցին: Ըստ էության, կառավարության առաջին որոշումը պարզապես չի իրագործվել նախատեսված երկամսյա ժամկետում և գործ ունենք իրավական հակասության հետ:

**Դպրոցների վերակազմակերպման որոշումների մշակումն ու դրանց մասին իրազեկումը**

- Դպրոցների վերակազմակերպման որոշումների մշակման գործընթացում աշակերտների, նրանց ծնողների և դպրոցի անձնակազմի կարծիքը չի քննարկվել կամ ուսումնասիրվել:
- Որևէ դպրոցում չի իրականացվել համակողմանի ուսումնասիրություն/գնահատում՝ պարզելու վերակազմակերպման նպատակահարմարությունը, սկզբունքները, պայմանները, հնարավոր հետևանքներն ու դրանց հաղթահարման ուղիները:
- Վերակազմակերպման ենթակա դպրոցներին հնարավորություն չի տրվել շտկելու այն խնդիրները, որոնք հիմք են դարձել վերակազմակերպման գործընթացի համար:
- Կառավարության համապատասխան որոշումները կայացվել են առավել «անհարմար» ժամանակահատվածում (2017թ. օգոստոսի 24, նոր ուսումնական տարին սկսելուց մեկ շաբաթ առաջ): Հետազոտության մասնակիցների գերակշիռ մասը դպրոցի վերակազմակերպման մասին

տեղեկացել է օգոստոսի վերջին կամ սեպտեմբերի 1-ին: Որոշման մասին շահառուներին իրազեկելու միատեսակ և պատշաճ ձևաչափ չի եղել: Որոշ դպրոցներում հատուկ այդ նպատակով ծնողական և մանկավարժական կոլեկտիվների ժողովներ են տեղի ունեցել, այլ դպրոցներում շահառուներն ու ուսուցիչները տեղեկացել են պատահաբար, ծանոթներից և գործընկերներից, էլեկտրոնային լրատվամիջոցներից և այլ աղբյուրներից:

- Թե՛ Կառավարության որոշումների կայացման անհարմար ժամանակահատվածը, թե՛ դրանց պատշաճ իրազեկման բացակայությունը հնարավորություն չի տվել ընտանիքներին՝ պլանավորելու երեխաների ուսման կազմակերպման այլընտրանքային տարբերակները (օրինակ՝ իրավահաջորդ դպրոցի փոխարեն՝ այլ դպրոցների ուսումնասիրություն և ընտրություն): Ճիշտ է, դպրոցների վերակազմակերպման բուն գործընթացը երկամսյա ժամկետում է իրականացվել և ծնողները բավարար ժամանակ ունեին այլ դպրոցների ուսումնասիրության համար, սակայն երեխաների տեղափոխությունը՝ այլ դպրոցներ, ուսումնական տարվա միջնամասում, չի կարելի արդյունավետ մոտեցում համարել:
- Վերակազմակերպվող որոշ դպրոցներում մանկավարժական կոլեկտիվը հորդորել է ծնողներին դեռևս չսկսել երեխաների տեղափոխության գործընթացը, սպասել վերակազմակերպման որոշման հնարավոր չեղարկմանը կամ հետաձգմանը: Դպրոցի ճակատագրի վերաբերյալ անորոշության զգացումը՝ ամրապնդված նաև ոչ պաշտոնական լուրերով, նույնպես խոչընդոտել է աշակերտների բնականոն տեղափոխությանը՝ իրենց նախընտրած դպրոցները: Անորոշության և սպասողական վիճակի պատճառով աշակերտներն «ավտոմատ կերպով» ճանաչվել են իրավահաջորդ դպրոցի սովորողներ, թեև, բավարար ժամանակ ունենալու և պատշաճ իրազեկված լինելու դեպքում, կարող էին այլ դպրոցներ ընտրել:
- Հարցվողների (թե՛ ծնողների, թե՛ ուսուցիչների) գերակշիռ մասը ծանոթ չէր Կառավարության համապատասխան որոշումների բովանդակությանը և բերված հիմնավորումներին: Դպրոցների վերակազմակերպումն ու միացումը մեկնաբանվում էր որպես «դպրոցի փակում»: Դիտորդների կողմից համապատասխան որոշումներից արված մեջբերումները (օրինակ՝ «Հանրության բարձրորակ կրթության ապահովման համար պայմանների ստեղծում», «Կրթական ուսումնական հաստատությունների՝ մանկավարժական ներուժով համալրում», «Դպրոցների գործունեության արդյունավետության բարձրացում», և այլն) հիմնավորված, արդարացված չէին թվում հարցվողների գերակշիռ մեծամասնությանը: Վերջիններս չէին պատկերացնում, թե նշված խնդիրներն ու ակնկալվող արդյունքներն ինչպես են ապահովվելու:

**Կրթության որակ և կազմակերպում (ներառյալ՝ շենքային և գույքային պայմանները)**

- Հարցվողները դժվարացել են նշել դպրոցների վերակազմակերպման արդյունքում կրթության որակի բարելավման կոնկրետ դրսևորումներ: Գրեթե հավասարաչափ էին բաշխված հակադիր պատասխաններն այն մասին, որ դպրոցի փոփոխության արդյունքում կրթության որակը տուժել է կամ բարելավվել: Հնարավոր է՝ կրթության որակի գնահատման՝ ծնողների դժվարությունները պայմանավորված են այն հանգամանքով, որ հետազոտությունն իրականացվել է դպրոցների վերակազմակերպման ավարտից շուրջ 4-5 ամիս անց, ինչն էլ թույլ չի տվել լիարժեք պատկերացում ձևավորելու կրթության որակի փոփոխության մասին նոր՝ ընդունող դպրոցում:
- Կրթության որակի վրա բացասաբար ազդող գործոնների շարքում առաջին հերթին նշվել են երեխաների ադապտացիոն խնդիրները (պայմանավորված մանկավարժական և ընկերական միջավայրի փոփոխությամբ) և նոր դասարաններում երեխաների բարձր թվաքանակը (ցածր խտությամբ դասարաններում ուսուցիչներն անհատական մոտեցում էին ցուցաբերում յուրաքանչյուրի աշակերտի):
- Կրթության որակի հետ կապված մեկ այլ խնդիր վերաբերում է օտար լեզուների ուսուցմանը: Ուսումնասիրված առնվազն երկու դեպքում վերակազմակերպված և իրավահաջորդ դպրոցներում տարբեր օտար լեզուներ էին դասավանդվում: Տեղափոխված աշակերտները, որոնք վերակազմակերպված դպրոցում այլ լեզու էին սովորել, իրավահաջորդ դպրոցում պետք է նոր օտար լեզու յուրացնեն, ինչը հատկապես դժվար է բարձր դասարանների երեխաների համար: Այս հանգամանքը նաև օտար լեզվի կրկնուսուցման հավելյալ ծախսերի պատճառ է դարձել:

- Վերակազմակերպումը միշտ չէ, որ հանգեցրել է կրթության միջավայրի (հատկապես՝ շենքային և գույքային պայմանների) բարելավման: Դպրոցների վերակազմակերպման երեք դեպքում (Երևանում, Փարաքարում, Փյունիկում), ըստ շահառուների գնահատման, իրավահաջորդ դպրոցի շենքային և գույքային պայմաններն ավելի վատն են, քան՝ փաստացի փակված դպրոցի համանման պայմանները:
- Թեև փակված դպրոցների գույքը հիմնականում փոխանցվել է իրավահաջորդ դպրոցներին, սակայն պարզ չէ՝ արդյոք իրավահաջորդ դպրոցներն ունեին դրա կարիքը և ինչպես են օգտագործելու այն: Գույքի ընդունումն առավելապես մեկնաբանվում էր որպես լրացուցիչ բեռ՝ իրավահաջորդ դպրոցի համար. սկսած գույքի տեղափոխումից՝ մինչև դրա պահեստավորումը: Փակված դպրոցների գույքն ու այլ ռեսուրսները հիմնականում չեն օգտագործվում իրավահաջորդ դպրոցների կողմից:
- Կառավարության որոշումներով նախատեսված էր, որ գույքի տեղափոխումը պետք է իրականացվի իրավահաջորդ դպրոցի միջոցների հաշվին: Սա նույնպես խնդրահարույց կարգավորում էր, քանի որ իրավահաջորդ դպրոցների բյուջեներում նման ծախսեր նախատեսված չէին: Այդ գույքը հիմնականում տեղափոխվել է ծնողների, համայնքի բնակիչների, իրավահաջորդ տնօրենի անձնական միջոցների հաշվին:

**Աշակերտների հոգեբանական և սոցիալական ադապտացիայի խնդիրները**

- Որպես դպրոցի վերակազմակերպման բացասական հետևանք՝ հարցված ծնողներն ու ուսուցիչներն առավել հաճախ նշել են նոր դպրոցներում երեխաների սոցիալական և հոգեբանական ադապտացիայի դժվարությունների մասին: Որոշ դպրոցներում եղել են տեղափոխված աշակերտների նկատմամբ խտրականության ու պիտակավորման ակնհայտ դրսևորումներ (թե՛ ուսուցիչների, թե՛ այլ աշակերտների ծնողների կողմից):
- Թեև ներկայումս (2018թ. փետրվար-մարտի դրությամբ) աշակերտների հարմարման և սոցիալական լարվածության այլ խնդիրները հիմնականում հաղթահարված են, սակայն հետազոտությունը պարզեց, որ չի եղել այդ խնդիրների կանխատեսման, կանխարգելման և հաղթահարման միասնական մոտեցում: Ընդունող դպրոցների մանկավարժական կոլեկտիվներն իրավիճակային միջամտություն են իրականացրել՝ սովորողների կամ նրանց ծնողների միջև ծագած կոնֆլիկտների հարթման համար: Աշակերտների՝ տեղափոխության հետ կապված հնարավոր սթրեսների կանխարգելման, նոր միջավայրին նրանց նախապատրաստման ուղղությամբ որևէ համակարգված աշխատանք չի իրականացվել:
- Հարմարման և սոցիալական լարվածության խնդիրները, պակաս չափով, բնորոշ են եղել նաև ուսուցիչների՝ նոր կոլեկտիվներում ներառմանը: Կոնֆլիկտային իրավիճակների հիմնական պատճառը սահմանափակ ժամաքանակի վերաբաշխումն է՝ նոր ուսուցիչներով համալրված կոլեկտիվներում:

**Դեպի իրավահաջորդ դպրոց տեղաշարժի հետ կապված խնդիրները**

- Դպրոցների վերակազմակերպման բոլոր դեպքերում աճել է սովորողների տեղաշարժի համար անհրաժեշտ ժամանակը: Ուսումնասիրված բոլոր դեպքերում, անկախ տեղաշարժման եղանակից (ոտքով կամ տրանսպորտով) սովորողները միջինում 2 անգամ ավելի շատ ժամանակ են ծախսում դպրոց հասնելու և վերադառնալու համար:
- Որոշ դեպքերում աշակերտները, նոր դպրոց գնալիս, ստիպված են փողոց/ներ հատել, ինչի անհրաժեշտությունը նախկինում չկար: Երևանի իրավահաջորդ դպրոցների մեկի մոտ, օրինակ, ըստ ծնողների, հետիոտնային անցում չկա, իսկ ամենամոտ անցումներն էլ կահավորված չեն լուսացույցներով:
- Ուսուցիչները ևս, որոնց աշխատավայրը փոխվել է, ավելի շատ ժամանակ են ծախսում աշխատանքի գնալու և վերադառնալու վրա: Մարզային բնակավայրերում կան դեպքեր, երբ

ուսուցչի նոր աշխատավայրն այլ համայնքում է` դրանից բխող դժվարություններով և հավելյալ ծախսերով: Մի քանի դեպքում կրճատված ուսուցիչներն ընտանիքներով մշտական բնակության են տեղափոխվել այլ համայնք:

- Վերակազմակերպման գործընթացում հաշվի չեն առնվել ԿԱՊԿՈՒ երեխաների տրանսպորտային տեղաշարժի հետ կապված խնդիրները, ինչպես նաև այն հարցը, թե արդյոք իրավահաջորդ դպրոցները հարմարեցված են այդ երեխաների կարիքների համար:

**Գործազրկությունը և այլ սոցիալական հետևանքները**

- Զգալի թվով ուսուցիչներ և դպրոցի այլ աշխատողներ օպտիմալացման արդյունքում գործազուրկ են դարձել: Ուսումնասիրված դեպքերում, վերակազմակերպման գործընթացի ավարտից 4-5 ամիս անց` հետազոտության իրականացման պահին, որևէ աշխատանք չունեին փակված դպրոցների առնվազն 23 ուսուցիչներ և ուսումնաօժանդակ անձնակազմի առնվազն 18 աշխատողներ: Սրանք հետազոտության ընթացքում բացահայտված, դիտորդներին հասանելի տվյալներն են, մինչդեռ խնդրի իրական ծավալները կարող են ավելի մեծ լինել: Բացի այդ, այս տվյալները վերաբերում են վերակազմակերպված դպրոցների շուրջ 1/3-ին (միայն հետազոտության ընտրանքում ներառվածներին): Բնականաբար, վերակազմակերպված բոլոր դպրոցներում առանց աշխատանքի մնացած անձանց թիվը շատ ավելի մեծ է:
- Վերակազմակերպված դպրոցների մանկավարժական և ուսումնաօժանդակ անձնակազմի անդամների հնարավոր գործազրկության խնդրին արձագանքող համակարգային մոտեցում չի եղել: Պետական և համայնքային մարմինների` իրենց ենթակայության ներքո գտնվող դպրոցների կրճատված աշխատողներին ցուցաբերված աջակցությունը հիմնականում իրավիճակային բնույթ է կրել:
- Այն դեպքերում, երբ ուսուցիչները շարունակել են մանկավարժական գործունեությունը (թե՛ իրավահաջորդ, թե՛ այլ դպրոցում), նրանց աշխատանքային զբաղվածությունը հիմնականում նվազել է` նախկին աշխատանքային զբաղվածության ծավալի (դրույքի) համեմատ: Բնականաբար, նվազել է նաև այդ ուսուցիչների աշխատավարձը:
- Վերակազմակերպված դպրոցների` ներկայումս այլ դպրոցներում աշխատող ուսուցիչների շրջանում կար մտավախություն առ այն, որ իրենց աշխատանքով ապահովելը միջանկյալ լուծում է` ուղղված սոցիալական բողոքի կանխարգելմանը: Պարբերաբար ակտիվանում են լուրերն այն մասին, որ 2018թ. սեպտեմբերից այդ ուսուցիչների մեծ մասը կրճատվելու է:

**Դպրոցի վերակազմակերպման արդյունքում հավելյալ ծախսերի առաջացումը**

- Դպրոցների փոփոխության արդյունքում բազմաթիվ դեպքերում աճել են աշակերտների և ուսուցիչների հավելյալ ծախսերը` տրանսպորտի, սննդի, որոշ դեպքերում` նաև կրկնուսուցման համար:
- Եթե նախկինում հնարավոր էր դպրոց հասնել ոտքով, ապա այժմ երեխաների մի մասը ստիպված է օգտվել հանրային տրանսպորտից: Մայրաքաղաքում, օրինակ, դա մեկ երեխայի համար ամսական միջինում 4500 դրամի հավելյալ ծախս է ենթադրում: Տրանսպորտային հավելյալ ծախսերի մյուս պատճառը տաքսուց օգտվելն է, որն իր հերթին հետևանք է համապատասխան երթուղիների պակասի (օրինակ` միայն մեկ երթուղի է կապում Երևանի երկու վերակազմակերպված դպրոցների մերձակա տարածքները), հանրային տրանսպորտի անկանխատեսելի չվացուցակի կամ կանգառներից հեռու, անհարմար տեղակայման: Տաքսուց օգտվելու պատճառով առաջ եկած ծախսերը, բնականաբար, ավելի բարձր են նշված 4500-ից:
- Բացահայտվել է առնվազն մեկ դեպք, երբ անվասայլակով (և ընկերների օգնությամբ) դպրոց գնացող երեխան ներկայումս ստիպված է օգտվել տաքսու ծառայություններից, քանի որ իրավահաջորդ դպրոցը համեմատաբար հեռու է:

**Դպրոցների վերակազմակերպման այլ հետևանքները**

- Ի տարբերություն մայրաքաղաքի փակված դպրոցների շահառուների, մարզային (հատկապես՝ գյուղական բնակավայրերի) փակված դպրոցների շահառուները չունեն դպրոցի ընտրության այլընտրանքներ: Որպես կանոն, նրանք հարկադրված են տեղափոխվելու իրավահաջորդ դպրոց, անկախ այն հանգամանքից՝ ցանկանում են այնտեղ սովորել թե ոչ:
- Ուսումնասիրված դեպքերից մեկում (մարզային քաղաք) դպրոցների թվի կրճատումը հանգեցրել է դրանց միջև մրցակցության չեզոքացման, և որպես հետևանք, սովորողների հանդեպ ուսուցիչների վերաբերմունքի բացասական (կոպիտ, անհարգալից) փոփոխության: Եթե նախկինում ուսուցիչները կաշկանդված էին այն հանգամանքով, որ «դժգոհ» աշակերտները կարող են տեղափոխվել այլ կրթական հաստատություն, ապա այժմ այդ զսպող գործոնն այլևս չկա: Այս խնդիրը հատկապես ակտուալ է մարզային բնակավայրերում, որտեղ օպտիմալացումն առավել ցցուն է դարձնում այլընտրանքների բացակայությունը:
- Յուրաքանչյուր դպրոց ունի տարիների ընթացքում ձևավորված որոշակի մշակույթ՝ դասավանդման յուրահատուկ մոտեցումներով, դպրոցական ավանդույթներով, և այլ առանձնահատկություններով: Դպրոցների օպտիմալացման բացասական հետևանքներից է կայացած, փորձառու մանկավարժական կոլեկտիվների փլուզումն ու այդ մշակույթի վերացումը:

**Գյուղական բնակավայրերում դպրոցների վերակազմակերպման առանձնահատուկ ազդեցությունը**

Գյուղական բնակավայրերում դպրոցների վերակազմակերպման առկա և կանխատեսվող բացասական հետևանքներն ավելի ցայտուն են.

- Գյուղերում աշակերտների տեղաշարժը՝ դեպի այլ համայնքների դպրոցներ, ռիսկեր է պարունակում երեխաների կյանքի և առողջության համար: Այդ ռիսկերն առավել ակնհայտ են բարձր լեռնային շրջանների բնակլիմայական վատ պայմաններում (օրինակ՝ ձնաբքի պայմաններում փակված ճանապարհներին մնալու վտանգը):
- Գյուղերում աշակերտների տրանսպորտային տեղաշարժի ապահովումը բարդ է՝ հանրային տրանսպորտի անհարմար և անկանխատեսելի չվացուցակի, անապահով ընտանիքների համար առաջացող լրացուցիչ ծախսերի, և այլ պատճառներով: Անգամ աշակերտների տեղափոխության համար հատկացված փոխադրամիջոցի առկայության պարագայում էլ մնում են մի շարք խնդիրներ: Օրինակ, դասերը մյուսներից շուտ ավարտող ցածր դասարանների երեխաները ստիպված են լինում սպասելու ավելի բարձր դասարանների աշակերտներին՝ նրանց հետ միասին գյուղ վերադառնալու համար: Կամ՝ բարձր դասարանների աշակերտներին ազատում են վերջին դասերից՝ նույն նպատակով (խմբով վերադառնալու համար):
- Աշակերտների՝ այլ բնակավայրում դպրոց հաճախելու արդյունքում թուլանում է դպրոց-աշակերտ-ծնող կապը: Ծնողական համայնքը դպրոցի կյանքին մասնակցության ավելի քիչ հնարավորություն է ստանում:
- Գյուղում դպրոցի գործառությունն ունի համայնքաստեղծ և համայնքապահպան կարևոր նշանակություն: Դրա բացակայությունը համայնքի անդամների կողմից մեկնաբանվում է որպես բնակչության արտահոսքի լուրջ խթան: Հետազոտված մարզային համայնքներում դպրոցի օպտիմալացման հետևանքով մի քանի ընտանիքներ արդեն իսկ տեղափոխվել են այլ համայնքներ (այդ թվում՝ արտերկիր): Կանխատեսվում է, որ հետագա տարիներին դպրոցի բացակայությունն էլ ավելի է խորացնելու այդ խնդիրը:
- Գյուղում դպրոցը նաև կարևոր մշակութային գործառույթ ունի: Այն համայնքի բնակիչների համար մշակութային կյանքին առնչվելու եզակի հարթակներից ու հնարավորություններից է: Դպրոցի բացակայությունն էականորեն աղքատացնում է գյուղական համայնքի մշակութային կյանքը:

**Դպրոցների վերակազմակերպման դրական հետևանքներն են.**

- Իրավահաջորդ դպրոցում աշակերտների թվաքանակի ավելացումը, և որպես հետևանք, աշակերտների միջև մրցակցության խթանումը:

- Սովորողների սոցիալական միջավայրի «թարմացումն» ու համալրումը, նոր սոցիալական կապերի ու հարաբերությունների ձևավորումը, համայնքային կյանքին բնորոշ «փակ» մշակույթի «բացումը»:
- Վերակազմակերպված որոշ դպրոցներում աշակերտների՝ դասերից բացակայության, ուշացումների, ցածր առաջադիմության նկատմամբ ձևավորված լոյալ մոտեցման հաղթահարումը և նոր դպրոցներում ավելի «խիստ», կարգապահությանն ու կրթական վերջնարդյունքների ապահովմանը միտված մոտեցումների կիրառությունը:

## Առաջարկություններ

**Դպրոցների վերակազմակերպման գործընթացի վերաբերյալ**

1. ՀՀ-ում դպրոցների վերակազմակերպման ներկայիս գործընթացն անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել և, նախքան որևէ ձևաչափով դրա շարունակությունը, իրականացնել արդյունքների և հետևանքների համակողմանի ուսումնասիրություն (ներառյալ՝ դիտարկել այս հետազոտության արդյունքները):

2. Դպրոցների օպտիմալացումը պետք է լինի կրթական առավել լայն բարեփոխումների մի մասը: Դպրոցի վերակազմակերպումը պետք է դիտարկվի որպես ածանցյալ խնդիր, բազմաթիվ քայլերից մեկը՝ կրթության որակի ապահովման ավելի ընդգրկուն վերջնարդյունքին հասնելու ճանապարհին:

3. Դպրոցների վերակազմակերպման գործընթացը շարունակելու պարագայում անհրաժեշտ է հանրությանը ներկայացնել համապարփակ ծրագիր, որտեղ պատասխաններ կլինեն նաև այս հետազոտությամբ բարձրաձայնված խնդիրներին: Միայն կառավարության որոշումները բավարար չեն՝ ռեֆորմների արդյունավետ իրականացման համար: Ակնկալվող համակողմանի ծրագրում պետք է խորությամբ հիմնավորված լինի դպրոցների վերակազմակերպման անհրաժեշտությունը, պետք է ներկայացված լինեն այդ գործընթացի հեռահար նպատակներն ու ակնկալվող արդյունքները: Վերջապես, պետք է շարադրված լինեն դպրոցների օպտիմալացման այնպիսի սկզբունքներ, որոնք կերաշխավորեն յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի անխոչընդոտ իրացումը, կրթության մատչելիության, հասանելիության և հավասարության ապահովումը:

*(ՀՀ կառավարություն, ՀՀ ԿԳՆ)*

**Դպրոցների վերակազմակերպման որոշումների վերաբերյալ**

4. Դպրոցների վերակազմակերպման հնարավոր հաջորդ որոշումներում անհրաժեշտ է խուսափել կրկնվող, հռչակագրային բնույթի ձևակերպումներից: Հիմնավորումներն ու ակնկալվող արդյունքները պետք է լինեն խիստ հասցեական և արտացոլեն առանձին դպրոցի յուրահատուկ իրավիճակը: Եթե նախատեսված է, օրինակ, կրթության որակի բարձրացման նպատակ, պետք է ներկայացված լինեն նաև դրան հասնելու կոնկրետ ուղիները և որակի գնահատման չափանիշները: Նույնը վերաբերում է նաև բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործման, սովորողների բնականոն ուսուցման ապահովման և նմանատիպ այլ խնդիրների ձևակերպմանը:

*(ՀՀ կառավարություն, ՀՀ ԿԳՆ, ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն, ՀՀ մարզպետարաններ)*

**Առանձին դպրոցի վերակազմակերպման վերաբերյալ**

5. Յուրաքանչյուր դպրոցի վերակազմակերպման որոշմանը պետք է նախորդի դրա նպատակահարմարության, հնարավոր դրական ու բացասական հետևանքների, ռիսկերի մանրակրկիտ վերլուծություն: Այն իր հերթին պետք է ձևավորված լինի դպրոցի բոլոր շահառուների կարծիքների համակողմանի ուսումնասիրության և դպրոցի պայմանների գնահատման հիման վրա: Որպես դպրոցի վերակազմակերպման ելակետ պետք է վերցնել ոչ միայն տվյալ պահի դրությամբ սովորողների թվաքանակը, այլ՝ տվյալ դպրոցում սովորողների թվի՝ վերջին տարիների դինամիկան և դրա կանխատեսվող փոփոխությունները, ինչպես նաև՝ տեղական առանձնահատկություններն ու պայմանները:

*(ՀՀ ԿԳՆ, մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան)*

6. Վերակազմակերպման ենթակա (թեկնածու) դպրոցներին անհրաժեշտ է առկա իրավիճակի բարելավման հնարավորություն ընձեռել: Շահագրգիռ կողմերի աջակցությամբ դպրոցը կարող է կազմել գործողությունների ծրագիր՝ ուղղված կրթության որակի բարելավմանը, կրթական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպմանը, կրթության կազմակերպման միջավայրի բարելավմանը, ֆինանսական միջոցների առավել արդյունավետ տնօրինմանը, և այլն: Միայն այդ ծրագրի իրականացումից հետո, գնահատելով արդյունքները, կարելի է վերջնական որոշում կայացնել դպրոցի վերակազմակերպման անխուսափելիության մասին:

**Դպրոցների վերակազմակերպման հնարավոր սկզբունքների վերաբերյալ**

7. Դպրոցների վերակազմակերպման ապագա ծրագրում (եթե այդպիսին լինի) անհրաժեշտ է ամրագրել մի շարք սկզբունքներ: Մասնավորապես.

7.1 Գյուղական դպրոցների փաստացի փակման (լուծարման, վերակազմակերպման կամ այլ եղանակով) արգելքի սահմանում[45],

7.2 Դպրոցների վերակազմակերպման գործընթացի նախաձեռնում միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում (սահմանելով ծայրահեղ անհրաժեշտության պայմանները/չափանիշները),

7.3 Վերակազմակերպման ենթակա դպրոցի ընտրության սկզբունքների և ընտրության բուն գործընթացի առավելագույն թափանցիկության ապահովում,

7.4 Վերակազմակերպման ենթակա դպրոցի ընտրության գործընթացում սոցիալական արդարության և հավասարության սկզբունքների պահպանում (դպրոցի շահառուների համար պետք է պարզ լինի, թե բոլոր դպրոցների համախմբությունից ինչու և ինչպես է ընտրվել հենց իրենց դպրոցը),

7.5 Դպրոցի մանկավարժական կոլեկտիվի, դպրոցի շահառուների և համայնքի անդամների ակտիվ մասնակցություն՝ վերակազմակերպման որոշման մշակմանն ու քննարկմանը,

7.6 Սովորողին և նրա ուսումնական առաջադիմությունը չվնասելու[46] սկզբունքի ամրագրում (վերակազմակերպման արդյունքում սովորողների կրթության որակը, առողջությունն ու անվտանգությունը, սոցիալական միջավայրը, շենքային և գույքային պայմանները, ուսումնառության այլ պայմանները պետք է չզիջեն նախորդ դպրոցի (և համայնքի) համանման պայմաններին),

7.7 Սովորողի ընտանիքին չվնասելու սկզբունքի ամրագրում (վերակազմակերպման արդյունքում սովորողի ընտանիքի համար պետք է չավելանան լրացուցիչ ծախսեր՝ տրանսպորտի, սննդի, կրկնուսուցման և այլ ուղղություններով),

7.8 Ընդունող դպրոցի ներառականության պայմանների ապահովում և հատուկ ուշադրություն ԿԱՊԿՈՒ երեխաների տեղափոխության, տեղաշարժի ու ներառման խնդիրներին:

*(ՀՀ կառավարություն, ՀՀ ԿԳՆ)*

**Դպրոցների վերակազմակերպման այլընտրանքային մոդելների վերաբերյալ**

8. Անհրաժեշտ է ուսումնասիրել և կիրառել դպրոցների օպտիմալացման այլընտրանքային մոտեցումներ: Օրինակ, կարող է փորձարկվել վարչական օպտիմալացման մոդելը: Մի քանի դպրոցներ կարող են միավորվել որպես մեկ իրավաբանական անձ՝ միաժամանակ պահպանելով յուրաքանչյուր դպրոցի մանկավարժական անձնակազմն ու կրթության կազմակերպման միջավայրը (դպրոցի շենքը): Այս մոտեցումը թույլ կտա բյուջեի միջոցների խնայողություն անել՝ միաժամանակ պահպանելով դպրոցների մանկավարժական կազմը: Մասնակի՝ վարչական օպտիմալացման շնորհիվ կկրճատվի վարչական անձնակազմի (տնօրեններ, փոխտնօրեններ, հաշվապահներ, այլ) թվաքանակը, իսկ տնտեսված միջոցները կուղղվեն միավորված դպրոցներում կրթության որակի բարելավմանը: Այս մոդելի կիրարկման արդյունքում ակնկալվում է միավորված դպրոցի կառավարման խորհրդի կարողությունների ուժեղացում և դրա անկախության մակարդակի բարձրացում (նոր անձանց մուտքի շնորհիվ): Կընդլայնվեն աշակերտների՝ տարատեսակ կրթական ծառայություններից օգտվելու հնարավորությունները, քանի որ միավորված դպրոցները մեկը մյուսին կփոխլրացնեն իրենց ուժեղ կողմերով (օրինակ՝ մի դպրոցում

---

[45] Գյուղական դպրոցների օպտիմալացումը կարող է իրականացվել միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում՝ գյուղաբնակ երեխաների որակյալ կրթության ապահովման անհնարինության պայմաններում:

[46] Չվնասելու սկզբունքը վերաբերում է նաև այն իրավիճակների անթույլատրելիությանը, երբ փակված և նոր (ընդունող) դպրոցներում տարբեր օտար լեզուներ են դասավանդվում: Այս հետազոտության շրջանակներում այդ խնդիրը բացահայտվել է առնվազն 2 դպրոցում՝ գյուղական և քաղաքային:

դասավանդման նորարար մեթոդներ են օգտագործվում, մյուսում՝ զարգացած ենթակառուցվածքներ կան, և այլն):

9. Դպրոցի վերակազմակերպման այլընտրանքներից մեկը կարող է լինել հեռավար ուսուցման ընդլայնված կիրառումը՝ հատկապես հեռավոր գյուղական բնակավայրերի սովորողների համար: Հեռավար ուսուցումը թույլ կտա լրացնել դասավանդման ավանդական մոտեցման պարագայում առաջ եկած հնարավոր բացերը (օրինակ՝ ուսուցիչների պակասը, մի ուսուցչի կողմից մի քանի առարկայի դասավանդումը, և այլն): Հեռավար ուսուցման միջոցով կրթության որակի բարելավումն ու առկա խնդիրների շտկումը թույլ կտա խուսափել դպրոցի փակման որոշումից:

*(ՀՀ կառավարություն, ՀՀ ԿԳՆ)*

**Միավորված դպրոցների մասնակցային կառավարման վերաբերյալ**

10. Դպրոցների միավորման դեպքերում անհրաժեշտ է ապահովել իրավահաջորդ դպրոցի կառավարման խորհրդի, ծնողական և աշակերտական խորհուրդների վերընտրության և/կամ վերակազմավորման գործընթացն այն նպատակով, որ դպրոցի նոր շահառուները դրանց մաս կազմելու հավասար հնարավորություն ունենան:

*(Իրավահաջորդ դպրոց)*

**Դպրոցների վերակազմակերպման որոշումների իրազեկման վերաբերյալ**

11. Անընդունելի է դպրոցների վերակազմակերպման մասին ուսումնական տարվա մեկնարկին (օգոստոսի վերջ, սեպտեմբերի 1) իրազեկելու պրակտիկան: Եթե դպրոցի վերակազմակերպման գործընթացն անխուսափելի է, անհրաժեշտ է թե՛ դպրոցի անձնակազմին, թե՛ սովորողներին ու նրանց ընտանիքներին իրազեկել ողջամիտ ժամկետներում, որպեսզի վերջիններս կարողանան պլանավորել իրենց հետագա կրթության/աշխատանքի հետ կապված հարցերը: Ընդ որում, պետք է կիրառել շահառուների իրազեկման այնպիսի ձևաչափ և եղանակ, որպեսզի այդ տեղեկատվությունը մատուցվի հնարավորինս հանրամատչելի կերպով:

*(ՀՀ ԿԳՆ, մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան)*

**Ընդունող դպրոցներում սովորողների ինտեգրման վերաբերյալ**

12. Հատուկ ուշադրության է արժանի ընդունող դպրոցներում (ոչ միայն իրավահաջորդ) սովորողների հոգեբանական և սոցիալական ադապտացիայի խնդիրը: Ընդունող դպրոցների անձնակազմը պետք է պատրաստված լինի նոր աշակերտների ինտեգրմանը, այդ թվում՝ հոգեբանների, սոցիալական աշխատողների ու սոցիալական մանկավարժների միջամտությամբ: Պետք է բոլոր միջոցները գործադրվեն՝ ընդունող դպրոցում սովորողների հանդեպ խտրականությունն ու միջանձնային կոնֆլիկտները բացառելու համար:

*(Իրավահաջորդ դպրոց)*

**Հավելյալ ծախսերի փոխհատուցման վերաբերյալ**

13. Անհրաժեշտ է գործարկել դպրոցի վերակազմակերպման հետևանքով թե՛ սովորողների ընտանիքների, թե՛ ուսուցիչների համար առաջացող լրացուցիչ ծախսերի փոխհատուցման մեխանիզմներ: Սովորողների դեպքում, օրինակ, դրանք կարող են լինել տրանսպորտի, սննդի և լրացուցիչ կրթական ծրագրերին մասնակցության ծախսերը:

*(ՀՀ կառավարություն, մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան)*

**Սովորողների տրանսպորտային տեղաշարժի ապահովման վերաբերյալ**

14. Դպրոցների վերակազմակերպման բոլոր դեպքերում անհրաժեշտ է ապահովել սովորողների համար հասանելի, մատչելի (որոշ դեպքերում՝ անվճար) և անվտանգ տրանսպորտային տեղաշարժը: Այս խնդրի լուծումը հատկապես հրատապ է գյուղական բնակավայրերում:

*(ՀՀ մարզպետարաններ և Երևանի քաղաքապետարան)*

**Գործազրկության և այլ անցանկալի սոցիալական հետևանքների հաղթահարման վերաբերյալ**

15. Վերակազմակերպման արդյունքում աշխատանքից ազատվող ուսուցիչներին, ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմի անդամներին անհրաժեշտ է առաջարկել արժանապատիվ աշխատանքի այլ տարբերակներ: Եթե աշխատանքի փոփոխության արդյունքում ի հայտ են եկել հավելյալ ծախսեր (օրինակ՝ տրանսպորտային տեղաշարժի կամ մասնագիտական վերապատրաստման), անհրաժեշտ է ապահովել դրանց փոխհատուցումը: Այլ դպրոցներում առաջարկվող աշխատանքի պարագայում անհրաժեշտ է հնարավորինս ապահովել դրա ծավալի (զբաղվածության, դրույքի) համարժեքությունը՝ նախկին աշխատանքի ծավալին:

16. Պետք է ամրագրել հստակ չափանիշներ, թե դպրոցների վերակազմակերպման հետևանքով հաստիքների կրճատման արդյունքում անձնակազմի որ անդամներին է տրվելու իրավահաջորդ դպրոցում աշխատանքի շարունակության հնարավորություն, ինչպես և ում կողմից են նրանք ընտրվելու: Կադրերի ընտրության ընթացակարգերը պետք է հնարավորինս բացառեն կողմնակալությունն ու շահերի բախումը հատկապես այն իրավիճակներում, երբ որոշում կայացնողը իրավահաջորդ դպրոցի տնօրենն է:

17. Վերակազմակերպումից հետո դպրոցներում աշխատանքով ապահոված ուսուցիչներին պետք է տրամադրվեն վստահելի երաշխիքներ առ այն, որ աշխատանքով ապահովումը ժամանակավոր լուծում չէ՝ ուղղված սոցիալական դժգոհության կանխարգելմանը: Ուսուցիչները պետք է վստահություն ունենան իրենց աշխատանքի շարունակականության և աշխատանքային իրավունքների պաշտպանվածության վերաբերյալ:

18. Վերոնշյալ փոփոխությունները ենթադրում են նաև ուսուցչի թափուր տեղի համալրման մրցույթի կարգի վերանայում: Օրինակ, դպրոցի օպտիմալացման արդյունքում աշխատանքից զրկված ուսուցիչներին աշխատանքի ընդունվելիս կարող է առաջնահերթություն տրամադրվել՝ այլ, հավասար պայմանների դեպքում:

*(ՀՀ Կառավարություն և ՀՀ ԿԳՆ)*

# Վերջաբան

Այս ուսումնասիրության նպատակն էր՝ բացահայտել ՀՀ-ում 2017թ. օգոստոսից մեկնարկած՝ դպրոցների վերակազմակերպման (օպտիմալացման) հնարավոր հիմնախնդիրները և ներկայացնել այդ գործընթացի բարելավման առաջարկություններ:

Ինչպես պարզ դարձավ հետազոտության արդյունքում, Հայաստանում դպրոցների օպտիմալացման քննարկվող գործընթացը ՀՀ օրենսդրության և ՀՀ միջազգային պարտավորությունների ու ընդունված սկզբունքների խախտումների էական ռիսկեր է պարունակում: Հատկապես գյուղական դպրոցների վերակազմակերպման պարագայում լուրջ խոչընդոտներ են առաջանում՝ Կրթության մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի (Կրթության բնագավառում պետական քաղաքականության սկզբունքները) 2-րդ մասի դրույթների (կրթության մատչելիությունը, շարունակականությունը, հաջորդականությունը և համապատասխանությունը սովորողների զարգացման մակարդակին, առանձնահատկություններին ու պատրաստականության աստիճանին՝ պետական պարտադիր նվազագույնի ապահովմամբ) իրագործման առումով:

Կրթության հասանելիությունը և մատչելիությունը ՀՀ օրենսդրությամբ և միջազգային պայմանագրերով կրթության անհատական իրավունքի առաջնային բաղադրիչն է, որի ապահովումն էականորեն վտանգվում է օպտիմալացման գործընթացի արդյունքում (օրինակ՝ դպրոցները կամ դեպի դրանց ճանապարհները առավել վտանգի աղբյուրների գործողության տիրույթ տեղափոխելով, դպրոցները մեծ հեռավորության վրա տեղափոխելով և աշակերտների անվտանգ փոխադրում չապահովելով): Թեև կրթության իրավունքը բացարձակ իրավունք չէ, սակայն այն ուղղակիորեն կապված է երեխաների անվտանգության, կյանքի ու առողջության իրավունքի հետ: Այս իմաստով, պետությունը պարտավոր է ապահովել երեխայի լավագույն շահը, նրա անվտանգությունը, առողջությունը, որը բացարձակ իրավունք է:

Դպրոցների օպտիմալացումը նաև սոցիալական հետևանքներ է առաջ բերել. գործազրկություն՝ ուսուցիչների և դպրոցների այլ աշխատակիցների շրջանում, լրացուցիչ տրանսպորտային ծախսեր՝ այլ դպրոցներ տեղափոխված սովորողների և աշխատանքը շարունակող ուսուցիչների համար, կոնֆլիկտներ և լարվածություն՝ ընդունող դպրոցների մանկավարժական անձնակազմի և աշակերտների հետ հարաբերություններում, նոր միջավայրին սովորողների հարմարման դժվարություններ, և այլն:

Մյուս կողմից, դպրոցների վերակազմակերպման արդյունքում դեռ տեսանելի չեն այն արդյունքները, որ ակնկալվում էին կառավարության համապատասխան որոշումներում: Մասնավորապես՝ ուսումնական տարածքների օպտիմալ օգտագործման, միացվող դպրոցներում աշակերտների բնականոն ուսումնական գործընթացի առավել արդյունավետ կազմակերպման, կրթության որակի բարձրացման, կրթական ուսումնական հաստատությունները մանկավարժական ներուժով համալրման, պետական բյուջեի միջոցների արդյունավետ օգտագործման և այլ արդյունքների ապահովման առումով նկատելի ձեռքբերումներ չկան:

Կատարված բացահայտումներին համապատասխան՝ մշակվել են առաջարկություններ: Դրանցից առանցքայինն այն է, որ ՀՀ-ում դպրոցների վերակազմակերպման ներկայիս գործընթացն անհրաժեշտ է անհապաղ դադարեցնել և, նախքան որևէ ձևաչափով դրա շարունակությունը, իրականացնել արդյունքների և հետևանքների համակողմանի ուսումնասիրություն (հաշվի առնելով նաև այս հետազոտության արդյունքները):

Ակնհայտ է, որ դպրոցների օպտիմալացումն ինքնին, որպես տարանջատ մի գործընթաց՝ արդյունավետ մոտեցում չէ: Դպրոցի վերակազմակերպումը պետք է դիտարկվի որպես ածանցյալ խնդիր, բազմաթիվ քայլերից մեկը՝ կրթության որակի ապահովման ավելի ընդգրկուն վերջնարդյունքին հասնելու ճանապարհին: Դպրոցների վերակազմակերպման գործընթացը շարունակելու պարագայում անհրաժեշտ է հանրությանը ներկայացնել համապարփակ ծրագիր, որտեղ պատասխաններ կլինեն նաև այս հետազոտությամբ բարձրաձայնված խնդիրներին: Կարևոր է մշակել դպրոցների հնարավոր օպտիմալացման այնպիսի սկզբունքներ, որոնք կերաշխավորեն յուրաքանչյուր երեխայի կրթության իրավունքի անխոչընդոտ իրացումը, կրթության մատչելիության, հասանելիության և հավասարության ապահովումը:

Թե եզրահանգումների, թե մշակված առաջարկությունների հասցեատերերը կրթության ոլորտի բոլոր պատասխանատուներն են՝ ԿԳՆ, Երևանի քաղաքապետարան, մարզպետարաններ, այլ շահագրգիռ կողմեր: Հետազոտական թիմը լիահույս է, որ այս ուսումնասիրությունը հնարավորություն կտա խուսափելու նախկինում գործած սխալներից և չվնասելու հազարավոր ուսուցիչների ու աշակերտների:

# Հավելվածներ

## Հավելված 1. Օպտիմալացման ենթակա դպրոցների ցանկը

Ստորև ներկայացված են ՀՀ կառավարության՝ 2017թ. օգոստոսի 24-ի նիստի որոշումներով օպտիմալացման ենթակա դպրոցները։

1. Երևանի Շ. Ռուսթավելու անվան N23 հիմնական դպրոց
2. Երևանի քաղաքապետարանի Ա. Ս. Գրիբոյեդովի անվան N41 հիմնական դպրոց
3. Երևանի Գ. Ջոհրապի անվան N 43 ավագ դպրոց
4. Վ. Դավթյանի անվան N149 ավագ դպրոց
5. Երևանի N81 միջնակարգ դպրոց
6. Երևանի կույրերի երեկոյան միջնակարգ դպրոց
7. Փարաքարի հիմնական դպրոց
8. ՀՀ Տավուշի մարզի Բերդի վարժարան պետական հանրակրթական ուսումնական հաստատություն
9. ՀՀ Կոտայքի մարզի Փյունիկի միջնակարգ դպրոց
10. ՀՀ Կոտայքի մարզի Ջրվաշենի հիմնական դպրոց
11. Վայքի քաղաքային պետական հանրակրթական վարժարան
12. Եղեգնաձորի քաղաքային պետական հանրակրթական վարժարան
13. Գյումրու N 42 ավագ դպրոց
14. Գյումրու «Բալատոն» ավագ դպրոց
15. Արթիկի N 7 ավագ դպրոց

**Հավելված 2. Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչության դիրքորոշումը՝ դպրոցների օպտիմալացման վերաբերյալ**

Այս հետազոտության արդյունքում պատրաստված զեկույցի նախնական տարբերակը տրամադրվել է Երևանի քաղաքապետարանի հանրակրթության վարչությանը, որն էլ զեկույցում արծարծվող հարցերի վերաբերյալ ներկայացրել է իր դիրքորոշումը: Դրանում, մասնավորապես, նշված է.

Ընդհանուր առմամբ դեմ լինելով կրթական որևէ հաստատության օպտիմալացման գաղափարին, համոզված լինելով, որ մի օր կարիք ենք ունենալու դպրոցական նոր շենքերի՝ 2016-2017 ուս. տարում Երևանի քաղաքապետարանի 23, 41 և 81 դպրոցների վերակազմակերպումը անհրաժեշտություն էր.

- Տարիներ շարունակ մանկավարժական և աշակերտական փոքր համակազմերով աշխատող դպրոցներում ձևավորվում է տնավարություն, պակասում է տնօրինության, մանկավարժական կոլեկտիվի՝ միմյանց և աշակերտության նկատմամբ պահանջկոտությունը՝ աշխատանքային պարտականությունների ոլորտում: «Ճամպրուկային տրամադրությունը» դառնում է իշխող և խանգարում է նորարարական քայլեր ձեռնարկելուն, նորագույն տեխնոլոգիաների կիրառմամբ երեխաների մեջ կրթության նկատմամբ հետաքրքրություն զարգացնելուն:
- Աշակերտների փոքր թվով դասարաններում առավել արդյունավետ կարող է լինել ուսուցչի աշխատանքը որակյալ կրթության ապահովման ուղղությամբ: Սակայն 2016-2017 ուս. տարում Երևանի քաղաքապետարանի վերակազմակերպված դպրոցներից և ոչ մեկում նախորդ տարիներին կրթության բարձր որակ ապահովված չի եղել:
- Նման դպրոցներում թե՛ ուսուցիչների, թե՛ աշակերտների միջև բացակայել է մրցակցության հնարավորությունը, ինչն առաջացրել է անտարբերության մթնոլորտ:
- Երևանի վերակազմակերպված 23 և 41 դպրոցների նախագծային հզորությունը նախատեսված է մոտ 540 աշակերտի համար, իսկ 81 դպրոցինը՝ 280, այնինչ այդ դպրոցներում վերջին տարիներին սովորող աշակերտների թիվը չի գերազանցել 60-ը:
- Նշված դպրոցների շենքերի պահպանման ծախսերը չեն արդարացվում:

## Հավելված 3. Հարցաթերթ՝ վերակազմակերպված դպրոցի ուսուցիչների համար

### Դպրոցների վերակազմակերպումը Հայաստանում և դրա հետևանքները
*(Վերակազմակերպված դպրոցի ուսուցիչ)*

Հարցազրուցավար ____________________________________________
Հարցազրույց N ________
Հարցազրույցի օր/ամիս/տարի ______ / _______________ / _________
Օպտիմալացված դպրոց ____________________________________________________________________
Հարցվողի պաշտոնը և դասավանդած առարկան օպտիմալացված դպրոցում _____________________
_______________________________________________________________________________________________

*Հարգելի տիկին/պարոն* _________

*Իմ անունը* ____________ *է, ես օգնում եմ «Հանրային քաղաքականության ինստիտուտ» հետազոտական կենտրոնին իրականացնել դպրոցների վերակազմակերպման (կամ, ինչպես տարածված է ասել, օպտիմալացման) գործընթացի մոնիտորինգ: Ծրագրի շրջանակներում համագործակցում ենք Կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև՝ Երևանի քաղաքապետարանի հետ, և ունենք նրանց համաձայնությունը՝ այս հարցազրույցներն անցկացնելու հարցում:*

*Ձեր պատասխանները կօգնեն բացահայտելու այն հնարավոր խնդիրները կամ ծեռքբերումները, որոնք առաջացել են դպրոցների օպտիմալացման մասին Կառավարության որոշումների արդյունքում:*

*Հարցումն անանուն է, և տվյալներն օգտագործվելու են միայն ընդհանրացված կերպով:*

1. **Ինչպե՞ս կգնահատեք Ձեր (օպտիմալացված) դպրոցի շենքային պայմանները** *(կարդալ տարբերակները և նշել բոլոր հնարավոր պատասխանները):*
   1. Ունի հիմնանորոգման կարիք
   2. Ունի կոսմետիկ վերանորոգման կարիք
   3. Նորմալ վիճակում է, վերանորոգման կարիք չկա
   4. Վերանորոգվել կամ հիմնանորոգվել է վերջին 5 տարվա ընթացքում
   5. Շենքը կառուցվել է վերջին 10 տարվա ընթացքում
   6. Այլ
   ___________________________________________________________________________

2. **Ձեր կարծիքով, իրավահաջորդ ճանաչված դպրոցի շենքային պայմաններն ավելի լա՞վն են** *(կարդալ տարբերակները):*
   1. Միանշանակ այո
   2. Ավելի շուտ այո
   3. Ավելի շուտ ոչ
   4. Միանշանակ ոչ
   5. Չգիտեմ/դժվարանում եմ պատասխանել ***(տարբերակը չկարդալ)***

3. **Խնդրում ենք մեկնաբանել/հիմնավորել պատասխանը:**
_______________________________________________________________________________________________
_______________________________________________________________________________________________

4. **Խնդրում ենք նշել Ձեր նախկին աշխատանքային պայմանագրի (օպտիմալացված դպրոցում) ժամկետը** *(սկիզբ-ավարտ, ցանկալի է՝ ամսաթվերով):*
_______________________________________________________________________________________________

5. **Ի՞նչ դրույքով էիք աշխատում:**
   1. 1.5 դրույքից ավելի
   2. 1.5 դրույք
   3. 1.25 դրույք
   4. 1 դրույք
   5. 0.75 դրույք
   6. 0.5 դրույք
   7. 0.25 դրույք
   8. Այլ _______________________________________________________________________

6. **Ո՞վ և ե՞րբ է Ձեզ տեղեկացրել աշխատանքային պայմանագրի լուծման մասին:**
_______________________________________________________________________________________________
_______________________________________________________________________________________________

7. **Ի՞նչ եղանակով են Ձեզ տեղեկացրել աշխատանքային պայմանագրի լուծման մասին:**
   1. Գրավոր
   2. Բանավոր
   3. Այլ _______________________________________________________________________

8. **Ե՞րբ է լուծվել Ձեր աշխատանքային պայմանագիրը** *(ամսաթիվը):*
